

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«ԱԶԳ - ԲԱՆԱԿ»



**ՀՀ ՉՈՒՈՒՄ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՈՒՄ.
ՉԱՐԴԱՐԱՑԿԱԾ ՄԱՐԴԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**ОБЕСПЕЧЕНИЕ БЕЗОПАСНОСТИ ВОЕННОЙ СЛУЖБЫ
В ВС РА В МИРНОЕ ВРЕМЯ:
СИСТЕМА ПРЕДОТВРАЩЕНИЯ НЕОПРАВДАНЫХ ЧЕЛОВЕЧЕСКИХ ПОТЕРЬ**

**ENSURING THE SAFETY OF MILITARY SERVICE
IN THE RA ARMED FORCES IN PEACETIME:
THE SYSTEM FOR PREVENTING UNJUSTIFIABLE CASUALTIES**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը
ելույթ է ունենում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում.

Նյու Յորք, 2017 թ. սեպտեմբերի 19



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3 (93). 2017

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների
դոկտոր (Ռ-Դ), պրոֆեսոր,
Ռ-Դ Ռ-ազմական գիտությունների
ակադեմիայի ընտրված իսկական
անդամ, հակահարեկելության գծով
գիտնական-փորձագետ (ԱՄՆ)
(նախագահ)

Զիլինգարյան Գ. Ս.

(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Զ.

Ալթունյան Գ. Ռ.

Այդինյան Ռ. Ա.

Այվազյան Լ. Գ.

Ավետիսյան Վ. Ն.

Գասպարյան Օ. Վ.

Գավթյան Ա. Մ.

Զաքարյան Ա. Բ.

Խատառյան Տ. Վ.

Հակոբյան Մ. Հ.

Հովհաննիսյան Գ. Մ.

Ղահրամանյան Ա. Բ.

Մարգարյան Վ. Հ.

Մարտիկյան Ա. Մ.

Մարտիրոսով Լ. Ա.

Յալանուզյան Ա. Կ.

(գլխ. խմբագրի տեղակալ)

Յուլյան Ն. Ի.

Շահնագարյան Թ. Ն.

Շիրինյան Մ. Ա.

Պողոսյան Բ. Պ.

Սիմոնյան Ս. Վ.

Վարդանյան Ա. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Փախչանյան Գ. Բ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՋՈՒՌՈՒՄ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ.

ԶԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՄԱՐԴԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հ. Գ. Կարապետյան, Ս. Ա. Գոյուղյան, Ձինվորական ծառայության անվտանգության ապահովման ժամանակակից համակարգը և դրա կատարելագործման ուղիները 9

Վ. Հ. Մարգարյան, Ա. Կ. Յալանուզյան, «Ազգ-քանակ» հայեցակարգի ներդրման համատեքստում խաղաղ պայմաններում զինծառայողների առողջության պաշտպանության և չարդարացված մարդկային կորուստների կանխման համակարգի կատարելագործման ռազմաինժեներա-հոգեբանական առումները 23

Հ. Պ. Մնացականյան, Բարոյահոգեբանական ապահովումը՝ որպես զինվորական ծառայության անվտանգության ապահովման ուղղություն 32

Ս. Գ. Գալստյան, Գերբարձր հաճախականությամբ էլեկտրամագնիսական դաշտի հետ մասնագիտական շփում ունեցող անձանց անվտանգության բուժապահովումը՝ որպես բարձր մարտունակության պահպանման գործոն 39

Ա. Մ. Պեպրոսյան, Ձինվորական ծառայության անվտանգության ապահովման միջազգային փորձից 51

Ա. Ռ. Բասենցյան, Վ. Բ. Հովհաննիսյան, Ա. Ռ. Գասպարյան, Ա. Ա. Սիրեկանյան, Մարքին և կրակելու համար պիտանի վիճակում հրազենի պահպանումը՝ որպես զինծառայության անվտանգության ապահովման կարևոր միջոց 63

ՊԱՏԵՐԱԶՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մովսես աբեղա Մարգարյան, Ինքնապաշտպանությունը՝ որպես արդարաբացի պատերազմի հիմք 71

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ. Գրիգորյան, Շեղումակալուն ներդրումային որոշումների մոդելավորումը կիրառական-գոյության ոլորտում 83

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Է. Հարությունյան, ՀՀ տնտեսությունում ռազմասարքյունաբերության զարգացման էքստենզիաները և դրանց ինտենզիացման հեռանկարները 91

Ա. Գ. Դավթյան, Նավթի ցածր գների պայմաններում Ադրբեջանի տնտեսական վիճակի և ռազմական արդյունաբերության հիմնախնդիրների գնահատում 101

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հ. Մ. Գրիգորյան, Մարդկության դեմ ուղղված հանցագործության, ցեղասպանության և քաղաքացիական բնակչության ահաբեկման հանցակազմերից պատերազմական հանցագործությունների սահմանազատման պրոբլեմները 112

ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Է. Գ. Մինասյան, Խանասորի արշավանքին մասնակից հայ հերոսուհիները 120

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 127

ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Ռ. Վ. Ադուլունջյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Լ. Ս. Արզունանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բադրասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,

Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Հ. Յ. Սալաթյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Ա. Հ. Միմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 3 (93). 2017

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котангжян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян А. Г.*, *Айдинян Р. А.*, *Акопян М. Г.*, *Алексян А. Дж.*, *Алтунян Г. Р.*, *Варданян А. Г.*, *Гаспарян О. В.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Закарян А. Б.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартикян А. М.*, *Мартirosов А. А.*, *Ованнисян Г. М.*, *Пахчаниян Д. Б.*, *Погосян Б. П.*, *Симомян С. В.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Хачатрян Т. В.*, *Шахназарян Т. Н.*, *Ширина М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

ОБЕСПЕЧЕНИЕ БЕЗОПАСНОСТИ ВОЕННОЙ СЛУЖБЫ В ВС РА В МИРНОЕ ВРЕМЯ: СИСТЕМА ПРЕДОТВРАЩЕНИЯ НЕОПРАВДАНЫХ ЧЕЛОВЕЧЕСКИХ ПОТЕРЬ

- Г. Г. Карапетян, С. А. Гюлумян.* Современная система обеспечения безопасности военной службы и пути ее усовершенствования 9 (21)*
- В. Г. Маргарян, А. К. Яланузян.* Военные инженерно-психологические аспекты совершенствования системы охраны здоровья военнослужащих и предотвращения неоправданных человеческих потерь в мирное время в контексте внедрения концепции «Нация – армия» . . . 23 (30)
- А. П. Мнацаканян.* Морально-психологическое обеспечение как направление обеспечения безопасности военной службы 32 (37)
- С. Г. Галстян.* Медицинское обеспечение безопасности лиц, имеющих профессиональные контакты с электромагнитным полем сверхвысокой частоты, как фактор сохранения высокой боеспособности . . 39 (50)
- А. М. Петросян.* Международный опыт обеспечения безопасности военной службы 51 (61)
- А. Р. Басенцян, В. И. Оганесян, А. Р. Гаспарян, А. А. Сиреканян.* Сохранение огнестрельного оружия в исправном и пригодном для производства выстрелов состоянии как важное средство обеспечения безопасности военной службы 63 (69)

ПОЛЕМОЛОГИЯ

- Иеромонах Мовсес Саргсян.* Самооборона как основа справедливой войны 71 (82)

КИБЕРБЕЗОПАСНОСТЬ

- А. Г. Григорян.* Моделирование робастных инвестиционных решений в сфере кибербезопасности 83 (90)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ОБОРОННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ

- Г. Э. Арутюнян.* Экстерналии развития военной промышленности и перспективы их интернализации в Армении 91 (109)
- А. Г. Давтян.* Оценка экономического состояния Азербайджана и проблем военной промышленности в условиях низких цен на нефть 101 (110)

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

- Г. М. Григорян.* Проблемы отграничения военных преступлений от смежных составов преступлений против человечности, геноцида и терроризирования гражданского населения 112 (119)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

- Э. Г. Минасян.* Героини-армянки – участницы Ханасорского похода 120 (126)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

- Д. С. Чилингарян и др.* Словарь номера 127 (128)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА;
Л. С. Арзуманян, доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА;
К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;
А. А. Манташян, академик НАН РА;
М. М. Маргарян, доктор политических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджаниян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
Р. А. Сафрастян, академик НАН РА,
О. Я. Саядян, доктор географических наук, профессор,
А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор

«**HAIKAKAN BANAK**» («**ARMENIAN ARMY**»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 3 (93). 2017

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman),
Chilingaryan D. S. (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Altunyan G. R.*, *Avetisyan V. N.*,
Ayvazyan L. G., *Davtyan A. M.*, *Gasparyan O. V.*, *Hakobyan M. H.*, *Hovhannisyan G. M.*,
Idinyan R. A., *Kaghramanyan A. B.*, *Khachatryan T. V.*, *Margaryan V. H.*, *Martikyan A. M.*,
Martirossov L. A., *Pakhchanyan D. B.*, *Poghosyan B. P.*, *Shahnazaryan T. N.*,
Shirinyan M. A., *Simonyan S. V.*, *Ter-Grigoryants N. G.*, *Vardanyan A. G.*,
Yalanuzyan A. K. (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*, *Zakaryan A. B.*

CONTENTS

ENSURING THE SAFETY OF MILITARY SERVICE IN THE RA ARMED FORCES IN PEACETIME:

THE SYSTEM FOR PREVENTING UNJUSTIFIABLE CASUALTIES

- H. G. Karapetyan, S. A. Gyulumyan.* The advanced system of ensuring military service safety and the ways of improving it 9 (22)*
- V. H. Margaryan, A. K. Yalanuzyan.* The military engineering psychological aspects of improving the system of the servicemen's health protection and the unjustifiable casualties' prevention in peacetime within the context of "Nation–Army" concept implementation 23 (31)
- H. P. Mnatsakanyan.* Moral and psychological support as a direction for ensuring military service safety 32 (38)
- S. G. Galstyan.* The medical safety of persons professionally contacting with superhigh-frequency (SHF) electromagnetic field as a factor of retaining high combat effectiveness 39 (50)
- A. M. Petrosyan.* International experience in ensuring military service safety 51 (62)
- A. R. Basentsyan, V. I. Hovhannisyan, A. R. Gasparyan, A. A. Sirekanyan.* Preservation of firearms in a state good and suitable for shooting as an important tool for ensuring military service safety 63 (70)

WAR STUDIES

- Rev. Fr. Movses Sargsyan.* Self-defense as a basis for the just war 71 (82)

CYBERSECURITY

- A. H. Grigoryan.* Modelling of robust investment decisions in the sphere of cybersecurity 83 (90)

* Numbers in brackets mean the page of the text in English.

DEFENSE INDUSTRY

- G. E. Harutyunyan.* The externalities of the defense industry development and the prospects of their internalization in Armenia 91 (110)
- A. G. Davtyan.* Evaluation of Azerbaijan's economic situation and the defense industry issues under low prices for oil 101 (111)

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

- H. M. Grigoryan.* The problems of the discrimination between war crimes and adjacent corpus delicti against humanity, genocide, and terrorization of the civilian population 112 (119)

MILITARY HISTORY

- E. G. Minasyan.* Armenian heroines–participants of the Khanasor Campaign 120 (126)

MILITARY TERMINOLOGY

- D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary 127 (129)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian,* Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
L. S. Arzumanyan, Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyunian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA;
Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;
A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

ՀՀ ԶՈՒՆԻՄ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ.

ՉԱՐԴԱՐԱՑԿԱԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ
ԿԱՆԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ОБЕСПЕЧЕНИЕ БЕЗОПАСНОСТИ
ВОЕННОЙ СЛУЖБЫ В ВС РА В МИРНОЕ ВРЕМЯ:
СИСТЕМА ПРЕДОТВРАЩЕНИЯ НЕОПРАВДАНЫХ
ЧЕЛОВЕЧЕСКИХ ПОТЕРЬ

ENSURING THE SAFETY OF MILITARY SERVICE
IN THE RA ARMED FORCES IN PEACETIME:
THE SYSTEM FOR PREVENTING UNJUSTIFIABLE
CASUALTIES

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

*Հ. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՋՈՒ-ի ԳՇ Ջորքերի ծառայության
և զինվորական ծառայության անվտանգության ապահովման վարչության
պետ, Ս. Ա. ԳՅՈՒՆՈՒՄՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՋՈՒ-ի ԳՇ Ջորքերի
ծառայության և զինվորական ծառայության անվտանգության ապահովման
վարչության ներքին ծառայության բաժնի ավագ սպա*



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է»¹: Հետևաբար՝ մարդու կյանքի ու գործունեության համար առավելագույնս անվտանգ պայմանների ապահովումը գերխնդիր է: Այն

հատկապես կարևոր է զինված ուժերում, որտեղ մարդիկ հաճախ գործ են ունենում զանազան տեսակի զենքերի ու մարտապաշարի հետ: Բացի այդ, հույժ կարևոր է զինված ուժերում նվազագույնի հասցնել ոչ մարտական կորուստների թիվը. դրա հետ են կապված անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի վատթարացման կանխումը և ՋՈՒ-ի գործունեության արդյունավետության ապահովումը: Ըստ այդմ՝ զինվորական ծառայության անվտանգության ապահովման նկատմամբ մոտեցումների համակարգի հիմքում դրված են մարդու կյանքի՝ որպես բարձրագույն արժեքի, ձեռնարկվող միջոցների համակարգայնության, հետևողականության ու նպատակաուղղվածության, զինվորական կառավարման մարմինների և հրամկազմի ու պետերի միջև պարտականությունների ու պատասխանատվության ոլորտների հստակ սահմանազատման գաղափարները²:

Տվյալ խնդիրը պահանջում է համալիր լուծում, քանի որ զինվորական ծառայությունը կապված է մեծ թվով գործոնների (ռիսկերի^{*}) հետ, որոնց հիմնական աղբյուրներն են՝ շահագործման առումով վտանգավոր մեծ թվով զենքերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի առկայությունը, մարտական

¹ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ», 06.12.2015, հոդ. 3, կետ 1 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>):

² Տես «Управление подразделениями в мирное время». Курс лекций, г. 4. Учебный военный центр, Нижегородский государственный университет им. Н. И. Лобачевского, 2014 (<http://www.ivo.unn.ru/upmv/g4.htm>):

^{*} Ռիսկը որոշակի ծանրությամբ ու բովանդակությամբ վնաս կրելու հնարավոր վտանգի հատկանիշ է՝ անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության փաստացի արդյունքների շեղում անվտանգության նախատեսված չափանիշներից (տես Ղ. Ս. Զիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 526):

հերթապահության, պահակային և ներքին ծառայությունների առանձնահատուկ բարդությունը, ինչը պայմանավորված է իրավիճակի արագ փոփոխություններին համարժեքորեն (երբեմն՝ զենքի կիրառմամբ) արձագանքելու անհրաժեշտությամբ, պատերազմական պայմանների նմանարկմամբ զորավարությունների անցկացումը, գործնականում յուրաքանչյուր զինծառայողի զինվածությունն ու զենքով առաջադրանքների պարբերական կատարումը, զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված ֆիզիկական ու հոգեբանական ծանրաբեռնվածությունները, ընտանիքից ու մտերիմներից, շրջապատից կտրվածությունը, հասարակության բոլոր շերտերից զորակոչված և միայն տղամարդկանցից բաղկացած զինվորական կոլեկտիվներում քրեածին հակումներով անհատների ի հայտ գալու մեծ հավանականությունը³:

Ասվածից բխում է, որ զինվորական ծառայության անվտանգության ապահովումը (ՁԾԱԱ), այսինքն՝ նշված ռիսկերի չեզոքացումը (նվազարկումը), բարդ ռազմաքաղաքական, սոցիալական ու ռազմական պրոբլեմ է⁴, որը պետք է լուծվի համապետական ջանքերով՝ ռիսկերի կառավարման գիտական մեթոդաբանության կիրառմամբ⁵: Ընդամին այդ մեթոդաբանությունը կիրառելի է զինծառայողների անվտանգության ապահովման համար՝

- խաղաղ պայմաններում (առօրյա գործունեության, բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ժամանակ, խաղաղարարական գործունեությանը մասնակցության, արտակարգ դրության ռեժիմի հաստատման ու պահպանման ընթացքում),
- ռազմական դրության հաստատման և պահպանման ընթացքում,
- պատերազմական պայմաններում⁶:

ՁԾԱԱ-ն կապված է զինծառայողների կենսագործունեության որոշակի կողմերի հետ և դրանց համապատասխան ունի հետևյալ ուղղությունները՝ իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպատեխնիկական, բարոյահոգեբանական, բուժական (բժշկական), հիդրոոդերևութաբանական, բնապահպանական անվտանգության ապահովում⁷:

³ Տես *В. Л. Алешин*. Обеспечение безопасности военной службы – ответственная задача военной реформы. «Военная мысль» («ВМ»), 1998, № 1, նաև՝ *Վ. Հ. Մարգարյան*, Մարտական գործունեության հոգեբանություն: Ե., 2009, էջ 18–19, *Զ. Ղ. Ասատրյան*, Զինվորական կարգապահության ամրապնդման հիմնախնդիրները (ղասախոսությունների ժողովածու): Ե., 2013, էջ 6:

⁴ Տես *Վ. Լ. Այրոշին*, Նշ. աշխ.:

⁵ Տես *В. А. Муравьев, Р. В. Маркитан, С. М. Григорьев*. Некоторые проблемы обеспечения безопасности военной службы в ВС РФ. «ВМ», 2005, № 12; “DoD Safety and Occupational Health (SOH) Program”. Department of Defense Instruction Number 6055.01, 14 October 2014, PP. 20–25:

⁶ Տես «Управление подразделениями в мирное время»:

⁷ Տես նույն տեղում:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ռիսկերի կառավարումը համադրական գիտակարգ է և, միևնույն ժամանակ, մեթոդաբանություն, որն ուսումնասիրում է ֆիզիկական ու նյութական վնաս պատճառող պատահական իրադարձությունների ազդեցությունը մարդու գործունեության տարբեր ոլորտների վրա⁸: Այն բուռն կերպով զարգացել է Արևմուտքում (առաջին հերթին ԱՄՆ-ում) 20-րդ դարի երկրորդ կեսին՝ հատկապես շուկայական տնտեսության ոլորտում մասնավոր ընկերությունների ռիսկերի առնչությամբ⁹:

Ռուսաստանում ռիսկերի տեսությունն սկսել է զարգանալ անցյալ դարի վերջում՝ կապված շուկայական տնտեսության զարգացման խնդիրների հետ¹⁰: Այդ ժամանակ էլ այն կիրառվել է զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգի ստեղծման համար¹¹: ԶԾԱԱ-ի վերաբերյալ Ռուսաստանի ԶՈՒ-ում կատարված մշակումներն էապես ազդել են ՀՀ ԶՈՒ-ում ԶԾԱԱ-ի համակարգի ստեղծման վրա:

Ռիսկի համընդհանուր սահմանում գոյություն չունի. մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտում այն սահմանվում է յուրահատուկ կերպով՝ այնպես, որ հնարավոր լինի լուծել տվյալ գործնական խնդիրը¹²:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ *ռիսկը* մի ենթադրական իրադարձություն է, որն ունակ է իրականանալու դեպքում էապես ազդելու տվյալ ոլորտում գործերի ընթացքի (մասնավորապես՝ մարդու գործունեության) վրա: Ռիսկեր գոյություն ունեն բոլոր ոլորտներում, բայց միշտ չէ, որ դրանք իրականանում են: Իրականացած ռիսկը վերածվում է *պրոբլեմի*: Ռիսկի *ազդեցությունը*, կամ *հետևանքը*, իրականացած ռիսկի ազդեցությունն է տվյալ ոլորտում գործունեության պլանի որոշ բաղադրիչների կատարման հնարավորության վրա: *Ռիսկի հավանականությունը* պրոբլեմի նրա վերածվելու հավանականությունն* է¹³:

⁸ Տես *Н. В. Кузьминова, Н. В. Моргунова, Н. М. Филимонова. Курс лекций по дисциплине «Управление рисками». Владимир, 2007* (<http://e.lib.vlsu.ru/bitstream/123456789/1200/3/00467.pdf>):

⁹ Տես նույն տեղում, նաև՝ *Neil Crockford. An Introduction to Risk Management. Ed. 2. Cambridge, 1986; Mark S. Dorfman. Introduction to Risk Management and Insurance. Ed. 9. Prentice Hall, 2007*:

¹⁰ Տես *Ն. Վ. Чирқдһһһվա և ուրիշներ, Նշ. աշխ.:*

¹¹ Տես *В. Л. Захаров, С. М. Григорьев, В. В. Кирилин. У истоков работ по обеспечению безопасности военной службы. «ВМ», 2005, № 12*:

¹² Տես *И. А. Руденков. Управление риском. Учебно-методическое пособие* (<http://economy.bs.u.by/wp-content/uploads/2014/03/389383.pdf>):

* Այն իրադարձությունը, որն անխուսափելիորեն պետք է տեղի ունենա, ռիսկ չէ, և դրա հետ կապված գործողությունները ոչ թե ռիսկերի կառավարման, այլ պլանավորման և կառավարման ոլորտից են:

¹³ Տես *А. Закис. Как внедрить управление рисками. «Intelligent Enterprise», 2003, N 13–14* (<http://citforum.ru/SE/project/risk/>):

Ռիսկերի կառավարման գործընթացը սովորաբար տրոհվում է փուլերի, որոնցից յուրաքանչյուրում լուծվում է կոնկրետ խնդիր: Որպես կանոն, այդ փուլերն են¹⁴.

ա) ռիսկերի կառավարման պլանավորում: Պլանում պետք է արտացոլվեն ռիսկերի կառավարման նկատմամբ ընդհանուր մոտեցումները և կատարման ենթակա հիմնական գործողությունները: Այս փուլում կարևոր են համարվում ռիսկերի կառավարման համար պատասխանատու անձի նշանակումը, ռիսկերի կառավարման ռազմավարության ու մեթոդների* որոշումը և ռիսկերի կառավարման բյուջեի սահմանումը,

բ) ռիսկերի հայտնաբերում: Պետք է սահմանել այն իրավիճակները կամ իրադարձությունները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ տվյալ գործունեության վրա: Ռիսկերի հայտնաբերման հիմնական մեթոդներն են *պատմական վերլուծությունը, վերլուծական մեթոդը, փորձագիտական խորհրդակցությունը, անհատական քննազրույցը,*

գ) ռիսկերի գերակայությունների որոշում (գնահատում) և վերլուծություն: Հայտնաբերված ռիսկը պետք է վերլուծել խնդիրների կատարման, ինչպես նաև ծախսերի և այլ գործոնների վրա նրա ազդեցությունը որոշելու համար: Անհրաժեշտ է գնահատել նաև յուրաքանչյուր ռիսկի հավանականությունը,

դ) պատասխան գործողությունների պլանավորում: Յուրաքանչյուր ռիսկի համար որոշվում են այն քայլերը, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ռիսկի հավանականությունը և ազդեցությունը նվազեցնելու համար,

ե) ռիսկերի մշտագնում և կատարվող քայլերի վերահսկում: Շատ կարևոր է պատասխան գործողությունների կատարման անընդհատ վերահսկումը: Ընդամին կատարված գործողությունների փուլաշրջանը պետք է անընդհատ կրկնվի, քանի որ ռիսկերի կառավարման արդյունավետությունն ապահովվում է անընդհատ գործողություններով:

¹⁴ Տես, օրինակ, նույն տեղում, նաև՝ *A. B. Александров. В чем цель и смысл управления рисками? «Чистые помещения и технологические среды», 2014, N 4 (<https://gmpnews.ru/2014/12/upravlenie-riskami/>); M. Horton. What are some examples of risk management techniques?, 7 May 2015 (<http://www.investopedia.com/ask/answers/050715/what-are-some-examples-risk-management-techniques.asp>); B. Schwulst. Risk Management Techniques and Strategies for Risk Managers, 30 April 2014 (<https://blog.udemy.com/risk-management-techniques/>):*

* Ռիսկերի դեմ պայքարում առավել հաճախ օգտագործվում են հետևյալ ռազմավարությունները. 1) *ռիսկից խուսափում*, երբ գործունեությունն այնպես է վերակազմակերպվում, որ տվյալ իրադարձությունն անկարող լինի ազդել դրա վրա, 2) *ռիսկի վերահասցեավորում*, օրինակ՝ սեփականատերը, ապահովագրելով իր ավտոմեքենան, վթարի ռիսկը վերահասցեագրում է ապահովագրական ընկերությանը, 3) *ռիսկի ընդունում*, երբ ռիսկի դեմ ըստ էության ոչինչ չի ձեռնարկվում (տվյալ ռազմավարությունը սովորաբար ընտրվում է, երբ ռիսկի հավանականությունը փոքր է, իսկ կանխարգելիչ միջոցառումների արժեքը դրամային արտահայտությամբ ավելի մեծ է, քան ռիսկի հետևանքը՝ վնասը), 4) *ռիսկի մեղմում*, երբ սահմանափակվում է ռիսկի ազդեցությունը (ամենահաճախ կիրառվող ռազմավարությունն է), 5) *ռիսկի շահագործում*, երբ փորձ է արվում ռիսկից քաղելու առավելագույն օգուտ (տես, օրինակ, “5 Ways To Manage Risk”, 07.04.2014 (<http://www.dbpmanagement.com/15/5-ways-to-manage-risk/>)):

ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Միջազգային փորձի վերլուծության արդյունքների հաշվառմամբ զինվորական ծառայության անվտանգության ապահովումը ներկայացնենք ըստ ռիսկերի կառավարման բերված փուլերի:

1) Ձինվորական ծառայության ռիսկերի կառավարման պլանավորում: Ձորամիավորումում (զորամասում) մշակվում է ՋԾԱԱ-ի տարեկան համալիր պլան, որում ընդգրկվում են դրա հիմնական միջոցառումները¹⁵:

Քանի որ զինվորական ծառայության հիմնական ռիսկերը կապված են մարդու առողջության, ինչպես նաև մարտական առաջադրանքի կատարումը վտանգող նյութական կորուստների հետ, ապա զինվորական ծառայության անվտանգությունն ապահովելիս կիրառվում են հիմնականում ռիսկից խուսափելու և այն մեղմելու ռազմավարությունները:

Այսպես. ՀՀ ՁՈՒ-ի ներքին ծառայության կանոնագրքում որպես ՋԾԱԱ-ի ռիսկերի դեմ պայքարի ռազմավարություն սահմանված է ռիսկից խուսափումը. պաշտոնատար անձինք պարտավոր են «անվտանգության պահանջների խախտում բացահայտելիս կամ վթարային իրավիճակ ստեղծվելու դեպքում անհապաղ դադարեցնել համապատասխան միջոցառման կատարումը»¹⁶:

Ներքին ծառայության կանոնագրքով սահմանվում են նաև ռիսկերի կառավարման համար պատասխանատու անձինք՝ ըստ զինծառայողների կենսագործունեության ոլորտների. «Ձինվորական ծառայության անվտանգության ապահովման նպատակով զորամասի հրամանատարի հրամանով զորամասում ստեղծվում է զինվորական ծառայության անվտանգության ապահովման մշտական հանձնաժողով՝ հրամանատարի տեղակալներից մեկի գլխավորությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են զորամասի շտաբի պետը, հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների, սպառազինության, թիկունքի գծով տեղակալները, զորատեսակների ու ծառայությունների պետերը»¹⁷:

2) Ձինվորական ծառայության ռիսկերի հայտնաբերում: ՌԴ ՁՈՒ-ում 1990-ականների վերջին – 2000-ականների սկզբին կատարված համալիր գիտահետազոտական աշխատանքների արդյունքներով¹⁸ ներկայիս փուլում զին-

¹⁵ Տես «Приложение к приказу Министра обороны РФ от 22 июля 2015 г. N 444 «Об утверждении Руководства по обеспечению безопасности военной службы в Вооруженных Силах Российской Федерации», пп. 10–13 (<http://base.garant.ru/71207130/#friends>):

¹⁶ Տես ««Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2011 թ. ապրիլի 14-ի հմ. ՀՕ-124 օրենքը, հոդ. 453, կետ 5 (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4186&lang=arm>):

¹⁷ Տես նույն տեղում, հոդ. 442:

¹⁸ Տես Կ. Լ. Ջախարով և ուրիշներ, Նշ. աշխ.:

վորական ծառայության համար սահմանվել են հետևյալ հիմնական ռիսկերը՝ զորակոչային տարիքի քաղաքացիական անձանց առողջական վիճակի էական վատթարացում, հասարակական հարաբերությունների հնարավոր քրեականացում, զորամասեր և զինվորական ավաններ փողոցային բարքերի, հանցավոր տարրերի ներթափանցման և արմատավորման փորձեր, զորակոչային տարիքի քաղաքացիների կրթական, բարոյահոգեբանական և ֆիզիկական պատրաստականության մակարդակի անկում, նրանց շարքերում քրեական պատասխանատվության ենթարկվածների (դատապարտվածների) թվի աճում, զգալի թվով զինծառայողների հոգեբանական և կոլեկտիվների բարոյահոգեբանական վիճակի վատթարացում, զգալի թվով զինծառայողների ցածր մասնագիտական մակարդակ (հմտությունների պակաս), անվտանգության կանոնների թերիմացություն, ինչպես նաև անվտանգության պահանջների կատարման նկատմամբ անձնակազմի անդամների ցածր մակարդակի անձնական պատասխանատվություն, կայազորներում, զինվորական ավաններում և զորամասերում ցածր մակարդակի զինվորական կարգապահություն ու զորքերի ծառայության կազմակերպում, սպառազինության և ռազմական տեխնիկայի ֆիզիկական մաշվածություն, համալրող նյութերի և պահեստամասերի պակաս, շենք-շինությունների և հատուկ կառույցների մաշվածություն, զինապահեստների, հրթիռների և ռազմամթերքի պահեստների ու պահման վայրերի, ինչպես նաև դյուրավառ հեղուկների պահեստների ծանրաբեռնվածություն և պահպանման պայմանների խախտումներ, հրդեհաշիջման տեխնիկական միջոցների, անհատական պաշտպանական և փրկարարական միջոցների գնման (արդիականացման) տեմպերի անբավարարություն, հրադադարի պայմանների հաճախակի խախտումներ, առաջագծում և սահմանամերձ շրջաններում տեղաբաշխված զինվորական ավաններում ու օբյեկտներում հակառակորդի դիվերսիոն-հետախուզական գործողությունների վտանգ¹⁹:

Բացի այդ, հրամանատարները (պետերը) ՋՇԱԱ-ի աշխատանքները ղեկավարելիս հավաքում ու հաշվառում են զինվորական ծառայության անվտանգության վիճակի մասին տեղեկությունները և ժամանակին հայտնաբերում անվտանգությանն ուղղված սպառնալիքները²⁰:

3) Ջինվորական ծառայության ռիսկերի գերակայությունների որոշում (գնահատում) և վերլուծություն: Ջինվորական ծառայության անվտանգության աստիճանի քանակական գնահատման նկատմամբ կա երկու մոտեցում: Ըստ առաջինի՝ գնահատվում է վտանգի (ռիսկի) աստիճանը, ըստ երկրորդի՝ անվտանգության (ռիսկ չլինելու) աստիճանը: Առաջին մոտեցումը կիրառվում է, օրինակ, ԱՄՆ-ի ՋՈՒ-ում, երկրորդը՝ Ռուսաստանի:

¹⁹ Стu «Концепция безопасности военной службы в ВС РФ», директива Министра обороны Российской Федерации от 12 июля 1997 г. №-Д-10, гл. 2 (<http://military.samgtu.ru/zakony/1/1-15.htm>):

²⁰ Стu նույն տեղում, հոդ. 16, ենթակետ 1:

Առաջին մոտեցման էությունը կարելի է ներկայացնել հետևյալ երեք աղյուսակների միջոցով²¹: Նախ, ըստ հետևանքների մեծության՝ վտանգների և ըստ իրականացման հավանականության՝ պատահարների կազմվում են դասակարգիչ աղյուսակներ, այնուհետև դրանց միավորմամբ ձևավորվում է ռիսկի գնահատման (կողավորման) մատրից:

Աղյուսակ 1

ՎՏԱՆԳՆԵՐԻ (ՌԻՍԿԵՐԻ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ (ՀԵՏԵՎԱՆՔԻ) ՄԵԾՈՒԹՅԱՆ

Վտանգի (ռիսկի) աստիճան	Վտանգի (ռիսկի) դաս	Սահմանում (հետևանք)
I	Աղետալի	Մահ կամ աշխատունակության մշտական լրիվ կորուստ, համակարգային կորուստ, մեծ նյութական վնաս
II	Կրիտիկական	Մշտական մասնակի կամ ավելի քան 3 ամսով հաշմանդամություն, աշխատունակության կորուստ, մեծ համակարգային վնաս, զգալի նյութական վնաս
III	Թույլատրելի	Փոքր վնասվածք, աշխատանքային օրվա կորստի առաջացում, հատուցելի վնասվածք կամ հիվանդություն, համակարգային և/կամ նյութական փոքր վնաս
IV	Աննշան	Առաջին բուժօգնություն կամ փոքրածավալ օժանդակ բուժում, փոքր համակարգային կորուստ

Աղյուսակ 2

ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ (ՌԻՍԿԵՐԻ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Մակարդակ	Պատահարի նկարագրություն	Կոնկրետ օբյեկտի առնչությամբ	Սպասվող հաճախականությունը
A	Մշտական	Հավանական է, որ հաճախ է պատահելու	Մշտապես պատահում է
B	Հավանական	Կպատահի մի քանի անգամ	Կպատահի հաճախ
C	Պատահական	Հավանական է, որ կպատահի երբեմն	Կպատահի մի քանի անգամ
D	Հազվադեպ	Հավանական չէ, բայց հնարավոր է, որ կպատահի	Հավանական չէ, բայց խելամիտ է սպասել, որ կպատահի
E	Անհավանական	Անհավանական է՝ կարելի է ենթադրել, որ չի պատահի	Անհավանական է, բայց հնարավոր

²¹ Տես “The Army Safety Program” (Army Regulation 385–10), 23 May 1988, P. 7 (<http://usahec.contentdm.oclc.org/cdm/ref/collection/p16635coll11/id/1520>):

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԿՈՂԱԿՈՐՄԱՆ) ՄԱՏՐԻՑ

		Պատահարների (ռիսկերի իրականացման) հավանականության մակարդակ				
		A	B	C	D	E
Վտանգների (ռիսկերի) տեսակ	I	1	1	2	3	5
	II	1	2	3	4	5
	III	2	3	4	5	5
	IV	3	4	5	5	5

3-րդ աղյուսակում տվյալ տեսակի ռիսկին և դրա իրագործման հավանականությանը համապատասխանում է 1-ից 5-ը միջակայքում գտնվող թիվ, ընդսմին 1-ով գնահատվում է ամենածանր հետևանքով և ամենամեծ հավանականությամբ ռիսկը, իսկ 5-ով՝ աննշան հետևանքով և անհավանական ռիսկը*։ Այսինքն՝ որքան փոքր թիվ է ռիսկի կոդը, այնքան ավելի գերակա խնդիր է նրա դեմ պայքարը։ Այսպես է որոշվում, թե ինչ հերթականությամբ պետք է պայքարել ռիսկերի դեմ։

Երկրորդ մոտեցման դեպքում որոշվում է զինվորական ծառայության անվտանգության մակարդակը, որը բնութագրվում է որոշակի թվով զինծառայողներին «բաժին հասնող» զինվորական ծառայության անվտանգության աստիճանով²²։ Ասվածը հաստատվում է 4-րդ աղյուսակով։

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ

Զինվորական ծառայության անվտանգության մակարդակ (պայմանական անվանում)	Զորամասում զինծառայողների մահվան ելքով դեպքերի հաճախականություն	Զորամասում այն վնասվածքների ու հիվանդությունների թիվը, որոնք հանգեցնում են աշխատունակության կորստի (անձնակազմի ընդհանուր թվից)	Զորամասում այն վնասվածքների ու հիվանդությունների ընդհանուր թիվը, որոնք չեն հանգեցնում աշխատունակության կորստի (անձնակազմի ընդհանուր թվից)
Շատ բարձր	–	–	Ոչ ավելի, քան 20 %
Բարձր	–	Ոչ ավելի, քան 5 %	Ոչ ավելի, քան 35 %
Միջին	–	Ոչ ավելի, քան 30 %	Ոչ ավելի, քան 30 %
Ցածր	Առանձին դեպքեր	Ոչ ավելի, քան 30 %	Ոչ ավելի, քան 50 %
Ծայրահեղ ցածր	Պարբերական	Ավելի, քան 50 %	–

* Սովորաբար 5 միավոր գնահատված ռիսկերն անտեսվում են, այսինքն՝ համարվում են ընդունելի։

²² Տես «Задачи личного состава по обеспечению безопасных условий военной службы в ходе месячника безопасности. Причины и предпосылки гибели и травматизма», 08.11.2014 (https://shtab.su/konspekt/informirovanie/zadachi_lichnogo_sostava_po_obespecheniu_bezopasnuy_usloviy_voennoy_sluzhbu_v_hode_mesyachnika_bezopasnosti_prichinu_i_predposulki_gibeli_i_travma.html):

Ջինվորական ծառայության անվտանգության դինամիկան (փոփոխության օրինաչափությունը) որոշելու համար հաջորդաբար լուծվում են հետևյալ խնդիրները. ա) այն առավել բնութագրական ցուցանիշների (գործոնների) որոշում, որոնք զինվորական ծառայության անվտանգության վրա գործում են առավելագույն ազդեցությունը, բ) այդ գործոններից զինծառայողների մահվան, վնասվածքների և հիվանդությունների ամենատիպային հանգամանքների առանձնացում, գ) քննարկվող ժամանակահատվածում այդ հանգամանքներից (գործոններից) ծանրանալու (ուժեղանալու) կամ թեթևանալու (թուլանալու) միտում ունեցող գործոնների որոշում²³:

Նկատենք, որ ռիսկերի գնահատման այս երկու մոտեցումները միմյանց չեն բացառում, և երկուսն էլ կարելի է գործնականում համատեղ կիրառել: Մասնավորապես՝ ռեսուրսների սահմանափակության դեպքում զինվորական ծառայության ռիսկերը կարելի է գնահատել ռիսկերի կոդավորման մատրիցի օգնությամբ և որոշել դրանց դեմ պայքարի հերթականությունը:

ՀՀ ՋՈՒ-ում իրադրության գնահատումը կատարվում է ոչ թե ըստ վտանգների, այլ՝ անվտանգության: Այսպես. ՋԾԱԱ-ն գնահատվում է «բավարար», եթե զորամասում՝

- իրականացվում են ՋԾԱԱ-ի միջոցառումները և պահպանվում են զինծառայողների ամենօրյա գործունեության անվտանգ պայմանները,
- անցկացվում են պարապմունքներ, հրահանգավորումներ և անձնակազմի զինվորական ծառայության անվտանգության ապահովմանը նպատակաուղղված այլ պարտադիր միջոցառումներ,
- անձնակազմը գիտի և ծառայողական պարտականությունները կատարելիս գործնականում պահպանում է անվտանգության կանոնները,
- սանիտարահամաճարակաբանական ապահովման մակարդակը բավարար է,
- պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունների թերացման (ոչ պատշաճ կատարման) հետևանքով մահվան ելքով դժբախտ դեպքեր տեղի չեն ունեցել:

Այս պայմաններից թեկուզ մեկի խախտման դեպքում զորամասում զինվորական ծառայության անվտանգությունը գնահատվում է «անբավարար»:

4) *Ջինվորական ծառայության ռիսկերի դեմ պատասխան գործողությունների պլանավորում և իրականացում:* Հիմնական գործողությունները (միջոցառումները) սահմանված են ՀՀ ՋՈՒ-ի զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգում և դասակարգված են ըստ հետևյալ ոլորտների (ուղղությունների)՝

- իրավական (ՋԾԱԱ-ին վերաբերող օրենսդրության, զորքերում իրավապահ մարմինների աշխատանքի կատարելագործում և այլն),
- սոցիալական (սոցիալ-տնտեսական՝ ՀՀ ՋՈՒ-ի կարիքներին համարժեք

²³ Տես նույն տեղում:

ֆինանսավորման ապահովում, ՋՈՒ-ի անձնակազմի կենցաղային պայմանների բարելավում և այլն),

- կազմակերպատեխնիկական (զինծառայության անվտանգության կանոնների վերաբերյալ ՋՈՒ-ի անձնակազմի հրահանգավորում, ռազմական օբյեկտներում պայթյունահրդեհային անվտանգության ապահովում և այլն),
- գաղափարական (բարոյահոգեբանական՝ իր անվտանգության ապահովման նկատմամբ զինծառայողի պատասխանատվության մակարդակի բարձրացում, անձնակազմի հոգեբանական կայունության ապահովում և այլն),
- բուժական (զորամասում սանիտարահամաճարակային հսկողության կազմակերպում, բուժկանխարգելիչ միջոցառումների իրագործում և այլն),
- բնապահպանական (ՍՈՏ շահագործման և մարտական պատրաստման ընթացքում շրջակա միջավայրի պահպանություն, հասցված վնասի դիմաց բնական իրադրության վերականգնում և այլն)²⁴:

5) Ջինվորական ծառայության ռիսկերի մշտազննում և կատարված քայլերի վերահսկում: Ջինվորական ծառայության անվտանգության ապահովման աշխատանքների կառավարումն անհնար է առանց անընդհատ վերահսկողության: Վերահսկողությունը զինվորական ծառայության կատարման վայրերում անվտանգ պայմանների ստեղծման ու ապահովման աշխատանքների կազմակերպման և կատարման ստուգումն է, որն իրագործում են պաշտոնատար անձինք: Վերահսկողության հիմնական սկզբունքներն են՝ վերահսկողության զուգակցումը բացահայտված թերությունների վերացման գործում ենթականերին կոնկրետ գործնական օգնության ցուցաբերման հետ, աշխատանքի դրական փորձի և առաջավոր մեթոդների ընդհանրացումը, ներդրումն ու տարածումը, բոլոր աստիճանների (մակարդակների) հրամանատարների անձնական մասնակցությունը վերահսկմանը, վերահսկումն ինչպես վերևից ներքև, այնպես էլ հակառակ ուղղությամբ, վերահսկողության խստապահանջությունը, անաչառությունը և կանոնավորությունը, մանրամասն վերլուծությունը, կոնկրետ եզրակացությունների (որոշումների) նախապատրաստումը և դրանց անվերապահ կատարումը:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ջինվորական ծառայության անվտանգության ապահովման դինամիկ համակարգը պատկերված է նկարում:


Այդ համակարգի տարրերն են.

ա) *ՋԾԱ-ի սուբյեկտները՝* զինվորական կառավարման մարմինները և զորամասերի պաշտոնատար անձինք,

²⁴ Այդ միջոցառումների մասին ավելի հանգամանորեն տես «ՀՀ Ջինված ուժերում զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգ», հոդ. 7–12:

բ) *ԶԾԱ-ի օբյեկտները*՝ զինծառայողները, տեղի բնակչությունը և շրջակա բնական միջավայրը,

գ) *ԶԾԱ-ի դեմ ուղղված սպառնալիքները*, այսինքն՝ *ռիսկերը* (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, հոգեֆիզիոլոգիական և սոցիալական վտանգավոր գործոնները),



Նկ. Զինվորական ծառայության անվտանգության (ԶԾԱ) ապահովման համակարգը

դ) *զինծառայության ռիսկերին պատասխան գործողությունները* (միջոցառումները) ըստ ուղղությունների,

ե) *ԶԾԱ-ի պայմանները*

- ընդհանուր պայմաններ (բարձր զինվորական կարգապահություն, զորքերի ծառայության կազմակերպում ըստ կանոնադրության պահանջների և այլն),
- զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս զինծառայողների անվտանգության պայմաններ (սոցիալական պաշտպանվածություն, զորքերի ապահովվածություն ֆինանսական ու նյութական միջոցներով, այլ պաշարներով ու ծառայություններով և այլն),
- զորքերի գործունեության ժամանակ տեղի բնակչության անվտանգության պայմաններ (ղեկավար զինվորական մարմինների և ՀՀ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցային հարաբերություններ, զորքերի տեղաբաշխման վայրերում քաղաքացիների իրավունքները սահմանափակող միջոցառումների մասին բնակչության իրազեկվածություն և այլն),
- զորքերի գործունեությամբ շրջակա բնական միջավայրին սպառնացող վնասների կանխման պայմաններ (զինծառայողների՝ բնապահպանական

օրենսդրության իմացություն, այդ օրենսդրության նորմերի պահպանվածություն և այլն)²⁵:

ԶԾԱԱ-ի ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
Ինչպես արդեն նշվեց, ԶԾԱԱ-ի համակարգը մի դիմամիկ համակարգ է, որի տարրերն անընդհատ փոփոխվում են: Հետևաբար՝ զինվորական ծառայության ռիսկերի կառավարման յուրաքանչյուր փուլ միշտ ենթակա է կատարելագործման՝ անձնակազմի ուսուցման ու դաստիարակության, ներքին ծառայության, մարտական պատրաստման, զինծառայողների բարոյահոգեբանական ապահովման և ԶԾԱԱ-ի այլ միջոցառումների կազմակերպման մակարդակի անընդհատ բարձրացման միջոցով:

Սակայն այդ ամենի նախապայմանը և, հետևաբար, ԶԾԱԱ-ի կատարելագործման առաջին քայլը զինվորական ծառայության ռիսկերի կառավարման կարևորությունը յուրաքանչյուր զինծառայողի գիտակցության մեջ հաստելն է:

Սա հեշտ խնդիր չէ, որովհետև, ինչպես վկայում է միջազգային փորձը, ռիսկերի կառավարման կարևորությունը գիտակցելուն խոչընդոտում են որոշ հոգեբանական պատճառներ.

ա) ղեկավարներից շատերը թյուրիմացաբար կարծում են, թե կառավարել ռիսկերը նշանակում է հրաժարվել «գորամասը պատրաստ է կատարելու իր առջև դրված խնդիրները» պարտադիր սկզբունքից, քանի որ ռիսկերի կառավարումը ենթադրում է, որ կարող են լինել նաև անհաջողություններ: Ուստի շատերը վախենում են վերադասի աչքում անվճռական երևալուց, եթե հանկարծ բարձրաձայնեն ռիսկերի մասին,

բ) պետերը, իրենց հերթին, տհաճությամբ են լսում ռիսկերի մասին ենթակաների խոսքը, որովհետև համարում են, որ դա նրանց հնարավորություն է տալիս արդարացնելու հետագա անհաջողությունը՝ վատ աշխատանքը,

գ) ղեկավարներից ոմանք վախենում են, որ եթե կանխատեսված ռիսկն իրականանա, ապա միանշանակ կերպով կընկալվի որպես իրենց գործած սխալ կամ թերացում²⁶:

Իրականում, եթե ռիսկի դեմ պայքար է ծավալվել, սակայն ռիսկն իրականացել է, դա ցույց է տալիս, որ ռիսկերի կառավարման մեթոդաբանության և կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ հաջողվել է նվազեցնել ռիսկի ազդեցությունը:

Հետևաբար՝ տվյալ հոգեբանական պատճառները միայն նախապաշարմունքներ են, որոնցից պետք է հնարավորինս արագ ազատվել:

²⁵ Զինվորական ծառայության անվտանգության պայմանների մասին ավելի հանգամանորեն տես «ՀՀ Զինված ուժերի զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգում օգտագործվող հիմնական հասկացությունների բացատրությունը», կետ 3: «ՀՀ Զինված ուժերում զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգ»:

²⁶ Տես Ա. Զակիս, Նշ. աշխ.:

Այսպիսով՝ զինվորական ծառայության անվտանգության ապահովման ժամանակակից համակարգը համապատասխան մարմինների, գործընթացների, ընթացակարգերի և միջոցառումների բարդ ու դինամիկ համալիր է, որի արդյունավետ գործարկումը պահանջում է մասնագիտական զիտելիքներ ու դրանց կիրառման հմտություն: Ջինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգի զարգացումն ու կատարելագործումը զինված ուժերի մարտունակության ապահովման կարևոր նախապայմաններից են, պետության պաշտպանունակության մակարդակի բարձրացման կարևոր նախապայման:

СОВРЕМЕННАЯ СИСТЕМА ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ ВОЕННОЙ СЛУЖБЫ И ПУТИ ЕЕ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ

Г. Г. КАРАПЕТЯН, полковник, начальник Управления службы войск и обеспечения безопасности военной службы ГШ ВС РА, С. А. ГЮЛУМЯН, подполковник, старший офицер отдела внутренней службы Управления службы войск и обеспечения безопасности военной службы ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Обеспечение максимально безопасных условий для жизнедеятельности человека особенно важно в вооруженных силах, поскольку здесь существует особо высокий уровень рисков, в связи с чем эта проблема постоянно находится в фокусе пристального внимания военно-политического и военного руководства в ведущих странах мира. Основными источниками рисков являются: наличие большого количества вооружения и военной техники, сложных и опасных в эксплуатации; насыщенность военной службы динамическими процессами, связанными с ношением оружия при несении боевого дежурства, караульной и внутренней служб; участие личного состава в учениях, максимально приближенных к реальной обстановке боя; высокое напряжение физических и психических сил личности, обусловленное спецификой военной службы; большая вероятность появления в сугубо мужских воинских коллективах индивидов с аморальными и криминальными наклонностями.

Нейтрализация (минимизация) данных рисков является сложной и многопрофильной военно-политической, социальной, военной и военно-технической проблемой, которая должна решаться общегосударственными усилиями с применением научной методологии управления рисками.

Современная система обеспечения безопасности военной службы представляет собой динамичный комплекс соответствующих органов, процессов, процедур и мероприятий, эффективное задействование и управление которыми требуют профессиональных знаний и навыков. Эта система подлежит постоянному усовершенствованию посредством обучения и воспитания

личного состава и постоянного повышения уровня организации внутренней службы, боевой подготовки, морально-психологического обеспечения военнослужащих и других мероприятий ОБВС, а также учета требований безопасности на стадии разработки ВВТ.

THE ADVANCED SYSTEM OF ENSURING MILITARY SERVICE SAFETY AND THE WAYS OF IMPROVING IT

H. G. KARAPETYAN, Colonel, Chief, Department of Ensuring Service for the Troops and Military Service Security, the Main Staff, RA Armed Forces,

S. A. GYULUMYAN, Lieutenant Colonel, Senior Officer, Section of Internal Service, Department of Ensuring Service for the Troops and Military Service Security, the Main Staff, RA Armed Forces

SUMMARY

Ensuring conditions of upmost safety for human vital activity is especially important in the Armed Forces, since there exists an extremely high level of risks, for which this problem is constantly in the focus of close attention of military-political and military leadership in the world leading countries. The main sources of risks are: availability of a large number of armament and military equipment, cumbersome and dangerous in operation; abundance of military service with dynamic processes related to the carrying of weapons at combat and guard duties, and internal service; participation of personnel in exercises, maximally close to the real battle conditions; high physical and psychological strain of the individual, conditioned by the specifics of military service; a greater likelihood of emergence of individuals with immoral and criminal inclinations in exclusively male-dominated military collectives.

The elimination (minimization) of the given risks is a complex and cross-cutting military-political, social, military and military-technical problem that should be addressed through nation-wide efforts via the academic methodology of risk management.

The advanced system of ensuring military service safety is a dynamic set of relevant bodies, processes, procedures and measures, the efficient involvement and management of which require professional knowledge and skills. This system is subject to continuous improvement through training and educating the personnel, as well as to constant increase in the level of the organization of internal service, combat training, moral and psychological support of servicemen, and other measures of ensuring military service safety, as well as the consideration of security requirements at the development stage of Armament and Military Equipment.

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՉԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ
ԿԱՆԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՈԱԶՄԱԽՆԺԵՆԵՐԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

*Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների
դոկտոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի խորհրդական,
Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահրատարակչական
կենտրոնի պետի – գլխավոր խմբագրի տեղակալ*



Ներկայումս ՀՀ պաշտպանական համակարգում կատարվող բարեփոխումները միտված են զորքերի մարտունակության մակարդակի բարձրացմանը, փոքր ուժերով մեծ խնդիրների իրագործմանը, առաջադրանքների ստեղծագործական ու նախաձեռնողական կատարմանը¹: Այդ

բարեփոխումների հիմքում դրված է մարդակենտրոնության գաղափարը: Ինչպես նշել է ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, «Հայաստանը, լինելով բարդ տարածաշրջանում տեղակայված, դեպի ծով ելք չունեցող երկիր, ունենալով սակավ բնական պաշարներ, շարունակաբար հայտարարել է, որ իր ամենաարժեքավոր պաշարը մարդն է»²:

Զորքերի մարտունակության ապահովման, առաջադրանքների լիարժեք ու անթերի կատարման կարևոր նախադրյալներից է զինծառայողների առողջության պաշտպանությունը (ԶԱՊ), որը զինվորական պարտքի կատարմանը նրանց պատրաստման անկապտելի մասն է³: «Ազգ-բանակ» հայեցակարգի ներդրման համատեքստում ԶԱՊ-ի համակարգի կատարելագործման գլխավոր նպատակներից մեկը և, թերևս, հիմնականը մատնանշել է ՀՀ Պաշտպա-

¹ Տես «Նախագահը դասախոսություն է կարդացել Հարվարդի համալսարանի Քենեդիի անվան կառավարման դպրոցում», 31.03.2016 (<http://www.president.am/hy/press-release/item/2016/03/31/President-Serzh-Sargsyan-speech-at-Harvard-university/>):

² Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում», 20.09.2017 (<http://www.president.am/hy/press-release/item/2017/09/20/President-Serzh-Sargsyan-attended-UN-General-Assembly/>):

³ Տես «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-99 օրենքը, հոդ. 329 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=364>):

նության նախարար Վիգեն Սարգսյանը. «Ազգ-բանակը այն ընտանիքն է, որի հայրը կոփում է իր զավակին ծնված օրվանից»⁴:

Հարկ է նշել, որ «Ազգ-բանակ» հայեցակարգի էությունից բխում է, որ ՋԱՊ-ի համակարգը պետք է ընդգրկի ոչ միայն զինծառայողներին, այլև ամբողջ հասարակությանը: Այս պահանջը լիովին համահունչ է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետությունը կարևորում է առողջապահության առավել արդյունավետ համակարգի ստեղծումը, որը նախատեսում է՝ առողջ ապրելակերպի արմատավորում, ... հիվանդացության, ... թմրամոլության կանխարգելում, լայն տարածում ստացած հիվանդությունների վաղ հայտնաբերում, ախտորոշում ու բուժում, մայրության ու մանկության պաշտպանություն»⁵:

Ներկայումս ՀՀ-ում ՋԱՊ-ի համակարգը կատարում է երեք հիմնական գործառույթ՝ ծառայության և կենցաղի պայմանների առողջացում, ֆիզիկական պատրաստմամբ ու կանոնավոր մարզական պարապմունքներով զինծառայողների կոփում, սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և բուժկանխարգելիչ միջոցառումների իրագործում⁶:

ՈՂ ԶՈՒ-ՈՒՄ կիրառվող ՋԱՊ-ն ունի հայկականի հետ մեծ ընդհանրություն⁷, իսկ տարբերությունները հիմնականում պայմանավորված են զինված ուժերի կազմակերպվածքների, թվաքանակների, սպառազինությունների, ֆինանսավորման ծավալների, կիրառվող տեխնոլոգիաների զարգացածության մակարդակների միջև եղած տարբերություններով, ազգային առանձնահատկություններով և մի շարք այլ գործոններով:

Ինչ վերաբերում է **ԱՄՆ-ի ԶՈՒ-ին**, ապա այնտեղ իրագործվում է «Բանակում առողջության ամրապնդման» (ԲԱՍ՝ *Army Health Promotion*) ծրագիրը, որը առողջապահական կրթության ու դաստիարակության և մարդկանց վարքում ու միջավայրում այնպիսի փոփոխությունների առաջացմանն ուղղված կազմակերպական, քաղաքական և տնտեսական միջոցառումների համակցություն է, որոնք նպաստում են ամբողջ բանակի, ներառյալ՝ զինծառայողների, պահեստազորայինների, քաղաքացիական ծառայողների ու նրանց ընտանիքների անդամների առողջության ամրապնդմանը, բարձր որակի կյանքի և լավ ինքնազգացողության ապահովմանը⁸:

⁴ Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

⁵ Տես «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)»: Ե., 2014, հ. 1, էջ 388:

⁶ Տես «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը, գլ. 8:

⁷ Տես «Указ Президента РФ от 10 ноября 2007 г. N 1495 «Об утверждении общевоинских уставов Вооруженных Сил Российской Федерации», г. 8 (<http://base.garant.ru/192196/8/>):

⁸ Տես «Army Health Promotion» (Army Regulation 600-63), 14 April 2015, 1-6:

Տվյալ ծրագրի ելակետերից մեկն այն է, որ մարդու առողջությունը կախված է անհատական, ինչպես նաև նրա վարքով ու միջավայրով պայմանավորված բազմաթիվ գործոններից, ուստի ծրագիրը պետք է ներառի հետևյալ գործառնության ոլորտները՝ առողջապահական կրթություն և դաստիարակություն, առողջ վարք, ֆիզիկական առողջության ապահովում, հոգեկան առողջության ապահովում, բնական և (կամ) սոցիալական առողջ միջավայրի ստեղծում⁹:

ԲԱԱ-ի ծրագրի խնդիրները համապատասխանում են ԱՄՆ-ի Կանխարգելման ազգային ռազմավարության (ԿԱՌ՝ *National Prevention Strategy*) ռազմավարական ուղղություններին և գերակայություններին¹⁰: ԿԱՌ-ի նպատակը համապետական ջանքերով բոլոր ամերիկացիների առողջության և լավ ինքնազգացողության պահպանումն ու ամրապնդումն է, առաջին հերթին՝ կանխման ենթակա հիվանդությունների ու մահերի թվի, այսինքն՝ չարորակացված մարդկային կորուստների, նվազեցումը¹¹:

ԲԱԱ-ի ծրագիրը ավելի լայն՝ «Պատրաստ և կազդուրվող բանակ» արշավի (ՊԿԲԱ՝ *Army Ready and Resilient Campaign*) բաղադրիչն է: ՊԿԲԱ-ն որդեգրում է առողջության պահպանման և ամրապնդման հարցերի նկատմամբ «հոլիստական, բազմազիտակարգային» մոտեցում, որի արտահայտություններից մեկն էլ այն է, որ առողջության ֆիզիկական, հոգեբանական և հուզական կողմերը դիտարկվում են համատեղ: ԲԱԱ-ի ծրագրով նախատեսվում է նաև զարգացնել ստրեսը կառավարելու ունակությունները և հոգեբանական հարմարվողականությունը (*spiritual fitness*), որի էությունը անձնային հատկությունների պահպանումն է ստրեսի, դժվարությունների և ողբերգական իրադարձությունների ժամանակ¹²:

Կարծում ենք, որ ՀՀ ՋՈՒ-ում ևս ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի զինծառայողների բարոյահոգեբանական կայունության, ստրեսների կառավարման կարողությունների զարգացման պրոբլեմների տեսական-կիրառական լուծման վրա: Պա հիմնավորվում է այն հանգամանքով, որ ըստ վիճակագրական տվյալների՝ զինծառայողների մասնակցությամբ աղետների, նրանց մահացության պատճառներում գերակշռում են ստրեսային իրավիճակներում ինքնատիրապետման կորստյան հետևանքով ՍՈՏ-ի հետ վարվելու կանոնների խախտումները, զինծառայողների ինքնասպանությունները, սպանությունները¹³:

Ըստ այդմ առաջին պլան են մղվում հոգեբանական բնույթի աշխատանք-

⁹ Տես նույն տեղում:

¹⁰ Տես “National Prevention Strategy”. “Surgeon General”, June 2011 (<https://www.surgeongeneral.gov/priorities/prevention/strategy/index.html>):

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես “Army Health Promotion”, 1-5, 6-1:

¹³ Տես *Б. Артамонов*. Обеспечение безопасности военной службы—важнейшая обязанность командиров (начальников). «Ориентир», 2000, № 8:

ները, մասնավորապես՝ անձնակազմի հոգեբանական պատրաստումը, մասնագիտական հոգեբանական ընտրազատումը, հետևաբար և անձնակազմի ռազմիկական բաշխումն ըստ զինվորական հաստիքների, զինծառայողների հոգեբանական շտկումն ու վերականգնումը և այլն: Տվյալ խնդիրների լուծման ճիշտ կազմակերպումը հատկապես հրատապ է մարդատեխնիկական համակարգերում ներառված զինծառայողների համար՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման, դրանց կառավարման ընթացքում: Խոսքն առաջին հերթին վերաբերում է զինծառայողի անհատական-հոգեբանական առանձնահատկություններին, գործունեությանը, հոգեբանական պատրաստության մակարդակին, անձնային հատկություններին, որոնց անբավարարությունը կամ թերզարգացածությունը, ստրեսների նկատմամբ հոգեբանական անկայունությունը ցայտուն կերպով դրսևորվում են զինծառայողների մասնագիտական գործունեությունում՝ սխալ գործողությունների ձևով¹⁴:

Մասնագիտական գրականության և մեր կատարած գիտափորձերի արդյունքների¹⁵ վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ առումով մեծ նշանակություն ունեն մարդատեխնիկական համակարգերում ներառվող զինծառայողների մասնագիտական հոգեբանական ընտրազատումը, նրանց հոգեբանական պատրաստումը, հոգեբանական կայունության ձևավորումը և այլն: Պատահական չէ, որ օպերատորական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների տեսական-կիրառական հետազոտությունների գերակա խնդիրներից է օպերատոր մարդու և «մարդ-տեխնիկա-միջավայր» համակարգի հուսալիության խնդիրը:

Մարդ-մեքենա համակարգի գործառման հուսալիությունը որոշվում է տրված ժամանակահատվածում և տրված ճշգրտությամբ աշխատելու համակարգի հնարավորությամբ: Այս գաղափարը ձևակերպել է դեռ Բ. Ֆ. Լոմովն իր «Մարդ և տեխնիկա» գիտական աշխատությունում¹⁶: Նա նաև հիմնավորել է, որ հուսալիության գնահատումը չպետք է հանգեցվի միայն տվյալ ցուցանիշների որոշմանը, քանի որ դրանք կայուն չեն և գործունեության ընթացքում օբյեկտը կառավարող անձնավորության հուսալիությունը փոփոխվում է՝ ենթարկվելով բազմազորոնային կախումների և էական անհատական տատանումների: Այս հանգամանքով է պայմանավորված պաշտպանական համակարգում մասնագիտական հոգեբանական ընտրազատման խնդրի մշտական ուսումնասիրության կարևորությունը:

¹⁴ Կան մարդատեխնիկական համակարգերի գործառման համար վտանգների գնահատման տարբեր մեթոդիկաներ, օրինակ՝ Jin Tian, Yang Wu, Xiaoyun Wang, Tingdi Zhao. Hazard Analysis Based on Human-Machine-Environment Coupling. "Research Gate" (https://www.researchgate.net/publication/224231245_Hazard_Analysis_Based_on_Human_Machine_Environment_Coupling):

¹⁵ Տես V. Margaryan. On the Problem of Conducting Psychotechnical Tests and Forming Servicemen's Psychological Stability. «Nauka i studia», Prague, 2010, № 5 (29); *Առյուծի* К вопросу исследования воздействия психогенных факторов боевой обстановки на профессиональную деятельность военнослужащих. «Адаптация и саморегуляция личности», ч. 1. М., 2010:

¹⁶ Տես Բ. Փ. Լոմով. Человек и техника. М., 1966:

Ինչպես հայտնի է, գործունեությամբ մարդուն ներկայացվող այն պահանջների համախմբի մի մասը, որոնք գերազանցում են նրա ռեալ հնարավորությունները, չեզոքացվում է աշխատատեղի հարմարեցմամբ, այնպիսի կառուցվածքային լուծումներով, որոնք առավելագույնս համապատասխանում են մարդու հոգեֆիզիոլոգիական հնարավորություններին: Տվյալ մոտեցումը խնդրի լուծման ուղիներից մեկն է, որը, սակայն, միշտ չէ, որ կարող է կիրառվել ռազմական տեխնիկայի դեպքում: Ռիստի մեծ կարևորություն է ստանում գործունեության ալգորիթմի կատարելագործումը՝ մարդու անհատական առանձնահատկությունների ու հմտությունների ձևավորմամբ և զարգացմամբ: Այդուհանդերձ վերը ներկայացված միջոցները հնարավորություն չեն տալիս բավարարելու գործունեության բոլոր պահանջները, ուստի առաջնային պլան է մղվում մարդատեխնիկական համակարգերում ներառվող անձանց մասնագիտական հոգեբանական ընտրագատման անհրաժեշտությունը: Դա հնարավորություն է տալիս որոշակի մասնագիտություններով աշխատանքի համար ընտրելու այն անձանց, որոնք իրենց հոգեֆիզիոլոգիական հատկություններով առավելագույնս համապատասխանում են պահանջներին:

Ճարտարագիտական հոգեբանության բնագավառում հայտնի մասնագետներ Վ. Ա. Բոդրովն ու Վ. Յա. Օռլովն իրենց «Հոգեբանություն և հուսալիություն. մարդը տեխնիկայի կառավարման համակարգերում» աշխատության մեջ նշում են, որ մարդ-օպերատորին ներկայացվող մասնագիտական պահանջների և նրա հոգեբանական ու ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, հնարավորությունների միջև եղած ցայտուն տարբերություններով է պայմանավորված կառավարման համակարգերում մարդու գործունեության օրինաչափությունները մշտապես ուսումնասիրելու և այդ ուսումնասիրության արդյունքների հիման վրա գործնական առաջարկություններ մշակելու անհրաժեշտությունը¹⁷: Կարծում ենք, որ նման մոտեցումը երբևէ չի կորցնի իր նշանակությունը, քանի որ մարդու կառավարմամբ գործող համակարգերը անընդհատ կատարելագործվում են, և այդ կատարելագործումը հանգեցնում է մարդուն, նրա ներուժային հնարավորություններին ներկայացվող պահանջների խստացմանը:

Այս կապակցությամբ Ռ. Վ. Ադուգուևցյանն ու Ռ. Թ. Ստեփանյանը նշում են, որ գիտության և տեխնիկայի զարգացումն զգալիորեն փոխել է մարդու գործունեության բնույթը՝ մարդու էներգետիկ ֆունկցիաները մեծ մասամբ զիջել են իրենց տեղը մտավոր ֆունկցիաներին, կառավարման ավտոմատացված համակարգերը մարդուն տարանջատել են իր աշխատանքի օբյեկտից, աճել է մարդու սխալի գինը, գործունեության մեջ հաճախակի են դարձել արտակարգ իրավիճակները, որոնց պայմաններում սխալվելու հավանականությունը ավելի մեծ է: Այս պարագայում միայն տեխնիկայի անխափան և անսխալ աշխատանքի ապահովմամբ հնարավոր չէ մեծացնել «մարդ-մեքենա» համակարգի արդյունավետությունը: Ռիստի անհրաժեշտ է ապահովել նաև

¹⁷ Ств В. А. Бодров, В. Я. Орлов. Психология и надежность: человек в системах управления техникой. М., 1998, с. 3:

«մարդկային օդակի» գործառնման հուսալիությունը մասնագիտական ընտրության, մասնագիտական ուսուցման և բազմազան իրավիճակներում մարդու ու տեխնիկայի միջև ներդաշնակության ստեղծմամբ¹⁸:

Ներկայումս մասնագետի պատրաստման մեթոդների և նրա հատկություններին ներկայացվող պահանջների միջև գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն, որն առաջին հերթին պայմանավորված է բարդ ռազմական համակարգերի տեխնիկական պատրաստության ցուցանիշների համակարգում այսպես կոչված «անձնային գործոնի» թերագնահատմամբ¹⁹: Մինչդեռ, օրինակ, ավիացիայում վթարների պատճառները վիճակագրորեն բաշխվում են հետևյալ կերպ՝ անձնակազմի սխալները՝ 50 %, որից չմակածված* սխալները՝ 29 %, բարդ եղանակային պայմանների հետևանքով՝ 16 %, տեխնիկական անսարքության հետևանքով՝ 5 %, ավիատեխնիկայի խափանումներ՝ 22 %, եղանակային պայմաններ՝ 12 %, ահաբեկչություն՝ 9 %, վրագետնյա անձնակազմի (ավիադիսպետչերների, ավիատեխնիկների և այլ մասնագետների) սխալներ՝ 7 %, այլ պատճառներ՝ 1 %²⁰:

Այս թվերը հիմք են տալիս եզրակացնելու, որ բարդ ռազմական համակարգերի տեխնիկական պատրաստությունը հիսուն և ավելի տոկոսով կախված է ռազմական բնագավառի մասնագետների մասնագիտական պիտանիությունից²¹:

Օրինակ՝ Վ. Բորդովն ու Վ. Օռլովն նշել են, որ ԱՄՆ-ի արդյունաբերական ու ռազմական բնագավառներում մասնագիտական ընտրագատումը կատարվում է արդյունավետ կերպով: Մասնավորապես՝ ուսուցման ընթացքում «ոչ պիտանիների մաղումը» 30-40 %-ից նվազում է՝ հասնելով 5-8 %-ի, կառավարման համակարգերի հուսալիությունն աճում է 10-25 %-ով, մասնագետ-

¹⁸ Տես Ռ. Կ. Ադուզումջյան, Ռ. Թ. Ստեփանյան, Մասնագիտական հոգեբանական ընտրություն: Ե., 1998, էջ 3:

¹⁹ Տես В. Г. Маргарян. К вопросу о методологическом обеспечении психологической подготовки военнослужащих в ВС РА. «Личность, семья и общество: вопросы педагогики и психологии». Сб. ст. по материалам XLVIII междунар. науч.-практ. конф. № 1 (48). Новосибирск, сс. 83–88:

* Ժամանակակից մասնագիտական գրականությունում ընդունված է գործողություններում կատարվող սխալները դասակարգել որպես մակածված (спровоцированные) և ոչ մակածված (неспровоцированные):

Ոչ մակածված խախտում է գիտակցաբար կատարված ոչ ստանդարտ գործողությունը, որը պայմանավորված է մասնագետի բացասական անձնային բնութագրիչներով կամ ցածր մակարդակի անվտանգային մշակույթով:

Մակածված խախտում է գիտակցաբար կատարված ոչ ստանդարտ գործողությունը, որը պայմանավորված է այն պաշտոնատար անձի ոչ համապատասխան գործողություններով, որին ենթարկվում է կատարողը՝ օդաչու, տեխնիկ և այլն (տես В. Козлов. Классификация причин авиационных событий и неправильных действий пилотов, 18.10.2013 (<https://www.aviaportal.ru/2013/10/klassifikaciya-prichin-aviacionnyx-sobytij-i-neppravilnyx-dejstvij-pilotov/>)):

²⁰ Տես "Causes of Fatal Accidents by Decade (percentage)", 11.02.2013 (<https://www.webcitation.org/6EL5IWrcn>):

²¹ Տես Վ. Հ. Մարգարյան, Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրագատման հարցի շուրջ: «ՀԲ», 2012, հմ. 3:

ների պատրաստման ծախսերը նվազում են 30-40 %-ով: Օդաչվական ուսումնարաններ ընդունվողների մասնագիտական ընտրազատման շնորհիվ յուրաքանչյուր 100 օդաչուի պատրաստման համար կատարվող ծախսերը նվազում են 6 մլն դոլարով, իսկ թեստերի մշակման վրա ծախսված յուրաքանչյուր մեկ դոլարը տալիս է 1000 դոլարի տնտեսում²²:

Ակնհայտ է, որ զինվորական ծառայության անվտանգության ապահովման (ԶԾԱԱ) համակարգի արդյունավետությունը կախված է հրամանատարական կազմի, առավել ևս՝ անմիջական պետերի անձնային և մասնագիտական որակներից: Հետևաբար, այս հարցում իր կարևոր նշանակությունն է ստանում նաև հրամանատարական կազմի ձեռնհասության գնահատումը:

Այս համատեքստում զինվորական ծառայության անվտանգության պրոբլեմի վերլուծության կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ցանկացած գործունեության հիմքում պետք է դրված լինի ԶԾԱԱ-ի պահանջների խստագույնս կատարումը: Այսպիսով՝ դա մի բարդ գործընթաց է, որին ակտիվ մասնակցություն պետք է ունենան զորամասի բոլոր պաշտոնատար անձինք, ամբողջ անձնակազմը: ԶՈՒ-ի հրամանատարական կազմի գործունեության մեջ գերակա ուղղություն պետք է դառնա զորամասերում և ստորաբաժանումներում զինվորական ծառայության անվտանգության բազմակողմանի ապահովման ամենօրյա աշխատանքը՝ միաժամանակ ընդգրկելով աշխատանքի և՛ իրավական, և՛ սոցիալ-տնտեսական, և՛ կազմակերպական-տեխնիկական, և՛ բարոյահոգեբանական, և՛ բուժական, և՛ բնապահպանական ուղղությունները²³: Այդ աշխատանքի կարևոր բաղադրիչներից է «մարդ-մեքենա-միջավայր» համակարգի անխափան ու անվտանգ գործունեության կազմակերպումը բոլոր մակարդակներում, այդ թվում՝ օպերատորների հոգեբանական ընտրազատման, մասնագիտական (այդ թվում՝ բարոյահոգեբանական) պատրաստման, մեքենաների նախագծման, պատրաստման, շահագործման ու նորոգման, համապատասխան սոցիալական ու շրջակա միջավայրների ձևավորման փուլերում:

Այսպիսով՝ «Ազգ-բանակ» հայեցակարգի ներդրումը նախատեսում է Հայրենիքի պաշտպանության գործում ամբողջ ազգի ներուժի ներգրավումը: Նման պայմաններում չարդարացված մարդկային կորուստների կանխման, մարտական առաջադրանքների կատարման արդյունավետության, երաշխավորվածության ու լիարժեքության, այդ թվում՝ մարդատեխնիկական համակարգերի անխափան ու հուսալի գործառման, ապահովման համար որպես նախապայման կա զինծառայողների առողջության պահպանման համակարգի ընդլայնման ու կատարելագործման միջոցառումների գիտական մշակման անհրաժեշտություն: Ընդամին նպատակահարմար է այդ մշակումները կատարել ռազմաինժեներական հոգեբանության ամենաարդիական նվաճումների հաշվառմամբ:

²² Տես Վ. Ա. Բողրով, Վ. Յա. Օռլով, Նշ. աշխ., էջ 221:

²³ Վ. Հ. Մարգարյան, Զինվորական ծառայության անվտանգության ապահովման հարցի շուրջ: «ՀԲ», 2003, հմ. 3:

ВОЕННЫЕ ИНЖЕНЕРНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ
СОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ ОХРАНЫ ЗДОРОВЬЯ
ВОЕННОСЛУЖАЩИХ И ПРЕДОТВРАЩЕНИЯ НЕОПРАВДАНЫХ
ЧЕЛОВЕЧЕСКИХ ПОТЕРЬ В МИРНОЕ ВРЕМЯ В КОНТЕКСТЕ
ВНЕДРЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»

*В. Г. МАРГАРЯН, полковник, доктор психологических наук, советник Начальника
НИУО МО РА, А. К. ЯЛАНУЗЯН, полковник, заместитель начальника
научно-издательского центра – главного редактора НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Охрана здоровья военнослужащих (ОЗВ) имеет ключевое значение для обеспечения боеготовности войск и решения больших задач малыми силами. В контексте внедрения концепции «Нация–армия» целесообразно расширить рамки контингента, охваченного системой ОЗВ, и усовершенствовать саму систему. С этой точки зрения познавательна практика США, где осуществляется программа «Укрепление здоровья в армии», в которую вовлечены не только военнослужащие, но и гражданские служащие МО и ВС, члены их семей, резервисты, а ее стратегические направления и приоритеты приведены в соответствие с Национальной (общегосударственной) стратегией профилактики США.

Одним из приоритетов американской системы ОЗВ является обеспечение психического здоровья военнослужащих. Целесообразно в ВС РА также уделять большое внимание теоретико-прикладному решению проблем психологической устойчивости военнослужащих, развитию умения управлять стрессами, поскольку, согласно статистике, потеря самоконтроля в стрессовых ситуациях является одной из главных причин нарушений требований безопасности военной службы с летальным исходом, в особенности при функционировании антропотехнических систем.

В этом плане эффективными средствами являются: соответствующая психологическая подготовка личного состава; профессиональный психологический отбор и рациональное распределение по воинским должностям; психологические коррекция и реабилитация военнослужащих и т. д.

THE MILITARY ENGINEERING PSYCHOLOGICAL ASPECTS
OF IMPROVING THE SYSTEM OF THE SERVICEMEN'S HEALTH
PROTECTION AND THE UNJUSTIFIABLE CASUALTIES'
PREVENTION IN PEACETIME WITHIN THE CONTEXT
OF "NATION-ARMY" CONCEPT IMPLEMENTATION

*V. H. MARGARYAN, Colonel, Doctor of Psychology,
Advisor to the Head, NDRU, MOD, RA, A. K. YALANUZYAN, Colonel,
Deputy Editor-in-Chief-Deputy Head, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA*

SUMMARY

The servicemen's health protection (HP) is of key significance for ensuring the troops combat readiness and addressing big problems with little capacities. In the context of implementing the "Nation-Army" concept, it is reasonable to expand the scope of the contingent, embracing the system of the servicemen's health protection. From this prospective the US experience, where the "Army Health Promotion" program is implemented, in which not only the soldiers are engaged, but also army civilians of the US DoD and Armed Forces, their family members, and the army reserve, is quite informative, and its strategic directions and priorities are brought to conformity with the US National Prevention Strategy.

One of the priorities of the US HP system is ensuring the servicemen's mental health. In the RA Armed Forces, it is reasonable to devote great attention to the theoretical and applied solution to the problems of the servicemen's psychological stability and the development of their ability to deal with stresses as well, since, as statistics shows, losing self-control in stressful situations is one of the main causes for breaches of the safety requirements leading to fatalities, in particular, with operation of anthropotechnical systems.

In this respects, the effective measures are the following: adequate psychological preparedness of the personnel psychological training; professional psychological selection and rational distribution among the military posts; psychological intervention and rehabilitation of the servicemen, and etc.

ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Հ. Պ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ԱՀՏԱ-ի վարչության
բաժանմունքի պետ

Անվտանգությունը մարդու կենսականորեն կարևոր պահանջմունքներից է: Ըստ ճանաչված ամերիկյան հոգեբան Ա. Մասլոուի՝ դա երկրորդ հիմքային պահանջմունքն է, որի բավարարմանը անձնավորությունը ձեռնամուխ է լինում ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարումից անմիջապես հետո¹: Անվտանգության կարևորությունն ավելի է մեծանում, երբ մարդու գործունեությունը կապված է զանազան ռիսկերի հետ: Այդպիսի գործունեություն է զինվորական ծառայությունը, որի վտանգավորությունը ոչ միայն բխում է մարտական իրադրությունից, այլև մարտական պատրաստման պարապմունքների, բարդ սպառազինության ու տեխնիկայի շահագործման, զենքի կրում նախատեսող զինվորական ծառայության խնդիրների կատարման, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ժամանակ վնասվածքներ ստանալու կամ որևէ մասնագիտական հիվանդություն ձեռք բերելու հնարավորության, ինչպես նաև զինվորական ծառայությանը հատուկ հոգեբանական ու սոցիալական ծանրաբեռնվածության հետևանք է: Ռիսունմասիրությունները ցույց են տալիս, որ զինվորական ծառայության ընթացքում իրական վտանգի աղբյուրներ են նաև զինծառայողների ցածր մակարդակի պրոֆեսիոնալիզմը, նրանց սոցիալ-հոգեբանական խնդիրներն ու անհարմարվողականությունը, կոլեկտիվում տիրող նախագծտային մթնոլորտը:



Զգալի չափով զինվորական ծառայության անվտանգության կանոնների խախտման հետևանք են զինծառայողների ոչ միայն վնասվածքների ու խեղումների, այլև հաշմանդամության ու մահվան, ինքնասպանության դեպքերը, մասնագիտական հիվանդությունները և զինվորական կոլեկտիվներում անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը: Այլ կերպ ասած՝ զինվորական ծառայության անվտանգության աստիճանը մեծապես կախված է զինծառայողների հոգեբանական բնութագրերից, ինչպես նաև զինվորական կոլեկտիվներում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական զարգացումներից, ինչով էլ պայմանավորված է զինվորական ծառայության անվտանգության (ԶԾԱ) բարոյահոգեբանական ապահովման (ԲՀԱ) կարևորությունը:

¹ Տես “Maslow’s Hierarchy of Needs”. “Simply Psychology” (<https://www.simplypsychology.org/maslow.html>):

Ընդհանուր առմամբ ԲՀԱ-ն մարտական գործողությունների հիմնական տեսակի ապահովումներից է²: Բարոյահոգեբանական ապահովմամբ լուծվում է երեք կարևոր խնդիր՝ զինծառայողների մեջ ձևավորվում են.

- ա) հայրենիքի պաշտպանին անհրաժեշտ բարոյական հատկություններ,
- բ) հոգեբանական կայունություն և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստություն,
- գ) ստացվող տեղեկույթը քննադատաբար ընկալելու և հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը չենթարկվելու ընդունակություն³:

Միևնույն ժամանակ, որոշ մասնագետների կարծիքով, բարոյահոգեբանական ապահովումը, բացի ավանդական տեսակի աշխատանքներից (տեղեկատվական-դաստիարակչական, հոգեբանական, սոցիալ-իրավական, մշակութաժամանցային, պաշտպանություն հակառակորդի տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունից և զորքերի ապահովում դաստիարակության տեխնիկական միջոցներով), որպես կարևոր բաղադրիչ ներառում է նաև զինվորական ծառայության անվտանգության բարոյահոգեբանական, կամ հոգեբանական, ապահովումը⁴:

Ասվածից բխում է, որ ԶԾԱ-ի ԲՀԱ-ն պետք է հիմնվի զինծառայության անվտանգության հոգեբանության՝ որպես մի գիտաճյուղի վրա, որն ուսումնասիրում է խաղաղ և պատերազմական պայմաններում զինվորական գործունեության անվտանգության հոգեբանական կողմերը: Ըստ այդ մոտեցման՝ ԶԾԱ-ի հոգեբանությունը ռազմահոգեբանական գիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է զինծառայության վտանգավոր և վնասակար հոգեֆիզիոլոգիական գործոնները, զորքերում վնասվածքներ ստանալու հոգեբանական պատճառներն ու զորքերի կենսագործունեության անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով հոգեբանական գիտության օգտագործումը⁵:

ԶԾԱ-ի հոգեբանության՝ որպես գիտաճյուղի հիմնական նպատակներն են՝ ա) ղժբախտ պատահարների ընդհանուր հոգեբանական պատճառների վերհանումը, բ) զինծառայողների մեջ այնպիսի սոցիալ-հոգեբանական ու մասնագիտական որակների ձևավորման օրինաչափությունների պարզումը, որոնք նրանց հնարավորություն են տալիս հաջողությամբ գործելու զինծառայության լարված պայմաններում, գ) խաղաղ պայմաններում և մարտական իրադրության մեջ զինծառայության անվտանգության մակարդակի բարձրացման ուղիների մշակումը:

Այս արգասիքներն ունենալու համար նպատակահարմար է կատարել ռազմահոգեբանական հետազոտություններ հետևյալ ուղղություններով.

² Տես «Военный энциклопедический словарь». М., 2001, т. 2, с. 96:

³ Տես Վ. Հ. Մարգարյան, Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 202:

⁴ Տես А. В. Артамонов, С. М. Григорьев, В. Г. Зазыкин, Е. М. Сушкевич. Психологическое обеспечение безопасности военной службы. «Военная мысль», 1999, № 4:

⁵ Տես նույն տեղում:

- զինվորական ծառայության վտանգավոր և վնասակար հոգեֆիզիոլոգիական գործոնների (վախ, տագնապ, դիստրես, հոգնածություն, քնկոտություն, ֆիզիկական, զգայական և մտավոր ծանրաբեռնվածություն և այլն) հայտնաբերում, նույնականացում և դրանցից պաշտպանության միջոցների մշակում,
- մի կողմից՝ զինծառայողի անհատական հատկությունների և հոգեկան վիճակների, մյուս կողմից՝ նրա անվտանգության (պաշտպանվածության) միջև կապի ուսումնասիրություն,
- զինծառայության որոշակի պայմանների հաշվառմամբ դժբախտ պատահարների հոգեբանական պատճառների հետազոտում (մարդու վարքագծի վրա տվյալ գործունեության կառուցվածքային տարրերի ազդեցության որոշարկում, զինծառայության շարժառիթների միջև տարբերության հիմքի վրա գծությունների առաջացման նախադրյալների հայտնաբերում, ռիսկային վարքագծի պատճառների պարզում և այլն),
- մարդու և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների հոգեբանական կողմերի հետազոտում (բնապահպանական ճգնաժամի հոգեբանական հետևանքների օրինաչափությունների վերլուծություն և այլն),
- ՋԾԱ-ի մակարդակի բարձրացման նպատակով հոգեբանական գործոնների օգտագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում (անվտանգ ծառայության նկատմամբ հոգեբանական տրամադրվածության ձևավորում, անվտանգ վարքի խթանում և դաստիարակում, տարբեր տեսակի աշխատանքների անվտանգ կատարման եղանակների ու ձևերի ուսուցում, արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ գործողություններին անձնակազմի հոգեբանական պատրաստում, անվտանգության պահանջների հաշվառմամբ մասնագիտական ընտրազատման կազմակերպում և այլն)⁶:

Նման հետազոտությունների անհրաժեշտությունը նշում են նաև ամերիկյան մասնագետները՝ նկատելով, որ զինծառայողների հոգեկան առողջության վերաբերյալ ուսումնասիրությունները քիչ են⁷: Նրանք առաջարկում են ուշադրություն դարձնել այնպիսի հոգեբանական խնդիրների վրա, որոնք ծագում են հետևյալ վտանգավոր գործոնների ազդեցությամբ. հարմարվողականության խանգարում, թմրանյութերից կախվածություն, հետվնասվածքային ստրես, ուղեղի վնասվածք, ընկճվածություն, բռնություն ընտանիքում և այլն⁸: Ընդամին մեծապես կարևորվում են այն հոգեբանական խնդիրները, որոնք առաջանում են զինծառայողների ընտանիքներում երկարատև բաժանման, հիմնական խնամակալի վիրավորման կամ մահվան հետևան-

⁶ Տես նույն տեղում:

⁷ Տես "The Psychological Needs of U.S. Military Service Members and Their Families: A Preliminary Report". American Psychological Association, February 2007, P. 7 (<https://apa.org/about/policy/military-deployment-services.pdf>):

⁸ Տես նույն տեղում:

քով⁹: Այս բոլոր գործոնները առաջացնում են պրոբլեմներ, որոնք առնչվում են նաև զինվորական ծառայության անվտանգությանը:

Այսպիսով՝ ԶԾԱ-ի ԲՀԱ-ի հիմնական խնդիրները պետք է համարել.

- յուրաքանչյուր զինծառայողի գիտակցության մեջ սահմանված կարգի պահպանման և անվտանգության պահանջների կատարման համար անձնական պատասխանատվության ձևավորումը,
- իր ու անձնակազմի մյուս անդամների կյանքի և առողջության պահպանման նկատմամբ զինծառայողների գիտակցական մոտեցման ձևավորումը,
- պաշտոնատար անձանց գիտակցության մեջ իրավական մշակույթի և իրավական նորմերի անվերապահ կատարման անհրաժեշտության արմատավորումը,
- զինծառայողների ռազմամասնագիտական և բարոյահոգեբանական որակների, անձնական կարգասիրության և կատարողականության նպատակային ձևավորումը,
- զինվորական կանոնադրությունների պահանջների կատարման համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների զարգացումը,
- տեղի բնակչության և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորումը:

Զինվորական ծառայության անվտանգության բարոյահոգեբանական ապահովման հիմնական սկզբունքներն են.

- զորքերի (ուժերի) առօրյա գործունեությունը կազմակերպելիս զինծառայողի կյանքի և առողջության առաջնայնության ընդունումն ու ապահովումը,
- Զինված ուժերի մարտական պատրաստության ապահովման սուբյեկտների միջև գործառնությունների, լիազորությունների և պատասխանատվության հստակ բաշխումն ու տարանջատումը,
- անցկացվող միջոցառումների համալիրությունը, համակարգվածությունը, նպատակաուղղվածությունը, անընդհատությունը, ակտիվությունը և օպերատիվությունը¹⁰,
- զինվորական ծառայության համար սպառնալիքների ու վտանգների և դրանց դեմ ձեռնարկվող միջոցների համապատասխանությունը:

ԶԾԱ-ի ԲՀԱ-ի միջոցառումներն անցկացնում են հրամանատարները, շտաբները, անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով պատասխանատուները և այլ պաշտոնատար անձինք: Նրանք պարտավոր են կատարել հետևյալ գործառնությունները.

⁹ Տես նույն տեղում, էջ 4:

¹⁰ Տես «Զինված ուժերի բարոյահոգեբանական կայունության ապահովման ուղեցույց»: «Հայրենիքի մարտիկ», 2004, հմ. 3–4:

- ստեղծել պայմաններ՝ ՋՏԱԱ-ի նկատմամբ զինծառայողների հետաքրքրության մեծացման և այն բավարարելու համար (*բարոյական-մարդասիրական գործառույթ*),
- պարզել և ուսումնասիրել զինվորական կոլեկտիվներում սոցիալական լարվածության ծագման միտումները, ՋՏԱԱ-ի համար անբարենպաստ իրադրության պատճառները և վիճակի վերաբերյալ հասարակական կարծիքը, պլանավորել և կանխատեսել զինվորական ծառայության անվտանգության բարոյահոգեբանական ապահովման համակարգի զարգացման ընթացքը (*վերլուծական և կանխատեսումային գործառույթ*),
- կազմակերպել և համակարգել զինվորական ծառայության անվտանգության բարոյահոգեբանական ապահովման համակարգի կենսունակության համար նորանոր ձևերի ստեղծման ու մշակման ուղղությամբ պաշտոնատար անձանց գործունեությունը (*կազմակերպամեթոդական գործառույթ*),
- հայտնաբերել, ընդհանրացնել և ՋՏԱԱ-ի ղեկավարման սուբյեկտներին տրամադրել տեղեկույթ այն զինծառայողների մասին, որոնք ունեն կյանքի ապահովման և օգնության խիստ կարիք (*տեղեկատվահաղորդակցային գործառույթ*),
- ընդհանրացնել և տարածել ՋՏԱ-ի ԲՀԱ-ի առաջավոր փորձը, համակարգել եղած տեղեկույթը, ի մի բերել ՋՏԱԱ-ի ոլորտի օրենսդրական և այլ իրավական ակտեր, դրանց մասին իրազեկել զորամասի բոլոր զինծառայողներին (*տեղեկատվաքարոզչական գործառույթ*),
- բացասական երևույթների հաղթահարմանը միտված վարքագիծ ձևավորելու նպատակով զինվորական կոլեկտիվներում կիրառել սոցիալ-իրավական, հոգեբանական, մանկավարժական և այլ կանխարգելիչ մեխանիզմներ (*կանխարգելիչ գործառույթ*),
- վեր հանել ՋՏԱ-ի ԲՀԱ-ի ոլորտում եղած պրոբլեմները, դրանց լուծման նպատակով ներդաշնակեցնել զորամասի տարբեր մասնագետների ջանքերը (*սոցիալ-ինտեգրային գործառույթ*):

ՋՏԱ-ի ԲՀԱ-ի հիմնական մեթոդներն են՝ անձնական օրինակը, համոզումը, վարժանքները, մրցակցությունը, խրախուսանքը, քննադատությունն ու ինքնաքննադատությունը, հարկադրանքը: Այդ մեթոդների կիրառումը պետք է լինի համակարգված և համակցված: Դրանց գլխավոր նպատակն է ՋՏԱ-ի ԲՀԱ-ի ոլորտում ՋՏԱԱ-ի բոլոր մասնակիցների միջև արդյունավետ փոխգործության ապահովումը, քանի որ զինվորական ծառայության անվտանգության բարոյահոգեբանական ապահովումը բարդ ռազմասոցիալական խնդիր է և պահանջում է ղեկավար մարմինների ջանքերի խելամիտ համադրում:

Այսպիսով՝ զինվորական ծառայության անվտանգության բարոյահոգեբանական ապահովումը զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգում մի ինքնուրույն ուղղություն է, որն ունի հստակ կերպով որոշված նպատակներ, խնդիրներ ու մեթոդներ: Զինվորական ծառայության

անվտանգության բարոյահոգեբանական ապահովման առանձնահատկությունն այն է, որ այն հիմնվում է առաջին հերթին հոգեբանական մեթոդների կիրառման վրա և առանց բացառության բոլոր պաշտոնատար անձանց անմիջական մասնակցությամբ նպատակաուղղվում է զինծառայողների կյանքի ու առողջության պահպանմանը:

МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ КАК НАПРАВЛЕНИЕ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ ВОЕННОЙ СЛУЖБЫ

*А. П. МНАЦАКАНЯН, подполковник, начальник отделения
Управления по работе с личным составом ВС РА*

РЕЗЮМЕ

Уровень безопасности военной службы существенным образом зависит от психологических характеристик военнослужащих и атмосферы в коллективе, чем и обусловлена важность морально-психологического обеспечения безопасности военной службы (МПО БВС).

МПО БВС должно базироваться на психологии безопасности военной службы как научной дисциплине, целями которой являются: а) выявление общих психологических причин несчастных случаев, б) выяснение закономерностей формирования таких социально-психологических и профессиональных качеств у военнослужащих, которые позволяют им успешно действовать в напряженных условиях военной службы, в) разработка путей повышения уровня безопасности военной службы в мирных условиях и в боевой обстановке.

Основными задачами МПО БВС являются: формирование личной ответственности каждого военнослужащего за соблюдение и выполнение требований безопасности в установленном порядке; формирование сознательного отношения военнослужащих к соблюдению правил сохранения жизни и здоровья; укоренение в сознании должностных лиц необходимости безоговорочного выполнения требований правовых норм в сфере безопасности военной службы; целенаправленное формирование у военнослужащих военно-профессиональных и морально-психологических качеств, пунктуальности и исполнительности; развитие необходимых навыков и возможностей для выполнения требований воинских уставов; формирование заботливого отношения к местному населению и окружающей среде.

Основными методами МПО БВС являются: воспитание на личном примере, убеждение, упражнение, соревнование, поощрение, критика и самокритика, принуждение.

MORAL AND PSYCHOLOGICAL SUPPORT AS A DIRECTION
FOR ENSURING MILITARY SERVICE SAFETY

*H. P. MNATSAKANYAN, Lieutenant Colonel, Chief, Section,
Moral and Welfare Department, the Main Staff, RA Armed Forces*

SUMMARY

The level of military service safety essentially depends on the psychological characteristics of servicemen, thus attaching the importance to the moral and psychological support of the military service safety (MPS MSS).

The MPS MSS should be based on the psychology of military service safety as a scientific discipline, which is aimed at: a) revealing common psychological reasons of accidents; b) establishing the consistency of the formation of such socio-psychological and professional properties among servicemen that allow them to successfully operate under tense conditions of military service; c) developing ways of improving the level of military service safety in peacetime and in combat situation.

The main tasks of the MPS MSS are: formation of personal responsibility of each serviceman for observance and fulfillment of safety requirements in the established order; formation of servicemen's conscious attitude to the observance of the rules for preserving life and health; inculcation in the minds of officials of the need for unconditional fulfillment of the requirements of legal norms in the sphere of military service safety; purposeful formation of military-professional and moral-psychological properties, punctuality and diligence among servicemen; development of necessary skills and capabilities to meet the requirements of military regulations; formation of a caring attitude towards the local population and the environment.

The main methods of moral and psychological support of military service safety are: leading by personal example, persuasion, exercise, competition, encouragement, criticism and self-criticism, and coercion.

**ԳԵՐԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
ԷԼԵԿՏՐՈՍԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՀԵՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՇՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԲՈՒԺԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՐՁՐ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

*Ս. Գ. ԳԱԼՍՅԱՆ, ք/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ*



Զինվորական ծառայության անվտանգության (ԶԾԱ) բուժապահովումը այնպիսի միջոցառումների համալիր է, որոնց նպատակն է զինվորական զործունեությանը պայմանավորված մարմնական (սոմատիկ) հիվանդությունների, ախտահարումների ու վնասվածքների առաջացման կանխումը¹: Մեկ այլ սահմանմամբ՝ ԶԾԱ-ի բուժապահովման միջոցառումների նպատակն է «ինչպես ծառայողական պարտականությունների կատարման, այնպես էլ ծառայությունից ազատ ժամանակ դժբախտ պատահարների և դրանց հետ կապված մահվան, վնասման, մասնագիտական հիվանդությունների դեպքերի և առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ կարողությունների կամ ռեսուրսների կորստյան բացառումը»²:

Այդ միջոցառումները ներառում են.

- զինծառայողների կյանքի, ծառայության և կենցաղային պայմանների նորմերի կատարման նկատմամբ մշտական բժշկական, սանիտարահամաճարակային հսկողություն,
- ծառայության հետ կապված բուժկանխարգելիչ միջոցառումներ,
- զորակոչիկների, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ծառայության ընդունվող անձանց պարտադիր բուժզննում,
- զինծառայողների հիվանդացության և վնասվածքների վիճակագրության վերլուծություն,
- մասնակցություն մարտական պատրաստման պլանների մշակմանը՝ զինվորական ծառայության ռեժիմի ապահովման, ֆիզիկական ծանրաբեռնվածությունների մեծությանը և ինտենսիվությանը վերաբերող հիգիենիկ պահանջների կատարումը լիովին ապահովելու նպատակով,
- բացօթյա պարապմունքների ժամանակ զինծառայողների հանդերձանքի ստուգում՝ գերսառեցման կամ գերտաքացման կանխման պահանջների կատարման վերահսկմամբ,

¹ Տես «Руководство по медицинскому обеспечению ВС РФ на мирное время». М., 2002, с.147 (<http://voenlaw.ru/files/Руководство%20по%20медобеспечению%20МО%20РФ.pdf>):

² Տես “DoD Safety and Occupational Health (SOH) Program”. Department of Defense Instruction, Number 6055.01, 14 October 2014, P. 12:

- պարապմունքների անցկացման տեղերի սանիտարական վիճակի ստուգում ու գնահատում,
- զինծառայողների վնասվածքների, հրաձգության և ռազմական տեխնիկայի շահագործման ընթացքում թունավոր տեխնիկական հեղուկներով, վառողային և արտանետված գազերով թունավորման կանխարգելման միջոցառումների ստուգում,
- երկարատև ռազմերթերի ժամանակ անբարենպաստ եղանակային գործոնների ազդեցության, անձնակազմի գերհոգնածության կանխման միջոցառումների կատարման ստուգում,
- զինծառայողների ֆիզիկական զարգացման մակարդակին ֆիզիկական ծանրաբեռնվածությունների մեծության և ինտենսիվության համապատասխանության աստիճանի գնահատում,
- սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման, շինարարական ու տնտեսական աշխատանքների ժամանակ զինծառայողների աշխատանքային պայմանների նկատմամբ բուժհսկողություն³:

ԶԾԱ-ի բուժապահովման խնդիրներն ստորև դիտարկենք ՀՕՊ-ի զորքերի օրինակով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ աշխարհագրական դիրքի հաշվառմամբ ԶՈՒ-ի առաջնահերթ խնդիրներից է տարածքի ու բնակչության պաշտպանությունը օդային հարվածներից: Այդ նպատակով հակաօդային պաշտպանության ստորաբաժանումները մշտապես սպառազինվում են հակառակորդի օդային հարձակման միջոցների հայտնաբերման ու խոցման ժամանակակից սարքերով, որոնց սպասարկման, շահագործման ու նորոգման աշխատանքները առողջության համար ներկայացնում են վտանգ:

Այդ սպառազինության կարևոր բաղադրատարրերից են ռադիոտեղորոշումային կայանները, որոնց գործառման հիմքը գերբարձր հաճախականությամբ էլեկտրամագնիսական դաշտն է (ԳԲՀ ԷՄՊ): Կայանների սպասարկումը խիստ բարդ գործ է, որը պահանջում է հատուկ կրթություն ստացած և առողջական խնդիրներ չունեցող անձնակազմ: Նման մասնագետների պատրաստումը բավական ժամանակատար է և ծախսատար, քանի որ կատարվում է ոչ ՀՀ-ում: Միևնույն ժամանակ, մարդը և նրա առողջությունը մեր պետությունում ճանաչված են որպես գլխավոր արժեքներ, ուստի ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայությունը, որի գերխնդիրն է անձնակազմի բարվոք առողջական վիճակի ապահովումը, պետք է անի ամեն անհրաժեշտը մասնագիտական և ոչ մասնագիտական հիվանդությունների հնարավոր զարգացումն ու դրանց պատճառով վաղաժամկետ զորացրումները կանխելու համար:

Ըստ այդմ էլ անհրաժեշտ է հստակ կերպով կանոնակարգել վերը նշված թվակազմի բուժապահովման համակարգի գործունեությունը՝ դրանում ներառելով սանիտարահիգիենիկ պայմանների ուսումնասիրումը և բարելավումը, զինծառայողների առողջական վիճակի դիսպանսեր հսկողությունը, օրգանիզմում

³ Տես «ՀՀ Զինված ուժերում զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգ», ՀՀ Պաշտպանության նախարարի 2010 թ. օգոստոսի 17-ի հմ. 916 հրամանի հավելված հմ. 11, *Նաև*՝ «Руководство по медицинскому обеспечению ВС РФ на мирное время», сс. 148, 150:

տեղի ունեցող հարմարվողական կենսընթացների գնահատումը, նախահիվանդագին ընթացքների ժամանակին հայտնաբերումը և անհրաժեշտ բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

ԳՐՀ ԷՄ դաշտը յուրահատուկ տեսակի մատերիա է⁴: ԳՐՀ տիրույթը $3 \times 10^8 - 3 \times 10^{11}$ Հց հաճախականությամբ, կամ 1 մմ-ից մինչև 100 սմ երկարությամբ, էլեկտրամագնիսական ալիքներն են: Մեկ այլ կարևոր պարամետր է ինտենսիվությունը (/), այսինքն՝ էներգետիկ բնութագիրը, որը գնահատվում է էներգիայի հոսքի խտության (էՀԽ) մեծությամբ, այսինքն՝ ճառագայթման այն էներգիայով, որն անցնում է ալիքների տարածմանն ուղղահայաց միավոր մակերեսով: Չափման միավորներն են Վտ/սմ²-ն, մՎտ/սմ²-ն, մկՎտ/սմ²-ն:

ԳՐՀ ԷՄ դաշտի կենսաբանական ազդեցության ուսումնասիրությունը հանգեցրել է այն եզրակացության, որ ճառագայթահարվող օբյեկտի վրա ներգործում է նրա մակերևութին ընկնող էներգիայի այն մասը, որը կլանվում է: Սովորաբար կլանվում է էներգիայի 50 տոկոսից ոչ ավելին, մնացածն անդրադառնում է: Ընդ որում, կլանման ու ներթափանցման մեծությունները պայմանավորված են հյուսվածքի բնույթով և դիէլեկտրիկական հատկություններով, ինչպես նաև ընկնող ալիքի երկարությամբ: Ներթափանցման խորությունը հավասար է ալիքի երկարության մոտ 1/10 մասին:

Պարզվել է, որ միկրոալիքների ազդեցությունը լինում է ջերմային (էՀԽ-ն գերազանցում է 10 մՎտ/սմ²) և ոչ ջերմային, կամ յուրահատուկ (էՀԽ-ն քիչ է, քան 10 մՎտ/սմ²-ն): Նման բաժանումը որոշակի առումով պայմանական է, քանի որ ջերմային հետևանքներ առաջացնող բաժնաչափերի դեպքում հյուսվածքների տաքացումը գերազանցում է (քողարկում է) յուրահատուկ ազդեցությունը:

Կենդանի օրգանիզմների վրա ԳՐՀ ԷՄՊ ազդեցության մեխանիզմների վերաբերյալ կան մի քանի վարկածներ:

Այսպես. ըստ Ա. Ս. Պրեսմանի՝ փոքր բաժնաչափերով ԳՐՀ ԷՄՊ ներգործության դեպքում ներքջջային օրգանելների մակարդակում տեղի է ունենում կետային տաքացում: Ընդ որում, այնպիսի միկրոկառուցվածքներ, ինչպիսիք են ռիբոսոմներն ու միտոքոնդրիումները, ավելի արագ են տաքանում, քան նվազ ջերմային հաղորդականությամբ օժտված հարևանները, ինչն ի վերջո հանգեցնում է բջջի կենսագործունեության խանգարման:

Մի շարք տվյալների համաձայն՝ ԳՐՀ ԷՄ դաշտի ազդեցության հետևանքով փոխվում են ճառագայթահարված ռեցեպտորների գրգռականությունը, հորմոնների, վիտամինների ու ֆերմենտների ակտիվությունը, այլ կերպ են կատարվում ազդակների սինապտիկ փոխանցման կենսընթացները, խախտվում է ազդեցության հոսանքների տարածումը և այլն:

Հաստատվել է, որ ԳՐՀ ալիքների ազդեցությամբ օրգանիզմում առաջանում են երկու կարգի փոփոխություններ՝ հարմարվողական և անտարբանական:

⁴ Տես *С. Г. Галстян. О трансдетерминирующем действии микроволнового излучения. «ՀՀ Զինված ուժերի կազմավորման 20 ամյակին նվիրված գիտաժողովի գիտական հոդվածների ժողովածու»*: Ե., 2012, էջ 13–23:

Հարմարվողական ռեակցիաները պայմանականորեն բաժանվում են հատուկ և ոչ հատուկ ձևերի: Հատուկ ռեակցիաները ճառագայթահարված օրգանիզմի պատասխանն են գերտաքացմանը ու բնորոշվում են շնչահեղձությամբ, քրտնարտադրությամբ, հաճախարտությամբ, անոթների լայնացմամբ: Ոչ հատուկ ռեակցիաների երևան գալը կենտրոնական նյարդային (ԿՆ) համակարգի ու ներզատիչ գեղձերի ռեֆլեկտոր պատասխանն է, որն սկզբում արտահայտվում է ԿՆ համակարգի գրգռմամբ, ներզատիչ գեղձերի գործունեության ուժեղացմամբ: Ապա նկատվում է հակադարձ պատկերը՝ ներզատիչ գեղձերի ռեֆլեկտոր գործունեության և ֆունկցիայի ընկճվածություն:

Վերջին տարիներին փորձարարական հետազոտություններով ապացուցվել է, որ ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքային ներգործության կենսաբանական հետևանքները կապված չեն հյուսվածքի կամ օրգանի տաքանալու հետ, քանի որ սովորական մեթոդներով ոչ մի տաքացում համանման երևույթներ չի առաջացնում: Հաստատվել է, որ ԳԲՀ ԷՄԴ էներգիայի հոսքի նվազագույն խտությունը, որն անհրաժեշտ է էական կենսաբանական փոփոխություններ առաջացնելու համար, զգալիորեն փոքր է այն ջերմային էներգիայի քանակից, որն օրգանիզմը տալիս է արտաքին միջավայրին:

Պակաս կարևոր չէ նաև այն, որ բազմաբջիջ օրգանիզմների համար գերբարձր հաճախականությամբ համախտանիշը կարող է կապված չլինել տվյալ օրգանի կամ համակարգի վրա դրա անմիջական ներգործության հետ:

Այժմ հրապարակված են որոշ աշխատություններ, որոնցում ցույց է տրվում, որ միկրոալիքները օժտված են տեղեկությանին հատկություններով: Հայտնաբերվել է ճառագայթահարման ինտենսիվությունից ԳԲՀ ԷՄԴ կենսաբանական ազդեցության հետևանքի կախման շեմի գոյությունը: Այլ կերպ ասած՝ ԳԲՀ ԷՄԴ—օրգանիզմ համակարգում տեղեկության կրողը հաճախականությունն է: Անչափ կարևոր է այն ենթադրությունը, որ կենդանի օրգանիզմների վրա միկրոալիքների տեղեկությանին ազդեցությունը կապված է որոշակի կառուցվածքների ստեղծման հետ, և որ բազմիցս կրկնվող ճառագայթահարումները չեն խանգարում բջիջների կիսվելուն:

ՄԻԿՐՈԱԼԻԷՍՅԻՆ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ⁵

ԳԲՀ ԷՄ դաշտով ախտահարումների անվանակարգումն ու դասակարգումը: ԳԲՀ ԷՄ դաշտով ախտահարումների անվանակարգման ու դասակարգման հարցերն առ այսօր վերջնականապես լուծված չեն: Այսպես. օրգանիզմում

⁵ Տես Ս. Գ. Գալստյան, Ա. Ս. Քոչարյան, Ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքների ներգործությանը ենթարկվող անձանց օրգանիզմներում աղաթվի համադրման որոշ հնարավոր մեխանիզմների մասին: «ՀԲ», 2013, հմ. 3–4, *H. Hinrikus, M. Bachmann, D. Karai, J. Lass. Mechanism of low-level microwave radiation effect on nervous system. “Electromagnetic Biology and Medicine”, 2017, Vol. 36, Issue 2; A. Suhhova, M. Bachmann, D. Karai, J. Lass, H. Hinrikus. Effect of microwave radiation on human EEG at two different levels of exposure. “Bioelectromagnetics”, May 2013, Vol. 34, Issue 4:*

միկրոալիքների ներգործությամբ առաջացված փոփոխությունները նշագրելու համար առաջարկվել են մի շարք միմյանց կրկնորոշ տերմիններ:

Գրականության մեջ ներկայացված բոլոր դասակարգումներից, մեր կարծիքով, առավել հաջողը 1973 թ. Մուրաշովի և Գորբանի առաջարկածն է.

1. հիվանդության ձևավորման շրջան.

A. սուր ախտահարումներ՝ ա. I աստիճան (թեթև), բ. II աստիճան (միջին), գ. III աստիճան (ծանր),

B. քրոնիկական ախտահարումներ՝ ա. սկզբնական (նախնական) երևույթներ, բ. I աստիճան (թեթև), գ. II աստիճան (միջին), դ. III աստիճան (ծանր),

2. վերականգնման շրջան:

Ներկայացված դասակարգման առանձնահատկությունը քրոնիկական ախտահարումների սկզբնական (նախնական) դրսևորումների առանձնացումն է: Գրականության տվյալների վերլուծությունն ու մեր կլինիկական դիտարկումները վկայում են, որ ԳԲՀ ԷՄ դաշտի քրոնիկական ներգործության սկզբնական շրջանը բնորոշվում է թույլ արտահայտված ախտանշաններով, հիմնական կարգավորող համակարգերի գործունեության ցուցանիշների անկայունությամբ, առաջացած փոփոխությունների դարձելիությամբ:

Գործնական առումով սկզբնական դրսևորումների առանձնացումը մեծ նշանակություն ունի ախտահարման հետագա զարգացումը կանխելու, ինչպես նաև բժշկական փորձագիտական որոշումներ կայացնելու տեսակետից. ԳԲՀ ԷՄ դաշտի գեներատորների հետ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը, լիարժեք հանգիստն ու բուժման ոչ մեծ կուրսը նպաստում են նշված ախտաբանական տեղաշարժերի (շեղումների) լրիվ վերացմանը:

Ոչ ջերմային ինտենսիվությամբ ԳԲՀ ԷՄԴ ներգործությանը ենթարկված անձանց առողջական վիճակը մեծ նշանակություն ունի միկրոալիքային ներգործության էությունը պարզելու համար: Թվում է, թե արտադրվող գեներատորների կառուցվածքը և շահագործման կանոնները գործնականում բացառում են սպասարկող անձնակազմի առողջության վրա միկրոալիքների անբարենպաստ ազդեցությունը: Սակայն համարվում է, որ շահագործման ընթացքում տեղի է ունենում ԳԲՀ ճառագայթների փոքր բաժնաչափերի քրոնիկական ներգործություն, որը կլինիկայի ձևավորման հիմքն է:

Գործնական հետաքրքրություն է ներկայացնում ախտահարման նշանների երևան գալու ժամանակի հարցը: Տարբեր խմբերում դրանք առաջանում են ներգործության սկզբից հաշվված տարբեր ժամանակամիջոցում (մի քանի ամսից մինչև մի քանի տարի): Ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ տվյալ տարբերությունները կախված են ոչ միայն օրգանիզմի անհատական հակազդակախությունից (ռեակտիվություն), այլև տատանման հաճախականությունից, ճառագայթահարման օրական տևողությունից ու ԷՀՆ մեծությունից:

Ոչ ջերմային ինտենսիվությամբ ԳԲՀ ազդեցությամբ պայմանավորված խանգարումների որոշարկումը հաճախ դժվար ու պատասխանատու խնդիր է:

Այն նախատեսում է տվյալ խմբի մարդկանց ոչ միայն սովորական մանրագնին կլինիկական հետազոտություն, այլև մասնագիտական անամնեզի (վերհուշի), ինչպես նաև աշխատանքի սանիտարահիգիենիկ պայմանների, այդ թվում՝ բաժնաչափական տվյալների, պարտադիր ուսումնասիրություն: Ընդ որում, հիվանդին անհրաժեշտ է նախ հետազոտել ընդհանուր կարգով, բացառել իրենց զարգացման որոշակի փուլում համանման կլինիկական պատկեր ունեցող ուրիշ հիվանդությունները, առավել ևս, որ ԳԲՀ ախտաբանությանը հատուկ կլինիկական ախտանշաններ չեն հայտնաբերվել:

ԳԲՀ ներգործության սկզբնական երևույթների կլինիկական զարգանում է աստիճանաբար: Ախտահարվածները զանգատվում են թուլությունից, շուտ հոգնելուց, գլխապտույտներից: Կարող են անհանգստացնել սրտի շրջանում ծագող սրտային բնույթի ցավերը: Օբյեկտիվ հետազոտությամբ կարելի է սրտանոթային և ԿՆ համակարգերում հայտնաբերել չափավոր փոփոխություններ: Միկրոալիքների հետ մասնագիտական շփման ընդհատումից համեմատաբար կարճ ժամանակ անց այս երևույթներն անհետանում են:

ԳԲՀ առաջին աստիճանի քրոնիկական ախտահարումը բնութագրվում է ինքնազգացողության վատթարացմամբ, թուլությամբ, արագ հոգնությամբ, հուզական տոնուսի նվազմամբ, գլխացավերով: Բացի այդ, կարող են անհանգստացնել դյուրագրգռությունը, քրտնարտադրությունը, սրտի շրջանում ծագող տհաճ զգացողությունը, սրտի նվաղումը, սրտխփոցը: Մարսողական օրգանների հիվանդություններ ունեցող անձինք զանգատվում են որովայնի շրջանում եղած ցավերից, ախորժակ չունենալուց, այրոցից: Այս փուլում առաջացող խանգարումների ախտանշանները ևս թույլ են արտահայտված: Դրանք բնորոշվում են գերքրտնարտադրությամբ, դեմքի վազոմոտորների խաղով, կայուն մաշկագրությամբ (դերմոգրաֆիզմ), ջլային ռեֆլեքսների աշխուժացմամբ: Սրտանոթային համակարգում նկատվում է անոթազարկի և արյան ճնշման ցուցանիշների անկայունություն՝ հազվաարտություն և հիպոտոնիա:

Հրապարակված են եզակի տվյալներ, որոնք վերաբերում են ներզատիչ գեղձերի գործունեությանը: Այսպես, առավել հաճախ նկատվում են վահանագեղձով ռադիոակտիվ յոդի կլանման ոչ զգալի (աննշան) խանգարում, շաքարային ծանրաբեռնվածության դեպքում կորի աղավաղում: Կարող է դիտվել սեռական կարողության ֆունկցիոնալ նվազում:

ԳԲՀ քրոնիկական ախտահարման երկրորդ փուլում հիվանդները զանգատվում են թուլությունից, քնկոտությունից, հիշողության կորստից, ցրվածությունից, մարմնի դիրքի փոփոխման ժամանակ գլխապտույտից, ուշագնացության վիճակներից, մագաթափությունից, սեռական անկարողությունից, սրտի անկանոն աշխատանքից, ֆիզիկական լարվածության դեպքում շնչարգելությունից, երբեմն՝ բնորոշ ստենոկարդիկ ցավերից, ախորժակ չունենալուց, սրտխառնոցից, մարսողական համակարգի գործունեության խանգարումներից, աչքերում տհաճ զգացողությունից: Օբյեկտիվ հետազոտությամբ հայտնաբերվում են արտահայտված գերքրտնարտադրություն, կարմիր մաշկագրություն, ջլային ռեֆլեքսների աշխուժացում, որովայնային ռեֆլեքս-

ների հյուծում, ձեռքի մատների դող, ցավի զգացողության նվազում: Սրտանոթային համակարգի հիվանդության դեպքում նկատվում են հազվասրտություն, սրտի սահմանների լայնացում, տոների խլություն, սրտի զագաթում սիստոլիկ աղմուկ, ԷՍԳ-ում մկանային կամ կորոնար փոփոխություններ: Աղեստամոքսային համակարգում ի հայտ են գալիս արտահայտված թերթթվայնություն և ստամոքսի մոտոր ֆունկցիայի խանգարում: Ոսկրածուծի հետազոտության ժամանակ նշվում են արյունաստեղծման գրգռման նշաններ: Պիզմենտային նյութափոխանակության փոփոխությունը բնութագրվում է անուղղակի բիլիռուբինի աննշան բարձրացմամբ: Դիտվում է նաև արյան մեջ գլյուկոզայի մակարդակի նվազում: Այսպիսով՝ նկատվում են մի շարք համակարգերի արտահայտված և կայուն խանգարումներ: Դրանք պահանջում են երկարատև, երբեմն էլ՝ կրկնակի բուժում: Այս փոփոխությունները միտված են ախտադարձության (ռեցիդիվ) անգամ ԳԲՀ ԷՄ դաշտի ազդեցության վերացումից հետո: Այդպիսի հիվանդները, որպես կանոն, կարիք ունեն տեղափոխվելու այլ աշխատանքի:

3-րդ աստիճանի քրոնիկական ախտահարումները հետաքրքրություն են ներկայացնում հիմնականում տեսական առումով: Դժվար է պատկերացնել, որ ԳԲՀ ԷՄ-ի հետ աշխատող մարդը կարող է ստանալ ծանր քրոնիկական ախտահարում: Նա պետք է աշխատանքից հեռացված լինի դեռ թեթև ու միջին ծանրության ախտանշանների առկայության դեպքում:

ՈԱԴԻՈՏԵՂՈՐՈՇՈՒՄԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

ԳԲՀ ԷՄ-ի գեներացնող ռադիոտեխնիկական միջոցների համառոտ բնութագիր: ԳԲՀ ԷՄ-ի ճառագայթող ռադիոտեխնիկական միջոցների հիմնական տարրերն են հաղորդակը, ֆիդերը, ալիքատարը և ալեցիրը:

Հաղորդական ստեղծում է էլեկտրամագնիսական դաշտ, որը ֆիդերով կամ ալիքատարով հասցվում է ալեցիրին ու ճառագայթվում եթեր: Էլեկտրամագնիսական դաշտի տարածման բնույթը պայմանավորող հիմնական պարամետրներն են՝ հաղորդակի ելքային հզորությունը, ճառագայթման տևողությունը, իմպուլսների հաղորդման կրկնության պարբերությունը և հաճախականությունը, ալիքի աշխատանքային հաճախականությունը (երկարությունը), ալեցիրի երկրաչափական չափերը, ճառագայթման ուղղվածության տրամագիրը, ուղղորդված գործողության և ուժեղացման գործակիցները:

Անձնակազմի ու բնակչության վրա ԷՄ դաշտերի ներգործության առավելագույն թույլատրելի մակարդակը (ԱԹՄ) սահմանվում է տարբերակված՝ ըստ հաճախականությունների տիրույթի, ազդեցության տևողության և ներգործության բանելակարգի (անընդհատ և ընդհատ):

Այն դեպքերում, երբ անձնակազմը ենթարկվում է միաժամանակ աշխատող մի քանի ռադիոտեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական դաշտերի ներգործությանը, կատարվում է ներգործության գումարային արժեքի որոշում:

Ռադիոտեխնիկական միջոցների շահագործման հետ անմիջական կապ չու-

մեցող անձանց մեծ բաժնաչափերով ճառագայթահարում տեղի է ունենում այն դեպքերում, երբ ռադիոտեխնիկական միջոցները գտնվում են զինվորական ավաններից ու բնակավայրերից ոչ բավարար հեռավորության վրա, երբ ավեցիրային համակարգերի ճառագայթման գոտում հայտնվում են շենքեր, զորանոցներ, շտաբներ և մարդկանց գտնվելու այլ վայրեր:

Ստացիոնար և շարժական ՌՏԿ-ների շահագործման դեպքում կարող են անբարենպաստ պայմաններում հայտնվել այն զինծառայողները, որոնց շարժման երթուղին հատում է ավեցիրային համակարգերի ճառագայթման գոտիները, կամ որոնք հերթապահում են համապատասխան պաշտպանական էկրաններ չունեցող պահակակետում: Ընդսմին մակաբույծ ճառագայթումը կարող է ներթափանցել պաշտպանիչ թերթերի արատավոր տեղերով կամ դրանց միջև եղած ձեղքերով, ռադիոսարքավորանքի դիտապատուհաններով և շերտավարագույրներով: Երբ ֆիդերային գծերը չունեն էկրանավորում, թույլ հզորությամբ սարքավորանքն էլ կարող է դառնալ բարձր լարվածությամբ ԷՄ դաշտի առաջացման պատճառ:

Տարբեր նախանշանակման ռադիոտեխնիկական միջոցների անվտանգ շահագործման և անձնակազմի ու բնակչության վրա ԷՄԴ ներգործության ԱԹՄ ապահովման նպատակով ձեռնարկվում է հատուկ միջոցառումների համալիր, որոնք ըստ բնույթի կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ կազմակերպական և ինժեներատեխնիկական:

Կազմակերպական միջոցառումը այնպիսի աշխատակարգի մշակումն է, որի շնորհիվ հաջողվում է նվազարկել ԷՄԴ-ների ներգործության պայմաններում աշխատողների գտնվելու ժամանակը և բացառել բարձր մակարդակներ ունեցող ԷՄ գոտիներում նրանց գտնվելու հավանականությունը:

Ինժեներատեխնիկական միջոցառումների հիմքում ԷՄԴ-ների աղբյուրների ու ճառագայթահարվող օբյեկտների առավել խելամիտ փոխդասավորությունն է՝ մակաբույծ ճառագայթման առաջացումը բացառող պայմանների ստեղծմամբ, ինչպես նաև կոլեկտիվ և անհատական պաշտպանության միջոցների օգտագործմամբ:

Ռադիոտեխնիկական միջոցների սխեմաներում, բլոկներում, հանգույցներում ռադիոհերմետիկության, ավեցիրային-ֆիդերային համակարգերի առանձին տարրերում հուսալի էլեկտրական կապերի ապահովումը կանխում է էլեկտրամագնիսական էներգիայի չնախատեսված կորուստները և դրանով անձնակազմը պաշտպանում մակաբույծ ճառագայթման ներգործությունից:

Էլեկտրամագնիսական դաշտերից պաշտպանության հիմնական մեթոդներից մեկը ինչպես ռադիոտեխնիկական միջոցի կամ դրա առանձին տարրերի, այնպես էլ աշխատատեղերի էկրանավորումն է՝ հուսալի հողակցմամբ:

Ռադիոտեխնիկական միջոցները կամ դրանց տարրերը կարող են տեղադրվել էկրանավորված խցիկներում: Հոսանքի մակածումից անձնակազմի ախտահարման կանխարգելման նպատակներով մետաղյա խողովակները, օդափոխիչ օդատարները և հաղորդակցման մյուս ինժեներական միջոցները, ինչպես

նաև խցիկները պատող կառուցվածքները, եթե դրանք արված են մետաղական թերթերից կամ ցանցերից, պարտադիր կերպով միացվում են պաշտպանական հողակցիչ համակարգին: Նման խցիկներում մշտական աշխատատեղեր լինելու դեպքում դրանք պատող կառուցվածքները նպատակահարմար է ներսից ծածկել ռադիոկլանիչ նյութերով:

Այն գորամասերում, ռազմաուսումնական հաստատություններում, կազմակերպություններում, որտեղ օգտագործվում են ռադիոտեխնիկական միջոցներ, ԳԲՀ ԷՄԴ ներգործությունից անձնակազմի և բնակչության պաշտպանության համար սահմանվում է մշտական հսկողություն:

Անձնակազմի ու բնակչության պաշտպանվածության մասին առաջին հերթին դատում են ըստ մարդկանց գտնվելու վայրում ԷՄԴ՝ հաշվարկային ու գործիքային մեթոդներով որոշված մեծության և ներգործության տևողության: Չափումները կատարում են ինժեներատեխնիկական անձնակազմից նշանակված անձինք: Ընդամին չափումը կատարվում է տվյալ միջոցների շահագործման այն իրական բանելակարգերում, որոնցում հնարավոր է մարդկանց առավելագույն ճառագայթահարումը:

Անվտանգության վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգումն ու հրահանգավորումը պետք է կատարվեն պարբերաբար՝ կես տարում մեկ անգամից ոչ պակաս:

Ռադիոտեխնիկական դիրքերի ծավալման դեպքում ԳԲՀ ԷՄԴ ներգործությունից անձնակազմի և բնակչության պաշտպանության համար ռադիոտեխնիկական միջոցները տեղակայում են զինվորական ավաններից և բնակավայրերից անվտանգ հեռավորության վրա, աշխատատեղերը կազմակերպում են ռադիոստվերի գոտում գտնվող հատվածներում, ավեցիրային համակարգերը տեղադրում են անհրաժեշտ բարձրության վրա:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԳԲՀ ԷՄԴ-ից անձնակազմի և բնակչության պաշտպանության միջոցառումների կանխարգելիչ սանիտարական հսկողությունը կազմակերպվում է ռադիոտեխնիկական միջոցների տեղի ընտրության, իրենց կազմում ռադիոտեխնիկական միջոցներ ունեցող օբյեկտների նախագծման և շինարարության (վերակառուցման), ինչպես նաև շահագործման հանձնման ժամանակ:

Ռադիոտեխնիկական միջոցների տեղակայման համար տեղի ընտրության փուլում նախագծողական սանիտարական հսկողությունն իրականացնում է հատուկ հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են պատվիրատուի, նախագծող կազմակերպության, գլխավոր կապալառուի և բժշկական ծառայության ներկայացուցիչներ: Հանձնաժողովում բժշկական ծառայությունը ներկայացնում է սանիտարահամաճարակային անվտանգության ծառայության այն աշխատողը, որն ունի ԷՄԴ ներգործությունից անձնակազմի և բնակչության պաշտպանության գծով անհրաժեշտ գիտելիքներ:

Ռադիոտեխնիկական օբյեկտների նախագծային փաստաթղթերի քննարկման

ընթացքում նպատակահարմար է մարդկանց գտնվելու վայրերում կատարել էլեկտրամագնիսական դաշտի մեծության ընտրողական ստուգողական հաշվարկումներ, ինչպես նաև որոշել սանիտարապաշտպանիչ գոտիների և կառուցապատման սահմանափակման գոտիների ընտրության ճշտությունը:

ԸՆԹԱՑԻԿ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրամագնիսական դաշտերի ներգործությունից անձնակազմի և բնակչության պաշտպանության միջոցառումների ընթացիկ սանիտարական հսկողությունը կատարում են սանիտարահամաձարակային անվտանգության հիմնարկների մասնագետները և բուժծառայության բանակային օդակի բժիշկները: Դա ենթադրում է այն օբյեկտների իմացություն, որտեղ օգտագործվում են ռադիոտեխնիկական միջոցները և իրագործվում է դրանց պարբերական սանիտարահիգիենիկ հետազոտությունը:

Սանիտարահիգիենիկ հետազոտության ընթացքում ուսումնասիրման ենթակա հարցերի ցանկն զգալիորեն կանխորոշվում է օբյեկտում օգտագործվող ռադիոտեխնիկական միջոցների դերով և դրանցով կատարվող աշխատանքների բնույթով: Անձնակազմի աշխատատեղերում էլեկտրամագնիսական դաշտերի մեծության չափումները կատարվում են ռադիոտեխնիկական միջոցների շահագործման իրական պայմանների հաշվառմամբ: Տարբեր մակերևույթներից բազմակի անդրադարձումներով պայմանավորված՝ էլեկտրամագնիսական էներգիայի տարածման բարդ բնույթի, ինչպես նաև մակաբույծ ճառագայթումների առկայության պատճառով աշխատանքային շինություններում էլեկտրամագնիսական դաշտերի մեծության՝ հաշվարկային մեթոդով որոշումը համարվում է աննպատակահարմար:

Ռադիոտեխնիկական միջոցների դիրքերում և դրանց սահմաններից դուրս էլեկտրամագնիսական իրավիճակի գնահատումը կատարվում է տեղանքի այն հատվածների համար, որոնք գտնվում են ռադիոտեսանելիության գոտիներում կամ ռադիոթափանցելի էկրաններից այն կողմ (անտառատնկարկներ, փայտե կառույցներ և այլն): Ռադիոտեխնիկական միջոցների աշխատանքի ռադիոստվերում կամ պատասխանատու հատվածներից դուրս գտնվող գոտիներում էլեկտրամագնիսական դաշտերի մեծությունը կարող է չորոշվել:

Սանիտարահիգիենիկ հետազոտությունը, որը կատարում են սանիտարահամաձարակային անվտանգության հիմնարկի մասնագետները, որպես կանոն, ձևակերպվում է համառոտ ակտի ձևով: Նպատակահարմար է ակտում արված առաջարկությունները ձևակերպել հստակ ու հիմնավորված կերպով, ակտին կցել սանիտարահիգիենիկ հետազոտության ընթացքում կատարված գործիքային չափումների արձանագրությունները:

ՌԱԴԻՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ռադիոտեխնիկական միջոցներով աշխատող զինծառայողների և ծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունը ներառում է բուժկանխարգելիչ միջոցառումների համալիր:

Աշխատանքի ընդունվելու (պաշտոնի նշանակվելու) կապակցությամբ բուժ-զննման ժամանակ լուրջ ուշադրություն է դարձվում հակացուցումների վրա: Տարին մեկ անգամից ոչ պակաս կատարվող հերթական բուժզննման խնդիրն է ԷՄԴ-ի հետ շփվողների շրջանում մասնագիտական հիվանդությունների սկզբնական ախտանշանների վաղ հայտնաբերումը և իրագործվող բուժկանխարգելիչ միջոցառումների արդյունավետության վերահսկողությունը:

Բուժզննումը կատարում են ռազմաբժշկական հանձնաժողովները, որոնց կազմում ընդգրկվում են թերապևտ, նյարդաբան, օտորինոլարինգոլոգ, ակնաբույժ, վիրաբույժ: Յուրաքանչյուր զննման ժամանակ կատարվում է արյան, ինչպես նաև մեզի ու կղանքի ընդհանուր հետազոտություն: Ըստ մասնագետ բժիշկների եզրակացության՝ զննվողի բժշկական քարտում գրառվում են հիմնական և ուղեկցող հիվանդությունների ախտորոշումները, ԷՄԴ-ների աղբյուրներով աշխատանքին նրա պիտանիությունը, ինչպես նաև անհատական բուժառողջարարական միջոցառումների անցկացման հանձնարարականները:

Հերթական զննումների միջև եղած ժամանակահատվածում առողջական վիճակում տեղի ունեցած փոփոխությունների ժամանակին հայտնաբերման, բուժառողջարարական միջոցառումների արդյունավետության վերահսկման նպատակով ռադիոտեխնիկական միջոցներով աշխատող անձնակազմը տարվա ընթացքում մեկ անգամից ոչ պակաս ենթարկվում է մասնագետ բժիշկների՝ թերապևտի, նյարդաբանի, ակնաբույժի բուժհետազոտության: Կատարվում է ԷՍԳ, հետազոտվում է արյունը:

Ռադիոտեխնիկական միջոցներով աշխատողների առողջական վիճակի բոլոր ձևերի բուժհսկողության ժամանակ առանձնակի ուշադրության են արժանանում այն անձինք, որոնք ենթարկվել են ԱԹՍ-ն գերազանցող ինտենսիվությամբ էլեկտրամագնիսական դաշտերի ներգործությանը:

Մասնագիտական հիվանդության հայտնաբերման դեպքում զորամասի բժշկական ծառայության պետը այդ մասին անհապաղ զեկուցում է զորամասի հրամանատարին, իր վերադասին և սանիտարահամաձարակային հիմնարկի մասնագետների հետ համատեղ քննարկում է պատճառներն ու հանգամանքները:

Վերը շարադրվածի կատարման շնորհիվ՝

- կանխվում են վաղաժամկետ զորացրման դեպքերը, նվազում նոր կադրերի պատրաստման համար ծախսերը, քանի որ առողջության պահպանումը բազմապատիկ արդյունավետ և օգտակար է, քան հիվանդության բուժումը, հատկապես՝ երբ գործ ունենք մարտական ծառայություն իրականացնող զինծառայողի առողջության խնդրի հետ,
- պահպանվում է ՀՀ և Արցախի տարածքի անվտանգությունն ապահովող զինծառայողների առողջությունը:

МЕДИЦИНСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ БЕЗОПАСНОСТИ ЛИЦ,
ИМЕЮЩИХ ПРОФЕССИОНАЛЬНЫЕ КОНТАКТЫ
С ЭЛЕКТРОМАГНИТНЫМ ПОЛЕМ СВЕРХВЫСОКОЙ ЧАСТОТЫ,
КАК ФАКТОР СОХРАНЕНИЯ ВЫСОКОЙ БОЕСПОСОБНОСТИ

*С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор,
начальник Военно-медицинского факультета ЕГМУ*

РЕЗЮМЕ

Одним из важнейших направлений обеспечения безопасности военной службы (БВС) является медицинское. Медобеспечение БВС (МО БВС) включает медицинский осмотр в целях отбора по состоянию здоровья, профилактические мероприятия, в том числе – диспансерный контроль, обеспечение санитарно-гигиенических условий службы и быта.

В связи с распространенностью средств РЭБ, многие из которых используют СВЧ-излучение, важной проблемой МО БВС является защита от его опасного воздействия на организм. В этих целях осуществляются: улучшение санитарно-гигиенических условий жизнедеятельности л/с, в том числе: оборудование рабочих мест; диспансерное наблюдение за состоянием здоровья военнослужащих; оценка текущих адаптационных процессов в организме; своевременное выявление предшествующих болезни процессов; осуществление необходимых лечебно-профилактических мероприятий.

THE MEDICAL SAFETY OF PERSONS PROFESSIONALLY
CONTACTING WITH SUPERHIGH-FREQUENCY (SHF)
ELECTROMAGNETIC FIELD AS A FACTOR OF RETAINING
HIGH COMBAT EFFECTIVENESS

*S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, M. D., Professor,
Head, Military Medical Department, YSMU*

SUMMARY

One of the most important directions about ensuring the military service safety (MSS) is the medical. Medical support for the Military Service Safety (MS MSS), first of all, includes the medical examination for the selection on health status; preventive measures, including the regular medical check-up; provision of sanitary and hygienic conditions.

Regarding the prevalence of the EW tools, many of which apply SHF radiation, an important problem of the MS MSS is the protection from its hazardous effect on the human organism. For this purpose the following activities are done: improvement of sanitary and hygienic conditions of vital activities of the personnel, including: workplace equipment; regular medical check-up of the servicemen's health; assessment of ongoing adaptation processes in the human organism; timely detection of processes preceding the diseases; implementation of the necessary therapeutic and preventive measures.

ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ

Ա. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ կազմգորահավաքային
վարչության պետի տեղակալ

Ջինվորական ծառայության անվտանգությունը այնպիսի պայմանների համախումբ է և զինվորական ծառայության կատարման այնպիսի կարգ, որոնք դեպքում ապահովվում է ամբողջ անձնակազմի և յուրաքանչյուր զինծառայողի, տեղի բնակչության ու նրա ունեցվածքի և շրջակա միջավայրի պաշտպանվածությունը զինվորական ծառայության այն վտանգավոր ու վնասակար գործոնների ազդեցությունից, որոնք ծագում են զորքերի ամենօրյա գործունեության ընթացքում¹:



Ընդհանուր առմամբ ՁԾԱ-ն ներառում է՝ միջուկային անվտանգությունը, ճառագայթային, քիմիական և կենսաբանական անվտանգությունը, թռիչքների անվտանգությունը, նավարկության անվտանգությունը, ՁԾԱ-ն արտակարգ իրավիճակների պայմաններում, ՁԾԱ-ն զորքերի (ուժերի) առօրյա գործունեության ընթացքում²:

Համառոտակի քննարկենք ՁԾԱ-ի ապահովման նկատմամբ մոտեցումները աշխարհի որոշ առաջատար պետություններում:

ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԱՄՆ-Ի ՁՈՒ-ՈՒՄ

ԱՄՆ-ի ՁՈՒ-ում դժբախտ պատահարների թիվը 9 անգամ փոքր է, քան արդյունաբերությունում³: Ռիստի ԱՄՆ-ում շատ մեծ ուշադրություն է դարձվում զինվորական ծառայության անվտանգության և այդ անվտանգության ապահովման համակարգի արդյունավետության հարցերին: Նկատենք, որ «զինվորական ծառայության անվտանգություն» տերմինի փոխարեն ԱՄՆ-ի

¹ Տես «Безопасность военной службы». «Министерство обороны РФ» (http://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details_rvsn.htm?id=12634@morfDictionary); նաև՝ ««Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2011 թ. ապրիլի 14-ի հմ. ՀՕ-124 օրենքը, հոդ. 441 (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4186&lang=arm>):

² Տես «Виды безопасности военной службы, направления ее обеспечения». «ArmyRus.ru» (http://armyrus.ru/index.php?option=com_content&task=view&id=584):

³ Տես *Chad Storlie*. 'Let's Be Careful Out There': What the U.S. Army Can Teach Employers About Working Safely, 13.08.2014 (<http://ehstoday.com/safety-leadership/let-s-be-careful-out-there-what-us-army-can-teach-employers-about-working-safely>):

ԶՈՒ-ում գործածվում է «անվտանգություն և մասնագիտական առողջապահություն» (ԱՄԱ, “*Safety and Occupational Health*”) տերմինը:

Ներկայացնենք ԱՄՆ-ի ԶՈՒ-ում զինվորական ծառայության անվտանգության ապահովման կազմակերպական սկզբունքները:

Ամերիկյան բանակի զորամասերում գործում են ԱՄԱ-ի կենտրոններ, իսկ որտեղ դրանց գործառնությունների կատարման նպատակով անձնակազմ հասկացված է, տվյալ գործառնությունները հանձնարարվում են որպես լրացուցիչ պարտականություն⁴:

Այդ կենտրոնները, գործելով հրամանատարության նշանակած՝ ԱՄԱ-ի ղեկավարի ուղղորդմամբ, պետք է բաղկացած լինեն անվտանգության տեխնիկայի միջոցառումների պլանի՝ ստորև բերվող հիմնական ուղղությունների գծով տարրերից, որոնք համապատասխանում են սարքավորանքի կամ գործունեության բնույթին. *հիմնական աջակցող գործունեություն*, ներառյալ՝ աշխատանքային տեղերի ստուգում, շինարարական նախագծի, պայմանագրերի ու կապալառուի գործողությունների փորձագիտական գնահատում, *փոխադրումներ*, ներառյալ՝ ավտոմոբիլային (անձնական օգտագործման, զինվորական կամ այլ ավտոմոբիլային տրանսպորտ), երկաթուղային և օդային փոխադրումներ, *գորավարժարանի օգտագործում*, *զինամթերքի և պայթուցիկ նյութերի* (սովորական, քիմիական և միջուկային) *օգտագործում և պահում*, *զինվորական պատրաստում*, *մարտավարական վարժանքներ*, *ռազմատուժնական հաստատություններ*, *ավիացիոն*, *արդյունաբերական և արտադրական պատահարների հետաքննություն և հաշվետվությունների ներկայացում*, *վտանգավոր նյութերով աշխատանք*, *հետազոտություն*, *մշակում*, *փորձարկում և գնահատում*, *համակարգի անվտանգության մշակում և կառավարում*, *աշխատանք իրնացնող և ոչ իրնացնող ճառագայթման օգտագործմամբ*, *բնակչության անվտանգություն*, *ընտանիքի անդամների*, *խնամարկյալների հետ տեղի ունեցող և հետծառայողական պատահարների կանխում*, *կորուստների կանխարգելման այլ բաղադրիչներ*⁵:

Բանակի տարբեր մակարդակներում գործում են անվտանգության և մասնագիտական առողջապահության խորհրդատվական խորհուրդներ՝ կազմված ղեկավար աշխատողներից, զինվորական ու քաղաքացիական անձանցից: ԱՄԱ-ի խորհրդատվական խորհուրդը ղեկավարում է հրամանատարը կամ նրա նշանակած անձը: Խորհուրդը պարբերաբար նիստեր է գումարում և հրապարակում դրա արձանագրությունները: Այս խորհուրդները պետք է առաջարկություններ ներկայացնեն հրամանատարին և նրա կամ իրենց որոշմամբ կատարեն ԱՄԱ-ին վերաբերող լրացուցիչ առաջադրանքներ⁶:

ԱՄԱ-ի գծով ղեկավարը այն հիմնական պաշտոնյան է, որը պատաս-

⁴ Stu “The Army Safety Program” (Army Regulation 385–10), 23 May 1988, P. 7 (<http://usahec.contentdm.oclc.org/cdm/ref/collection/p16635coll11/id/1520>):

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես նույն տեղում:

խանատու է անվտանգության ծրագրի պլանավորման, մշակման, համադասման, գնահատման և իրագործման նպատակով տեխնիկական խորհրդարկունների համար: Նրա կարևոր գործառնություններն են.

- ԱՄԱ-ին առնչվող հարցերի վերաբերյալ հրամանատարին գեկուցումների ներկայացում և խորհրդարկում, օգնություն հրամանատարության բոլոր բաղադրատարրերին՝ անվտանգության ռազմավարական պլանով (ԱՌՊ) իրենց առաջադրված խնդիրների կատարման գործում,
- անվտանգության ծրագրի ղեկավարում և տեխնիկական վերահսկում, ներառյալ՝ այն պարամետրների որոշումը, որոնցով լավագույնս հնարավոր է գնահատել ԱՌՊ-ի կատարման և հրամանատարության անվտանգային նպատակների իրագործման ընթացքը,
- ԱՄԱ-ի համակարգի միասնականացման, ռիսկերի համալիր կառավարման և հրամանատարության՝ վթարների կանխմանն ուղղված գործունեության համար քաղաքականության և ընթացակարգերի մշակում⁷:

Բացի անվտանգության գործառնասային ստորաբաժանումներից (բաժիններից), ԱՄՆ-ի ԶՈՒ-ում գործում են նաև գորատեսակների անվտանգության կենտրոններ⁸: Դրանց կարևոր խնդիրներից է ոլորտային քաղաքականության ձևավորման համար առաջարկությունների մշակման նպատակով անվտանգության ապահովման բոլոր փուլերի վերաբերյալ հետազոտությունների կատարումը: Կենտրոնները նաև ուղիղ կապ են հաստատում ԶՈՒ-ի տվյալ տեսակի բոլոր մակարդակների հրամանատարությունների, աղետների կանխման աշխատանքներում ներգրավված այլ պետական հաստատությունների և մասնավոր կազմակերպությունների հետ:

Անվտանգության պահանջների վերաբերյալ հրահանգները մշակվում են գորատեսակների շտաբներում: Հրահանգավորումները կատարվում են միջոցառումներից առաջ, և այդ մասին պարտադիր նշում է կատարվում ստորաբաժանման հրահանգավորման մատյանում:

ԱՄՆ-ի ԶՈՒ-ում զինվորական ծառայության անվտանգության ապահովումը կատարվում է չորս հիմնական սկզբունքի համաձայն. 1) *Ընդհանուր անընդհատ ուսուցում*, որով ստեղծվում է ԶԾԱ-ի ապահովմանը վերաբերող գիտելիքների ու հմտությունների՝ բոլոր զինծառայողների և պետերի համար ընդհանուր հիմք⁹, 2) *անվտանգությունը յուրաքանչյուրի պարտականություն*–

⁷ Stu “The Army Safety Program” (Pamphlet 385–10). Department of the Army. Washington, 23 May 2008, PP. 20–21:

⁸ Stu, օրինակ, G. Cecchine, E. M. Sloss, C. Nelson, G. Fisher, P. R. Sama, A. Pathak, D. M. Adamson. Foundation for Integrating Employee Health Activities for Active Duty Personnel in the Department of Defense, 2009, PP. 21–29 (<http://www.jstor.org/stable/10.7249/mg799osd.10>); B. Л. Алешин. Обеспечение безопасности военной службы – ответственная задача военной реформы. «Военная мысль», 1998, № 1:

⁹ Stu *Չար Ստրոնջի*, Նշ. աշխ.: Բոլոր զինվորներն ու ղեկավարներն ստանում են ընդհանուր նախնական պատրաստում, ապա իրենց գործնական մասնագիտացման գծով ընդհանուր կրթություն:

մերի մաս է. օրն սկսվում է անվտանգության հարցերով հրահանգավորմամբ՝ մարտական հերթապահության, մարտական հրաձգության, բուժտարահանման ընթացակարգերի և տվյալ օրվա ամենավտանգավոր գործողությունների քննարկմամբ, 3) *անվտանգության պլանավորման հաստատված և համապիտանի ընթացակարգեր.* այն է՝ ռիսկերի կառավարում, որի փուլերն են ռիսկերի որոշարկումը, ռիսկերի մեղմացումը և ռիսկերի պլանավորման ընթացակարգերը, որոնք կատարվում են ստանդարտ առցանց գործիքների, վարժանքների և փորձի փոխանակման կիրառմամբ, 4) *խնդրի կատարման արդյունքների քննարկում.* ԱՄՆ-ի ՋՈՒ-ում ընդունված ընթացակարգ, որը ցանկացած վարժանքից և օպերացիայից հետո բոլոր մակարդակներում կատարում են բոլոր ղեկավարները:

ԱՄՆ-ի ՋՈՒ-ում գերակա է ծառայության անվտանգության նկատմամբ այն մոտեցումը, որ վտանգավոր առաջադրանքը պետք է կատարվի հանուն պետության բարօրության, իսկ անձնակազմն ու նյութական ռեսուրսները կենսականորեն կարևոր ազգային ակտիվներ են, որոնք պետք է պաշտպանվեն ցանկացած գնով¹⁰:

Այս մոտեցմամբ է իրագործվում նաև բանակայինների առողջության ամրապնդման քաղաքականությունը, որի տարրերից մեկը ինքնասպանությունների կանխարգելումն է: ԱՄՆ-ում իրագործվում է *Բանակում ինքնասպանությունների կանխարգելման ծրագիրը* (ԲԻԿԾ), որի նպատակն է գործող բանակում և պահեստազորում զինվորների, բանակային քաղաքացիական անձանց և նրանց ընտանիքների անդամների ինքնասպանությունների ռիսկի նվազեցման միջոցով նվազագույնի հասցնել ինքնասպանական վարքի դեպքերի թիվը: Այս ծրագրի իրագործման համար ստեղծվում են «Ինքնասպանությունների կանխման օպերատիվ խմբեր», որոնք պատասխանատու են ԲԻԿԾ-ի պլանավորման, կատարման և կառավարման համար: ԲԻԿԾ-ի հաջողությունը պայմանավորվում է նախաձեռնող, հոգատար և խիզախ զինվորների, բանակային քաղաքացիական անձանց և նրանց ընտանիքների անդամների առկայությամբ:

ԲԻԿԾ-ը բաղկացած է երեք փուլից՝ կանխարգելում, միջամտում և հետևյալների մեղմում: Առաջին փուլում ուշադրությունը կենտրոնացվում է անձնակազմի անդամների կյանքում ճգնաժամային պահերի հայտնաբերման և դրանց հաղթահարման համար օգնության ցուցաբերման վրա: Երկրորդ փուլում փորձ է արվում հսկողություն սահմանելու կոնկրետ անձանց նկատմամբ և նրանց օգնելու, որ ազատվեն ինքնասպանական խոհերից: Երրորդ փուլի անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ, այնուամենայնիվ, կատարվում է ինքնասպանության փորձ կամ ինքնասպանություն: Այս դեպքում միջոցներ են ձեռնարկվում ինքնասպանության փորձի կրկնությունը կամ ինքնասպանության ընդօրինակումը կանխելու, ստորա-

¹⁰ Տես նույն տեղում:

բաժանման համերաշխությունն ամրապնդելու և առաջադրանքի կատարման պատրաստականությունը մեծացնելու համար¹¹:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՂԻՆՈՒՄ

ՈՂԻ ԶՈՒ-ում ԶԾԱ-ի ապահովման վերաբերյալ ընդունված տեսակետները տրված են «ՈՂԻ ԶՈՒ-ում զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգում»¹²: Այստեղ սահմանվում են դրա *օբյեկտները*՝ զինծառայողներ, տեղի բնակչություն, շրջակա բնական միջավայր, և *սուբյեկտները*՝ զինվորական ղեկավարման մարմիններ և զինվորական պաշտոնատար անձինք:

Ըստ հայեցակարգի՝ ԶԾԱ-ի ապահովման հիմնական նպատակն է ՈՂԻ ԶՈՒ-ի գործունեության ընթացքում «զինծառայողների կենսականորեն կարևոր շահերի իրացումը, տեղի բնակչության առողջությանն ու ունեցվածքին, շրջակա բնական միջավայրին վնասի պատճառման կանխումը»¹³:

ԶԾԱ-ի ապահովման սկզբունքներն են՝ զորքերի ամենօրյա գործունեությունը կազմակերպելիս *մարդու կյանքի և առողջության գերակայության ճանաչումն ու ապահովումը, օրինականությունը, ձեռնարկվող միջոցառումների համապատասխանությունը ԶԾԱ-ի դեմ ուղղված սպառնալիքներին, ձեռնարկվող միջոցառումների համալիրության և անընդհատ կանխարգելիչ ուղղվածության, ազգային անվտանգության տարբեր տեսակների ապահովման համապետական ծրագրերի հետ այդ միջոցառումների օրգանական փոխկապվածության ապահովումը, ԶԾԱ-ի սուբյեկտների համար գործառույթների, լիազորությունների և պատասխանատվությունների հստակ տարանջատումը, զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասի դեպքում պետության կողմից նրանց իրավունքների և սոցիալ-տնտեսական ապահովման երաշխավորվածությունը*:

ՈՂԻ ԶՈՒ-ում ԶԾԱ-ի ապահովման ուղղություններն են՝ իրավականը, սոցիալ-տնտեսականը, կազմակերպատեխնիկականը, բարոյահոգեբանականը, բուժականը, հիդրոտեղեկութաբանականը, բնապահպանականը:

Հայեցակարգում սահմանված են զինվորական ծառայության անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները:

Հայեցակարգի նպատակներն իրագործվում են ԶԾԱ-ի սուբյեկտների համաձայնեցված գործունեությամբ: Զորամիավորումներում, միավորումներում և զորամասերում խաղաղ ժամանակ զինվորական ծառայության անվտանգության համար պատասխանատու են հրամանատարները (պետերը):

¹¹ Stu “Army Health Promotion” (Army Regulation 600-63). Washington, 14 April 2015, 4-4, 4-6:

¹² Stu «Концепция безопасности военной службы в Вооруженных силах Российской Федерации». Утверждена директивой МО РФ от 12 июля 1997 г. № Д-10 (<http://military.samgtu.ru/zakony/1/1-15.htm>):

¹³ Stu նույն տեղում:

ԶԾԱ-ի ապահովումը ղեկավարում են զինվորական ղեկավարման մարմինները: Դրանց հրամանատարները՝

- հավաքում, հաշվառում և մշակում են ԶԾԱ-ի վիճակի վերաբերյալ տեղեկությոթ, պատեհաժամորեն հայտնաբերում են անվտանգության սպառնալիքները և որոշում ԶԾԱ-ի պայմանները*,
- զորքերի ծառայությունը, ՌԴ ԶՈՒ-ի անձնակազմի գործունեությունը կազմակերպում են համագորային կանոնադրությունների և այլ նորմատիվ-իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ ապահովելով զինվորական ծառայության անվտանգությունը,
- ենթակա զորքերում ստուգում և գնահատում են ԶԾԱ-ի վիճակը, հսկում զինվորական ղեկավարման մարմինների և զինվորական պաշտոնատար անձանց գործունեությունը՝ ուղղված ԶԾԱ-ի ապահովմանը,
- ենթակա զորքերում պարբերաբար վերլուծում են ԶԾԱ-ի վիճակը, ամփոփում դրա ապահովմանն ուղղված աշխատանքների արդյունքները, ընդհանրացնում և տարածում ԶԾԱ-ի ապահովման առաջավոր փորձը, զինվորական պաշտոնատար անձանց հավաքների ընթացքում անցկացնում են ցուցադրական և հրահանգամեթոդական պարապմունքներ,
- հետաքննում են մահվան ելքով պատահարներն ու հանցագործությունները, անձնակազմի վնասման և զանգվածային հիվանդացությունների դեպքերը, զինծառայողների մեղքով քաղաքացիական անձանց մահվան փաստերը, բնապահպանական իրավախախտումները,
- ենթակա զորքերին պարբերաբար տեղեկացնում են ԶԾԱ-ի վիճակի, մահվան ելքով առավել ծանր պատահարների, դրանց բացառման վերաբերյալ որոշակի պահանջների մասին,
- զինծառայողների և տեղի բնակչության միջև բարիդրացիական հարաբերությունների պահպանման, զինվորական ավաններում և զինվորական օբյեկտներում ահաբեկչական գործողությունների, հասարակական անվտանգության և հասարակական կարգի դեմ այլ հանցագործությունների կանխման նպատակով համագործակցում են ՌԴ սուբյեկտների պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,
- ղեկավարում են ԶԾԱ-ի գծով հանձնաժողովների աշխատանքը,
- վաղօրոք որոշում են պատերազմական ժամանակ, ռազմական և արտակարգ դրություններում, ինչպես նաև բնական ու տեխնածին աղետների հետևանքների վերացման աշխատանքներում զորքերի ներգրավման, խաղաղապահական գործունեությանը մասնակցության դեպքերում ԶԾԱ-ի մակարդակի բարձրացման հիմնական միջոցառումները,

* ԶԾԱ-ի պայմաններ կոչվում են զինվորական ծառայության այն պայմանները, որոնք ապահովում են զինծառայողների, տեղի բնակչության և շրջակա բնական միջավայրի պաշտպանվածությունը զինվորական ծառայության անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներից:

ՀՀ ԶՈՒՌԻՄ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ.

ՉԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ
ԿԱՆԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



ՀՀ Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստ՝
նվիրված ՀՀ ԶՈՒ-ի մարտական պատրաստման,
զորքերի ղեկավարման, համալրման, զինվորական
կարգապահության ամրապնդման հարցերին.

(ծախից աջ՝ ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ գեներալ-լեյտենանտ
Մովսես Հակոբյան, ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյան,
Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Արտակ Զաքարյան)

2017 թ. հուլիսի 28

Դրվագներ ՀՀ ՋՈՒ-ի զորամասերից մեկում կազմակերպված
«Անվտանգության օր» միջոցառում-պարապմունքից







Դրվագ ՀՀ ՊՆ խաղաղապահ ինժեներական գումարտակում
ԱՄՆ-ի Կանզասի ազգային գվարդիայի հրահանգիչների
անցկացրած ականազերծման պարապմունքից



Դրվագ մարտադաշտում վիրավորներին բուժօգնության
ցուցաբերման պարապմունքից

– տեղի բնակչությանը իրազեկում են զորքերի տեղակայման վայրերում հաստատված և ՌԴ սուբյեկտների պետական իշխանության (տեղական ինքնակառավարման) մարմինների հետ համաձայնեցված սահմանափակող միջոցառումների մասին¹⁴:

Ձինվորական ծառայության անվտանգության հարցերը կարգավորող միասնական (ընդհանուր) նորմատիվ իրավական ակտ (օրենք) ՌԴ-ում չկա: Միևնույն ժամանակ, գործում են բազմաթիվ հրահանգներ, կանոնադրություններ և ձեռնարկներ, որոնք անվտանգության հարցերը կարգավորում են տարբեր իրավիճակներում՝ զորավարությունների, կրակային պարապմունքների, մարտական խնդիրների (պահակային ծառայություն, մարտական հերթապահություն և այլն) կատարման ժամանակ:

Ձինծառայողները ԶԾԱ-ի ապահովման հարցերից հանձնում են ստուգարքներ, որոնք անհրաժեշտ են, օրինակ, բարդ տեխնիկական միջոցի կառավարման (վարման) թույլտվություն ստանալու համար:

2009 թվականից կատարելագործվում է ԶԾԱ-ի ապահովման հանձնաժողովների աշխատանքը: Զորամասում այդ հանձնաժողովը արտահաստիքային մարմին է, որը վերլուծում է ԶԾԱ-ի վիճակն ու զորամասի հրամանատարին ներկայացնում առաջարկություններ հետևյալ ուղղություններով.

- զինվորական ծառայության անվտանգության ընդհանուր մակարդակ և դրա ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետություն,
- զինվորական ծառայության վնասակար (վտանգավոր) գործոնների պատեհաժամ վերհանում և կանխատեսում,
- մարտական հերթապահության (մարտական ծառայության), մարտական պատրաստման, սպառազինության, զինվորական ու ռազմական և հատուկ տեխնիկայի շահագործման, պահակային, ներքին և կայազորային ծառայության, հատուկ պարապմունքների և աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության աստիճանի բարձրացում,
- զինվորական փոխադրամիջոցների ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և դրանց մասնակցությամբ ճանապարհային միջադեպերի (վթարների) կանխում,
- զորամասերում (զինվորական հիմնարկներում) ԶԾԱ-ի ապահովման կառավարում¹⁵:

Հանձնաժողովը նաև պաշտոնատար անձանց համար կազմակերպում է զինվորական ծառայության անվտանգության ապահովման թեմայով գործնական ուսուցում, վարում բացատրական աշխատանքներ, ընդհանրացնում և տարածում ԶԾԱ-ի ապահովման առաջավոր փորձը:

¹⁴ Տես նույն տեղում:

¹⁵ Տես «Приложение к приказу Министра обороны Российской Федерации от 22.07.2015 N 444 «Об утверждении Руководства по обеспечению безопасности военной службы в Вооруженных Силах Российской Федерации», п. 69:

ՈՐՈՇ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ
ԲԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԶԾԱ-Ի ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Գերմանիայում մեծ ուշադրություն է դարձվում զինվորական ծառայության անվտանգության ապահովմանը, և այդ ոլորտի խնդիրների լուծման նկատմամբ կիրառվում է լավ մշակված գիտական մոտեցում:

Այսպես, Գերմանիայի պաշտպանության նախարարությունը Բունդեսվերում 2015 թ. նախաձեռնել է աշխատատեղերում առողջության պաշտպանության վիճակի վեցամսյա փորձնական հետազոտություն: Ընտրված 11 վարչություններում կատարվել է անձնակազմի ֆիզիկական ակտիվության, դիետայի, ստրեսի կառավարման և վնասակար կախվածությունների կանխարգելման վերաբերյալ հարցում: Ըստ ստացված արդյունքների՝ վարչությունների պետերը այն կարծիքի էին, որ առողջապահական միջոցառումների և ռազմական առաջադրանքների միջև կա անհամապատասխանություն, որը վերացնելու համար անհրաժեշտ է աշխատատեղերի առողջապահական խնդիրներով զբաղվող կազմակերպության և զինվորական ղեկավարության միջև հաստատել համագործակցություն¹⁶:

Գերմանիայի պաշտպանության նախարարությունը որպես զինվորական կարգապահության և Բունդեսվերի անձնակազմի բարոյահոգեբանական ոգու կարևոր ցուցիչ, ինչպես նաև զինծառայության վարկանիշի պահպանման նկատմամբ շատ զգայուն գործոն դիտում է բանակում ինքնասպանությունների կանխարգելման ոլորտում տիրող իրավիճակը:

Ի տարբերություն ԱՄՆ-ի ՋՈՒ-ից, Բունդեսվերում չկա ինքնասպանությունների կանխարգելմամբ զբաղվող մեկ միասնական մարմին: Մինևույն ժամանակ, ԳԴՀ ՋՈՒ-ում ինքնասպանությունների կանխման նպատակով ստեղծվել է գործում է համալիր կանխարգելիչ համակարգ, որը ներառում է կենտրոնական բուժսանիտարական ծառայությունը (ԿԲՄԾ), դաստիարակչական աշխատանքի մարմինները, ռազմակերպչական ծառայությունը, ինչպես նաև ՋՈՒ-ի նկատմամբ խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողության հաստատությունները:

ԳԴՀ պաշտպանության նախարարի հրամանով նշված համակարգի առաջատար կառույց է սահմանված ԿԲՄԾ-ն: Ինքնասպանությունների կանխման և հետվնասվածքային ստրեսների կանխարգելման նպատակով 2007–2008 թթ. ծառայությունը համալրվել է բժիշկ-հոգեբույժների 42 հաստիքներով: ԿԲՄԾ-ի մասնագետները պարտադիր հսկողական-հոգեբանական ստուգման (թեստավորման) են ենթարկում ձգնաժամային տարածաշրջաններից վերադարձած անձնակազմին:

ԳԴՀ ղեկավարության կարծիքով՝ ինքնասպանությունների կանխարգելման

¹⁶ Stu "Introducing occupational health management in the German Armed Forces". "Oxford Academic", 03.07.2017 (<https://academic.oup.com/heapro/article/doi/10.1093/heapro/dax035/3920554/Introducing-occupational-health-management-in-the>):

գործուն մեխանիզմ է ՁՈՒ-ի նկատմամբ խորհրդարանի և հասարակական կազմակերպությունների հսկողությունը: Այդ գործառույթը կատարող առանցքային պաշտոնյան Բունդեստագի՝ ՁՈՒ-ի գծով լիազորն է: Նրա պարտականություններն ու լիազորությունները սահմանված են պետության Սահմանադրության մեջ և մանրամասնորեն կարգավորվում են «Բունդեստագի՝ ՁՈՒ-ի գծով լիազորի մասին օրենքով», ինչպես նաև «Գերմանական բունդեստագի աշխատանքային կանոնակարգով»:

Լիազորի իրավասություններից են զորքերում հանկարծակի ստուգումների անցկացումը, մասնավորապես՝ առանց ԳՂՀ ՊՆ-ի իրազեկման: Ջորքեր կատարած այցելությունների ժամանակ լիազորն անձամբ կամ իր օգնականների (60 հոգի) միջոցով կատարում է բողոքների և հայտարարությունների վերաբերյալ զինծառայողների հարցում: Ընդ որում, օրենսդրությունը հրամանատարական կազմին արգելում է խոչընդոտել այդ աշխատանքին: Բացի այդ, Բունդեստագի ներկայացուցչի հետ զինծառայողների օպերատիվ կապի ապահովման համար Բունդեսվերի յուրաքանչյուր ստորաբաժանումում գործում են «լիազորի թեժ գիծ» և «վստահության հեռախոս»¹⁷:

Իսրայելի բանակում ևս զինվորական ծառայության անվտանգությանը հատկացվում է մեծ ուշադրություն: Այդ են վկայում հետևյալ փաստերը:

Հրածգարաններում պարապմունքները չեն սկսվում, քանի դեռ բարձրաձայն չեն ընթերցվել անվտանգության հրահանգները: Բոլոր մասնակիցների հրահանգավորումն ավարտվում է հարց ու պատասխաններով և նրանց իրազեկմամբ, թե հրածգարանում ինչ և ինչպես է կատարվելու: Բոլոր հրածգարաններում հերթապահում են անվտանգության առնվազն մեկ սպա, մեկ դիտորդ և մեկ ռադիոօպերատոր (նրանք չեն մասնակցում պարապմունքներին), ինչպես նաև բուժանձնակազմ՝ պատգարակով և բժշկական լրակազմով: Հարկ եղած դեպքում անվտանգությունն ապահովող անձնակազմի թիվն ավելացվում է:

Իսրայելցի զինվորը հրազենով երբեք չի «խաղում», երբեք չի ուղղում որևէ մեկի վրա և, եթե չկա օպերատիվ անհրաժեշտություն, պահունակը երբեք չի կցում հրազենին: Զինվորները հրացանը կրում են «ուսին» դրությամբ և փողաբերանը մշտապես դեպի ներքև ուղղված դիրքով¹⁸:

Ռազմական ոստիկանությունը խստորեն վերահսկում է ավտոմեքենաների

* Տողերիս հեղինակը Բունդեսվերի ակադեմիայում սովորելիս մեկշաբաթյա արակտիկա է անցել տվյալ պաշտոնյայի գրասենյակում:

¹⁷ Տես *Олег Алексеев*. Краткий обзор организации работы по профилактике суицидов в вооруженных силах основных развитых государств (по материалам открытой печати). «Наука-XXI»: Фонд содействия научным исследованиям проблем безопасности (<http://www.naukaxxi.ru/materials/187/>):

¹⁸ Տես “What is taught to the Israeli Army about carrying weapons and gun safety?”. “Quora”, 03.06.2015 (<https://www.quora.com/What-is-taught-to-the-Israeli-Army-about-carrying-weapons-and-gun-safety/>):

վարման ժամանակ անվտանգության կանոնների պահպանումը: Նույնիսկ հետևի նստատեղին առանց ամրագրուող երթևեկելու համար զինծառայողները պատժվում են¹⁹:

Զինվորական ծառայության անվտանգության բարոյահոգեբանական ապահովման օրինակ է այսպես կոչված «միայնակ զինվորների» հետ տարվող հոգեբանական և ռազմասոցիալական աշխատանքը: «Միայնակ» են կոչվում այն զինվորները, որոնց ծնողներն Իսրայելում չեն ապրում կամ ինչ-որ այլ պատճառով իրենց զավակի հետ մշտական կապ չեն պահպանում: Բանակն իր վրա է վերցնում «միայնակ զինվորների» նկատմամբ շեֆոթյունը. վճարում է կրկնակի ռոճիկ, բնակարանի վարձակալման համար գումար: Բարձրաստիճան զինվորականներն ու պաշտոնյաները, խորհրդարանի պատգամավորները պարբերաբար հանդիպում են այդ զինվորների հետ՝ իրենց աջակցությունն ու երախտագիտությունը արտահայտելու համար, տոն օրերին նրանց հրավիրում են իրենց տուն՝ միասին նշելու²⁰:

ՈՐՈՇ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը շարադրվածից կարելի է նկատել, որ ԱՄՆ-ում և ՌԴ-ում ՁԾԱ-ի ապահովման հարցում կան ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Այսպես. մեթոդաբանությունը՝ ռիսկերի կառավարումը, երկու պետությունում էլ նույնն է: Նույնն է նաև գլխավոր սկզբունքը՝ զինվորական ծառայության անվտանգության ապահովումը յուրաքանչյուրի պարտականությունն է:

Հիմնական տարբերությունը ՁԾԱ-ի ապահովման կազմակերպումն է: ԱՄՆ-ում այն խիստ մասնագիտացված է, զորամասերում գործում են հատուկ մարմիններ՝ անվտանգության կենտրոններ, թեպետ հրամանատարները ևս պատասխանատու են ՁԾԱ-ի ապահովման համար: ՌԴ-ում չկան անվտանգության կենտրոններ, և ՁԾԱ-ի ապահովման բոլոր միջոցառումների պատասխանատուները հրամանատարներն են ու զինվորական պաշտոնատար անձինք: Այսինքն՝ հրամանատարը պետք է կարողանա ՁԾԱ-ի հարցերում կողմնորոշվել համարյա մասնագետի նման:

Զի կարելի ասել, թե ԱՄՆ-ում ՁԾԱ-ի ապահովմանը ներկայացվում են ավելի խիստ պահանջներ, քան ՌԴ-ում: Սակայն ՁԾԱ-ի ոլորտի նկատմամբ մասնագիտական մոտեցումը թվում է ավելի հիմնավոր ու հեռանկարային, եթե նկատի ունենանք, որ այդ ոլորտը բազմաթիվ գիտաճյուղերի հատման կետում է, և կասկածից վեր է, որ զինվորական ծառայության անվտանգության ապահովումն առանձին մասնագիտություն է:

¹⁹ Տես «Израильская армия. Взгляд изнутри». «Блог Игоря Черноморца», 12.01.2015 (<http://igorchernomoretz.com/izrailskaya-armiya-vzglyad-iznutri.html>):

²⁰ Տես ««За роман между сослуживцами отправляют под трибунал»: откровенная история израильянки о службе в ЦАХАЛ». «ОБОЗРЕВАТЕЛЬ.УА», 28.03.2016 (<https://www.obozrevatel.com/society/47952-otkrovennaya-istoriya-izrailskoj-rezervistki-tsahal-armiya.htm>):

Ըստ այդմ, մեր կարծիքով, ՀՀ ՋՈՒ-ում ՋԾԱ-ի մակարդակը կտրուկ բարձրացնելու համար նպատակահարմար է.

- կատարելագործել ոլորտը կարգավորող օրենսդրական և իրավանորմատիվային բազան,
- որդեգրել ՋԾԱ-ի նկատմամբ համապարփակ մոտեցում՝ հիմքում դնելով այն բանի գիտակցումը, որ ՋԾԱ-ի ապահովումը սոսկ անվտանգության կանոնների պահպանումը չէ, այլ դա մի յուրահատուկ անվտանգային փիլիսոփայություն է, որը պետք է մշակվի ՀՀ ՋՈՒ-ի բարեփոխումների և «Ազգ–բանակ» հայեցակարգի համատեքստում,
- ՋԾԱ-ի ապահովման ընթացքում խստագույնս պահպանել գիտականության սկզբունքները,
- ՀՀ ՋՈՒ-ում ստեղծել զինվորական ծառայության անվտանգության ապահովման կենտրոն, որն ունենա փորձաքննական և հսկողական գործառույթներ, և որի ղեկավարը ենթակա լինի անմիջականորեն պաշտպանության նախարարին,
- ՋԾ և ՋԾԱ-ի վարչության կազմում ստեղծել անվտանգության բաժին, վերանայել վարչության կանոնադրությունը՝ հստակեցնելով և ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելով գործառույթները,
- բարձրացնել ՋԾԱ-ի նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտման համար պաշտոնատար անձանց պատասխանատվության աստիճանը,
- ապահովել ՋԾԱ-ի ուսուցման մակարդակը, խթանել այդ գիտակարգի նկատմամբ հետաքրքրությունը, ռազմական համալսարաններում մտցնել «Զինվորական ծառայության ռիսկերի կառավարում» առարկայի ուսուցումը,
- ՋԾԱ-ի ռիսկերի նվազեցման, պաշտոնատար անձանց պատասխանատվության մեծացման նպատակով տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ հրավիրել ՊՆ կոլեգիայի նիստ՝ «ՋԾԱ-ի վիճակը և հետագա բարելավման ուղիները» թեմայով:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ ВОЕННОЙ СЛУЖБЫ

*А. М. ПЕТРОСЯН, полковник, заместитель начальника
Организационно-мобилизационного управления ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

В ВС ведущих стран мира большое внимание уделяется проблемам обеспечения безопасности военной службы (БВС).

В войсковых частях США действуют отделы безопасности и профессионального здравоохранения (БПЗ), а в видах войск – центры безопасности. На различных уровнях армии действуют также консультационные советы по БПЗ, состоящие из руководителей, военных и гражданских лиц.

В ВС РФ ответственными за все мероприятия по обеспечению БВС являются командиры и военные должностные лица.

В Германии особое внимание уделяется вопросам предотвращения актов суицида, для чего разработан комплекс специальных мероприятий.

В Израиле акцент делается на воспитании сознательного отношения к соблюдению правил безопасности, в первую очередь – при обращении с огнестрельным оружием.

Анализ практики передовых стран позволяет выработать комплекс предложений по усовершенствованию системы БВС в ВС РА, в первую очередь – в ее законодательной, институциональной и воспитательно-образовательной сферах.

INTERNATIONAL EXPERIENCE IN ENSURING MILITARY SERVICE SAFETY

*A. M. PETROSYAN, Colonel, Deputy Chief, Organization and Mobilization Department,
the Main Staff, RA Armed Forces*

SUMMARY

In the armed forces of the world leading countries great attention is paid to the problems of ensuring the military service safety (MSS).

As for the US, in the military units there exist offices of safety and professional health (SPH), and in the service arms – safety centers. At various levels of the army, advisory councils on SPH, consisting of leaders, military staff and civilians, do operate.

Those responsible for ensuring the MSS in the Armed Forces of the Russian Federation are the commanders and military officials.

In Germany, special attention is paid to the issue of preventing acts of suicide, for which a set of special measures has been developed.

In case of Israel, the emphasis is on fostering a conscious attitude towards compliance with safety rules, first of all, when dealing with firearms.

The analysis of the practice of advanced countries allows to work out a set of proposals for the improvement of the system of military service safety in the RA Armed Forces, primarily in the legislative, institutional, as well as educational and teaching spheres.

ՍԱՐՔԻՆ ԵՎ ԿՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ՎԻՃԱԿՈՒՄ
ՀՐԱՋԵՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ

*Ա. Ռ. ԲԱՍԵՆՑՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի
ձգաբանական փորձաքննությունների բաժնի պետ,*

*Վ. Ի. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային
բյուրոյի ձգաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ,*

*Ա. Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի
ձգաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ,*

*Ա. Ա. ՍԻՐԵՎԱՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի
ձգաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ*

Ինչպես հայտնի է, զինվորական ծառայության հետ կապված վտանգներն ու ռիսկերն զգալի չափով պայմանավորված են զինված ուժերում, անգամ խաղաղ ժամանակ, ամենօրյա գործունեության մեջ հրազենի լայն կիրառմամբ: Իհարկե, հրազենի հետ վարվելու կանոնները ամրագրված են կանոնադրքերում և պահանջում են անվերապահ կատարում: Սակայն, ցավոք, դրանք միշտ չէ, որ խստագույնս պահպանվում են, ինչը դառնում է տարաբնույթ սանիտարական և նույնիսկ անդառնալի կորուստների պատճառ: Պահանջներից մեկն էլ վերաբերում է զենքի սարքինությանը: Կարծում ենք, որ ավելորդ չէր լինի զինծառայողներին պարզաբանել, թե դատախարակական տեսակետից ո՞ր հրազենն է կոչվում սարքին, և թե ինչպես է դատափորձաքննությամբ որոշվում զենքի սարքինության աստիճանը:

Դատաձգաբանական փորձաքննության պրակտիկայում լուծվող արատորոշիչ (դիագնոստիկ) հարցերի շարքում առավել հաճախ հանդիպում է հրազենի տեխնիկական վիճակի որոշման խնդիրը:

Հրազենի տեխնիկական վիճակի հարցը կարող է դատարանին և նախաքննական մարմնին հետաքրքրել բազմազան պատճառներով: Մասնավորապես՝ նման հարց կարող է լինել սարքի ճշգրիտ որակումը, որն անհրաժեշտ է, քանի որ հրազենը հափշտակելու, պահելու, կրելու, ձեռք բերելու և վաճառելու հետ կապված հարցերը հնարավոր չէ քննել՝ չունենալով դրա վիճակի և կրակելու համար պիտանիության վերաբերյալ տվյալներ:

Կրակելու համար հրազենի պիտանիություն ասելով հասկանում ենք հրազենի այնպիսի վիճակը, երբ դրանով հնարավոր է կատարել բազմաթիվ կրակոցներ: Տարբերում են մի քանի աստիճանի պիտանիություն.

➤ *լրիվ պիտանի*, երբ տվյալ զենքով հնարավոր է կրակել այն բոլոր բանեկարգերով, որոնք նախատեսված են ըստ դրա կառուցվածքի,

➤ *մասնակի պիտանի*, որը հրազենի տարբեր տեսակների համար սահմանվում է տարբեր կերպով.

- ավտոմատի և համակցված զենքի համար՝ պիտանի է կրակելու մեկ բանելակարգով (ԱԿՄ ավտոմատը կրակում է կամ միայն կրակահերթով, կամ միակի կրակոցներով),
- պիտանի է կրակելու այնպիսի բանելակարգով, որը կառուցվածքով նախատեսված չէ (ՊՄ ատրճանակը կրակում է կրակահերթով),
- պիտանի է կրակելու ոչ կանոնաբար (կրակում է խափանումներով և ուշացումով),
- պիտանի է կրակելու հատուկ հնարների կիրառման դեպքում, այսինքն՝ պիտանի է առանձին կրակոցներ կատարելու համար, ինչը նշանակում է, որ կոնկրետ զենքի նմուշով կարելի է կրակել միայն կառուցվածքով չնախատեսված հնարների կիրառմամբ,

➤ *զենքը կրակելու բացարձակապես պիտանի չէ*:

ԱՌԱՆՑ ԶԳԱՆԸ ՍԵՂՄԵԼՈՒ ԶԵՆՔՈՎ ԿՐԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Առանց ձգանը սեղմելու կրակոցը լինում է ինչպես պատահական, այնպես էլ դիտավորյալ:

«Պատահական կրակոցը» իրավաբանական հասկացություն է և նշանակում է այնպիսի կրակոց, որը կատարվել է զենքը ձեռքում բռնածի կամքին հակառակ՝ անկախ այն բանից, թե կրակոցը տեղի է ունեցել ձգանը սեղմելով, թե առանց դրա: Կրակոցի միտումնավորությունը՝ դիտավորությունը, որոշվում է քննությամբ:

Դատաձգաբանական փորձաքննության հետազոտության առարկան առավել հաճախ լինում է առանց ձգանը սեղմելու կրակոցի հնարավորության պարզումը:

Ե՛վ «հնարավորության», և՛ «պիտանիության» հարցը դրվում է ինչպես գործարանային արտադրության, այնպես էլ ինքնաշեն զենքերի առնչությամբ:

ՀՐԱԶԵՆԻ ՎԻՃԱԿԻ ՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հրազենի վիճակի փորձաքննությունը, որպես կանոն, իրար հետ շաղկապված հետևյալ հարցերի պատասխանների որոնումն է.

- սարքի^օն է արդյոք զենքը և կրակելու համար պիտանի,
- հնարավո՞ր է արդյոք ներկայացված հրազենով կոնկրետ հանգամանքներում կրակոց կատարել առանց ձգանը սեղմելու:

Հարկ է նշել, որ սարքինության հարցը կարող է վերաբերել ոչ միայն ամբողջ զենքին, այլև դրա առանձին մասերի, առավել հաճախ՝ զարկանաձգանային (հարվածաթողարկային) մեխանիզմին:

Համաձայն դատական փորձաքննության ընդհանուր մեթոդիկայի՝ հետազոտությունն սկսվում է **նախնական փուլով**: Հետազոտման ներկայացված զենքը մեծ վտանգի աղբյուր է, ինչը պայմանավորում է նախնական հետազոտության որոշակի առանձնահատկությունները, որոնք առնչվում են առաջին հերթին զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների պահպանմանը:

Վտանգն առաջանում է դեռ զենքն ստանալու պահին: Եթե փաթեթավորումը հնարավորություն է տալիս, ապա ցանկալի է, որ փորձագետը արտաքին զննման ժամանակ որոշի, թե զարկանաձգանային մեխանիզմի մասերը մարտական վիճակում են, թե պահպանական: Ըստ այդ հարցի պատասխանի որոշվում է, թե շրջապատի համար արդյոք անվտանգ է սենյակում զենքի գտնվելը:

Նախնական հետազոտության ընթացքում ուսումնասիրվում է նաև փորձաքննությունն նշանակելու մասին որոշման բովանդակությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքներին, որոնք առնչվում են զենքի առգրավման պայմաններին, հանցագործության կատարման պահից անցած ժամանակահատվածին և այլ տեղեկությունների: Պարզվում և անհրաժեշտության դեպքում ճշտվում է առաջադրված հարցերի բովանդակությունը, ճշգրտվում և սրբագրվում են ձևակերպումները: Ստուգվում է փաթեթավորման վիճակը, ապա փաթեթը բացվում է (որևէ խախտում հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է լուսանկարել): Պարզվում է ներկայացված օբյեկտի և որոշման մեջ նկարագրված օբյեկտի արտաքին տեսքերի համապատասխանությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում զարկանահարվածային և պահպանական մեխանիզմների տեխնիկական վիճակներին:

Այնուհետև ստուգվում է, թե լիցքավորված է արդյոք զենքը: Եթե լիցքավորված է, ապա պարտադիր կերպով պետք է լիցքաթափվի: Այս դեպքում անհրաժեշտ է հատուկ զգուշավորություն ցուցաբերել ողորկափող որսորդական հրացանների փողերի կտորման ժամանակ, քանի որ եթե դրանց փամփշտոցում կա փամփուշտ, և զարկանը սարքին չէ, ապա զարկանի ու հրապատիճի փոխազդեցության հետևանքով կարող է տեղի ունենալ կրակոց: Առանձնակի ուշադրություն և զգուշություն պետք է ցուցաբերել ինքնաշեն հրագենի լիցքաթափման ժամանակ, ընդ որում, պետք է ենթադրել զարկանաձգանային մասերի գործակցելիության ոչ հուսալիությունը:

Պետալային հետազոտությունն սկսվում է օբյեկտի զննությունից, որը կատարվում է երկու նպատակով.

- զենքի կառուցվածքային առանձնահատկությունների վերլուծություն, և այն հատկանիշների առանձնացում, որոնց հիման վրա հետազայում որոշվելու է զենքի տեսակը,
- հիմնական մասերի առկայության, դրանց փոխտեղակայման և վիճակի պարզում:

Հարկ է նշել, որ արատորոշիչ հետազոտությունների ժամանակ զենքի տեսակի որոշումը կատարվում է անկախ այն բանից, թե նման հարց դրված է, թե ոչ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ զենքի սարքինության որոշման համար պահանջվում է համեմատություն կոնկրետ տեսակի համար նախատեսված տեղեկատու նյութի հետ:

Ջննության սկզբում ուսումնասիրվում է օբյեկտի ընդհանուր կառուցվածքը՝ առանց դրա ապաստարման, ընդ որում, որոշվում է՝

- հիմնական դետալների առկայությունը (փող կամ փողեր, փողատուփ, փակադակ, զարկանածգանային մեխանիզմի տեսանելի մասեր, պահպանակներ, նշանառության սարքեր, իրան և այլ տարրեր),
- օբյեկտի չափային տվյալները,
- նմուշառման դաջվածքները, դրանց տեղակայումը, բովանդակությունը և նյութ դետալների վրա կրկնելիությունը:

Դրանից հետո զենքն ամբողջությամբ լուսանկարահանվում է:

Փողի խողովակում վերջին մաքրումից հետո կրակոցի արգասիքներ լինելու դեպքում ներկայացված զենքով կրակոցի կատարման վերաբերյալ տեղեկության պահպանման համար դրա միջով անցկացվում է վիրախծուծ, որը փաթեթավորվում է ծրարում, ապա կատարվում է համապատասխան գրառում:

Մի շարք դեպքերում նմուշառման դաջվածքները պարունակում են տեղեկություններ, որոնք վերաբերում են զենքի տեսակին և տրամաչափին, սակայն դրանք պետք է հաստատվեն հետագա հետազոտություններով:

Ջենքի հիմնական զննումից հետո սկսվում է դրա առանձին մասերի և մեխանիզմների զննությունը: Այս փուլում թույլատրվում է զենքի ոչ լրիվ քանդում, բայց միայն այն դեպքում, երբ կա համոզվածություն, որ հավաքելուց հետո զենքի վիճակը չի փոխվի:

Այս փուլում՝

- փողի զննությամբ որոշվում են նրա կառուցվածքային հատկանիշները (ողորկափող, ակոսավոր), վիճակը և արատների առկայությունը,
- չափվում է փողի երկարությունը և որոշվում է տրամաչափը,
- ուսումնասիրվում են փամփշտոցի ձևը, վիճակը, որոշվում են չափերը, որպեսզի պարզվի նշված փողի համար նախատեսված փամփշտի տրամաչափը,
- եթե պարզվել է, որ զենքի տրամաչափը 5,6 մմ է, ապա փամփշտոցի կենտրոնին համապատասխանությամբ զարկանի տեղադրմամբ որոշվում է օգտագործվող փամփշտի տիպը (կողային բռնկման, թե կենտրոնական հարվածի),
- որոշվում են փակման եղանակը, փակող մեխանիզմի վիճակը և կառուցվածքային առանձնահատկությունները,

- որոշվում են իրանի կամ այլ դետալների ձևը, չափերը և վիճակը,
- որոշվում են փամփշտակալի առկայությունը հաստատող կառուցվածքային առանձնահատկությունները, փամփշտակալի կառուցվածքն ու վիճակը,
- որոշվում են կրակահերթի տիպը և ձևը, պահպանիչ սարքերի առկայությունը,
- առադրվում են տարբեր մասերի վրա եղած համարները՝ մեկ զենքի նմուշին դրանց պատկանելությունը պարզելու համար,
- լուսանկարվում են նմուշառման դաջվածքները, դետալների համարները և հայտնաբերված արատները:

Տեղեկատու նյութի հետ հայտնաբերված հատկանիշների, տեխնիկական բնութագրերի և կառուցվածքային առանձնահատկությունների համեմատությանը հնարավոր է լինում հաստատել հետազոտվող հրազենի տեսակը և տրամաչափը:

Հետազոտության հաջորդ փուլը զենքի մասերի և դետալների փոխգործության ուսումնասիրությունն է, որի նպատակն է.

- հայտնաբերել թաքնված օտար առարկաներն ու դետալները, ինչպես նաև ձևախախտումները,
- որոշել դետալների անհրաժեշտ շարժունակությունը և դրանց հավաքման ճշտությունը:

Դրա համար ստուգվում է փակադակի շարժումը, ինչի միջոցով պարզվում է, թե արդյոք հրահանը ֆիքսվում է մարտական կամ պահպանական դիրքում: Ուժաչափի միջոցով չափվում է ձգանի վրա ազդող ուժը՝ սահմանված արժեքին համապատասխանությունը որոշելու համար: Ողորկափող զենքերի դեպքում ստուգվում է հրացանի փակումը ֆիքսելու հուսալիությունը և զարկանի (զարկանների) շարժունությունը: Մասերի և մեխանիզմների փոխգործության հիման վրա ընդունվում է փորձարարական կրակոցների անցնելու որոշում:

Փորձարարական կրակոցները կատարվում են երկու փուլով: Առաջին փուլում օգտագործվում են միայն հրապատիճներով լիցքավորված պարկուճները, իսկ երկրորդ փուլում՝ մարտական փամփուշտները:

Առաջին փուլն սկսվում է փորձարարական եղանակով կրակելու համար զենքի պիտանիության, կրակելու կոնկրետ ձևերի և հատուկ հնարների անհրաժեշտության որոշմամբ: Փորձարկումները կատարվում են բազմաթիվ անգամներ՝ փորձերի և կրակոցների թվի, ինչպես նաև կատարման առանձնահատկությունների արձանագրմամբ:

Այս փուլում որոշվում է նաև առանց ձգանի սեղմման կրակոցի կատարման հնարավորությունը: Փորձարարությունները կատարվում են բազմակի, և դրանց ընթացքում ստացված արդյունքները ևս արձանագրվում են:

Փորձարարությունների երկրորդ փուլը մարտական փամփուշտներով հրաձգությունն է: Եթե կրակոցները տեղի են ունենում առանց խափանումների, արվում է այն եզրահանգումը, որ զենքը սարքին վիճակում է: Եթե կրակոցների ընթացքում առաջանում են խափանումներ և խլաթման դեպքեր, կատարվում է զենքի մասնակի կամ լրիվ քանդում:

Ջենքի լրիվ քանդումը կատարվում է, որպեսզի՝

- պարզվի մարտական փամփուշտներով հետագա կրակոցների անվտանգությունը,
- վերջնական պատասխան տրվի զենքի սարքինության հարցին,
- պարզվեն կրակելու համար զենքի մասնակի պիտանիության կամ լրիվ անպիտանիության պատճառները,
- պարզվեն առանց ձգանի սեղմման կրակոցի կատարման հնարավորության պատճառները:

Ջենքի սարքինության հարցի վերջնական լուծման ժամանակ փորձագետը, օգտվելով տեղեկատու գրականությունից կամ առկա հավաքածուից, որոշում է բոլոր դետալների առկայությունը, դրանց բնութագրերը և հավաքման ճշտությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում մարտական, պահպանական և ձգանի նիստերի վիճակին: Հայտնաբերված արատները լուսանկարվում են:

Անհրաժեշտ է շեշտել, որ զենքի լրիվ քանդումը և մաքրումը կատարվում են առանց ձգանի սեղմման կրակոց կատարելու հնարավորությունը պարզելուց հետո: Ղա պայմանավորված է այն հանգամանքով, որ մեխանիզմի լրիվ քանդման և հավաքման դեպքում կարող է վերանալ այդպիսի կրակոցի պատճառը, ինչը կարող է փորձագետին հանգեցնել սխալ հետևությունների:

Փորձագիտական հետազոտությունն ավարտվում է մարտական փամփուշտներով կրակոցներով, որոնց թիվը ցանկալի է, որ լինի երեքից ոչ պակաս: Այս փուլում ձևավորվում է կրակելու համար զենքի պիտանիության մասին վերջնական եզրակացությունը:

Եթե հետազոտությունների ընթացքում պարզվի, որ զենքը կրակելու համար պիտանի չէ, փորձագետը չպետք է բավարարվի զենքը փորձաքննության ներկայացնելու պահին դրա վիճակի մասին եզրակացությամբ: Հետազոտության ամբողջականության ապահովման համար նա պարտավոր է պարզել կրակոցի համար զենքը պիտանի դարձնելու հնարավորությունը և կատարել դրա համար անհրաժեշտ գործողություններ:

Եթե զենքի առանձին մասերի ապաստարման և դրանց փոխգործության զննության ժամանակ պարզվում է, որ զենքը կրակելու համար ամբողջությամբ պիտանի չէ և հնարավոր չէ այն բերել կրակելու համար պիտանի վիճակի, փորձագետը կատարում է զենքի լրիվ ապաստարում և հանգում զենքի անսարքության մասին հետևության:

Հրագենի սարքինության հատկանիշները, ինչպես նաև սարքինության որոշ-

ման եղանակները, որոնք ներկայացված են սույն հոդվածում, բազմաթիվ անգամներ ստուգվել են գործնականում՝ ձգաբանական փորձաքննությունների կատարման ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ Զինված ուժերում զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգ», ՀՀ Պաշտպանության նախարարի 2010 թ. օգոստոսի 17-ի հմ. 916 հրամանի հավելված:
2. Դ. Ս. Զիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015:
3. Լ. Պ. Օհանյան, Կրիմինալիստիկա: Ե., 2004:
4. «Классификация ручного огнестрельного оружия» (ГОСТ 18392-73).
5. «Криминалистическая экспертиза», вып. V. Под общ. ред. В. С. Аханова. М., 1967.
6. А. С. Лазари, М. А. Сонис. Современные методы установления дистанции (расстояния) выстрела. «Экспертная техника № 100». М., 1988.
7. «Стрелковое оружие». Под ред. А. Б. Жук. М., 1992.
8. А.-Г. Попа. The importance of ballistics expertise in identifying the weapon used for committing a murder through shooting. “AGORA”, International Journal of Juridical Sciences, 2016, N 1 (<http://univagora.ro/jour/index.php/aijs>).

СОХРАНЕНИЕ ОГНЕСТРЕЛЬНОГО ОРУЖИЯ В ИСПРАВНОМ И ПРИГОДНОМ ДЛЯ ПРОИЗВОДСТВА ВЫСТРЕЛОВ СОСТОЯНИИ КАК ВАЖНОЕ СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ ВОЕННОЙ СЛУЖБЫ

А. Р. БАСЕНЦЯН, Начальник отдела баллистических экспертиз Национального бюро экспертиз НАН РА, В. И. ОГАНЕСЯН, эксперт отдела баллистических экспертиз Национального бюро экспертиз НАН РА, А. Р. ГАСПАРЯН, эксперт отдела баллистических экспертиз Национального бюро экспертиз НАН РА, А. А. СИРЕКАНЯН, эксперт отдела баллистических экспертиз Национального бюро экспертиз НАН РА

РЕЗЮМЕ

Опасности и риски, связанные с воинской службой, в значительной мере обусловлены наличием и широким использованием в вооруженных силах огнестрельного оружия.

Знание методов и способов проведения судебной экспертизы в целях определения технического состояния огнестрельного оружия, степени его пригодности для стрельбы, вероятности выстрела без нажатия на курок, а также других важных характеристик поможет военнослужащим более ответственно подходить к требованиям воинских уставов по соблюдению правил обращения с огнестрельным оружием.

PRESERVATION OF FIREARMS IN A STATE GOOD
AND SUITABLE FOR SHOOTING AS AN IMPORTANT TOOL
FOR ENSURING MILITARY SERVICE SAFETY

*A. R. BASENTSYAN, Chief, Department of Ballistic Examination, National Bureau
of Expertise, National Academy of Sciences, Republic of Armenia,*

*V. I. HOVHANNISYAN, Expert, Department of Ballistic Examination, National Bureau
of Expertise, National Academy of Sciences, Republic of Armenia, A. R. GASPARYAN, Expert,
Department of Ballistic Examination, National Bureau of Expertise, National Academy
of Sciences, Republic of Armenia, A. A. SIREKANYAN, Expert, Department of Ballistic
Examination, National Bureau of Expertise, National Academy of Sciences,
Republic of Armenia*

SUMMARY

The dangers and risks associated with military service are largely conditioned by the availability and wide use of firearms in the armed forces.

The knowledge of the methods and ways of conducting forensic examinations to determine the technical condition of the firearm, their shooting suitability degree, the probability of a shot without pulling the trigger, as well as other important characteristics will help the servicemen take a more responsible approach to the requirements of military regulations on complying with the rules for handling firearms.

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐԱՑԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԻՄՔ

*Մովսես արքեղա ՍԱՐԳՍՅԱՆ, Հնդկահայոց հոգևոր հովիվ,
Կալկաթայի հայոց մարդասիրական ձեռնարանի կառավարիչ*



Արդարացի պատերազմ սկսելու անհրաժեշտ և իրավական նախապայմաններից մեկը ինքնապաշտպանությունն է, այսինքն՝ եթե պետությունը հարձակման է ենթարկվում, ապա պատերազմով ինքնապաշտպանության նրա դիմելը համարվում է օրինական քայլ: Ուստի ինքնապաշտպանությունը արդար գործ է, որը, անկասկած, արդարացի պատերազմի տեսության¹ մեջ առաջին ու ամենակարևոր պայմանն է:

ԱՐԴԱՐ ԳՈՐԾ

Բոլոր նրանք, ովքեր մտադիր են դիմելու ռազմական ուժի, նախևառաջ պետք է ունենան արդարացի պատերազմի չափանիշներին համապատասխանող նախադրյալներ ու հիմքեր, որպեսզի այդ պայքարը համարվի արդարացի, ինչը պատերազմի վարքականոնում կոչվում է *արդար գործ* (լատ. *causa justa*): Որո՞նք են այն հիմքերը, որ կարող են արդարացնել պատերազմը և նրա սարսափելի հետևանքները: Այս հարցին ի պատասխան ներկայացնենք արդարացի պատերազմի տեսության առավել հայտնի ներկայացուցիչների տեսակետները:

Արդարացի պատերազմների դոկտրինի ճանաչված հիմնադիրներից Սուրբ Օգոստինոս Երանելին որոշակի պատկերացում է տալիս արդար գործի բովանդակության մասին: Թովմա Աքվինացու հաղորդման մեջ Օգոստինոսն ասում է հետևյալը. «Պատերազմը համարվում է արդարացի այն դեպքում, երբ անարդարության համար հատուցում է, երբ պետք է ժողովրդին կամ պետությանը պատժել այն բանի համար, որ հրաժարվում են պատճառած չարիքը հատուցելուց կամ վերադարձնելուց այն, ինչը անարդար կերպով զավթել են»²: Ըստ Աքվինացու՝ «անհրաժեշտ է արդար պատճառ, այսինքն՝

¹ Արդարացի պատերազմի տեսության մասին ավելի հանգամանորեն տես *N. Fotion. Two Theories of Just War. "Philosophia", 2006, Vol. 34, նաև՝ Մովսես արքեղա Սարգսյան, Արդարացի պատերազմի տեսությունը: «Էջմիածին», 2016, Զ:*

² *Stu Saint Thomas Aquinas. The Summa Theologica. Second part of the second part, Question 40: Of War, Article 1: Whether it is always sinful to wage war? Translated by Fathers of the English Dominican Province (http://www.documentacatholicaomnia.eu/03d/1225-1274,_Thomas_Aquinas,_Summa_Theologiae_%5B1%5D,_EN.pdf):*

որ հարձակվողները ենթարկվեն հարձակման, որովհետև իրենց որոշ զանգանքի համար դրան են արժանի»³:

Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ արդար գործը ոչ միայն վնասի համար հատուցում ստանալն է, այլև մեղավորներին պատժելը, ինչի իրավունք ձեռք է բերում անարդարությունից տուժած կողմը: Արդարացի պատերազմի տեսաբաններից Հուգո Գրոտիոսը (1583–1645) իր «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» գրքում նշում է, որ «հեղինակների մեծ մասը ներկայացնում է պատերազմի երեք արդարացի պատճառներ՝ ինքնապաշտպանությունը, զույթի վերադարձը, պատժումը»⁴: Նրա կարծիքով՝ «որպեսզի ինքնապաշտպանությունը լինի արդար, այն պետք է լինի անհրաժեշտ»⁵: Այսինքն՝ ինքնապաշտպանական գործողություններ սկսելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան արդար հիմքեր: Ղա կարող է լինել ոչ միայն այն ժամանակ, երբ կա «հզորության բացահայտ սպառնալիք, այլև այն դեպքում, երբ մենք գիտենք հարևանի համապատասխան մտադրության մասին այն հավաստիությամբ, որը հնարավոր է բարոյականության բնագավառում»⁶: Ընդ որում, Գրոտիոսը շեշտում է, որ շահի նկատառումները չեն ստեղծում նույնպիսի իրավունք, ինչպիսին անհրաժեշտությունը: Գրոտիոսն անհրաժեշտության հասկացությունը միախոյուն է նպատակահարմարության, արդարացիության, արդարացի պատերազմի հասկացությունների հետ:

Էմեր դը Վատելը (1714–1767) ևս իր «Ազգերի իրավունքը» գրքում հատուցումը բնութագրում է որպես հետագա վնասներից խուսափելու համար ձեռնարկված կանխարգելիչ գործողություն. «Տվյալ դեպքում վրեժխնդիր լինել նշանակում է հետամուտ լինել, որպեսզի պատճառված վնասը վերականգնվի, եթե դա հնարավոր է, կամ ստանալ արդարացի փոխհատուցում, եթե չարիքն անդառնալի է, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պատժել օրինազանցին՝ մեր հետագա անվտանգությունն ապահովելու նպատակով»⁷: Այսինքն՝ ըստ Վատելի, արդար գործը նաև անարդարության կանխումն է:

³ Տես նույն տեղում:

⁴ Տես *Г. Гроций. О праве войны и мира. Книга 2. М., 1994, с. 5* (https://www.civisbook.ru/files/File/Groziy_Kn2.pdf):

⁵ Նույն տեղում, էջ 501:

⁶ Նույն տեղում:

⁷ *Monsieur De Vattel. The Law of Nations; or Principles of the Law of Nature. Sixth American Edition. Philadelphia, 1844, P. 302.* Հետաքրքրական է, որ ինչպես Վատելը, այնպես էլ վաղ շրջանի շատ հեղինակներ՝ թե՛ Եկեղեցու հայրեր, թե՛ արդարացի պատերազմի տեսաբաններ, խոսելով պատերազմի մասին, հակառակորդ մեղավոր կողմին թշնամու փոխարեն հաճախ անվանում են չար կամ չարագործ, իսկ նրանց կատարած գործերը՝ չարի գործեր (տես նաև *Սուրբ Թովմա Աբվինացի*, Նշ. աշխ., երկրորդ մասի երկրորդ մաս, հարց 40, հոդ. 1, *J. F. Coverdale. An introduction to the just war tradition. "Pace International Law Review", 2004, Vol. 16, Issue 2*):

Ֆ. Մարտենսը նույնպես համարում է, որ «ինքնապահպանության իրավունքը ոչ միայն հարձակվողների դեմ պայքարի իրավունքն է, այլև անխուսափելիորեն սպառնացող վտանգի կանխման* իրավունքը»⁸: Հետևաբար, ըստ Մարտենսի, անհրաժեշտ են գործողություններ ոչ միայն հարձակմանը հակահարված տալու, այլև անխուսափելի հարձակման վտանգը կանխելու համար: Ինքնապահպանման իրավունքից Մարտենսը բխեցնում է իր կյանքը պաշտպանելու համար միջոցներ ունենալու պետության անհրաժեշտությունը:

Այս պնդումները հիմք ընդունելով՝ կարող ենք ենթադրել, որ «արդար գործը», ըստ էության, կատարված անարդարության շտկումն է կամ դրա համար պատժումը, կամ էլ անարդարություն գործելու հնարավորության կանխումը: Անհատները և անհատների խմբերը (օրինակ՝ պետություններն ու պետությունների դաշնադրությունները) օժտված են որոշակի իրավունքներով, որոնց պաշտպանությունը կարող է պահանջել ուժի կիրառում: Դեռ ավելին. ըստ արդարացի պատերազմի տեսության՝ ռազմական ուժի կիրառումը սահմանափակված է միայն իր իրավունքների պաշտպանությամբ, այլ գրեթե նույնչափ կարևոր է ուրիշների իրավունքների պաշտպանությունը⁹:

Մարտենսը նաև ինքնապահպանման համար անհրաժեշտ միջոցառումները որոշակիորեն սահմանափակում է պատասխան գործողությունների զուգաչափությամբ: Բացի այդ, նա նշում է նաև այլ պայմաններ.

- «ինքնապահպանման պատրվակով ձեռնարկվող միջոցների նպատակ չի կարող լինել այլ խաղաղ պետության ինքնուրույնության վերացումը կամ նրա կյանքի հիմնական պայմանների խախտումը»,
- «պետության ինքնապաշտպանությունը չի կարող լինել անսահմանափակ. այն սկսվում է իրական հարձակման պահից կամ բացահայտ կերպով սպառնացող վտանգի պահից»,
- «ինքնապահպանման միջոցները կարող են ձեռնարկվել ինչպես այն պետության տարածքում, որին սպառնում են հարձակում կամ վտանգ, այնպես էլ նրա սահմաններից դուրս»¹⁰:

Անհրաժեշտության և զուգաչափության չափանիշները ձևավորվել են դեռ

* Այդ մասին խոսվում է նաև «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում», ըստ որի՝ Ձինված ուժերի հիմնական գործառնություններից են՝ «հնարավոր զինված հարձակման կանխումը, լարվածության օջախի չեզոքացումը, հրադադարի կամ հաշտության պարտադրումը՝ Ձինված ուժերի մասնակի կամ լրիվ ծավալմամբ» (տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», գ. 7, հոդ. 38, կետ 3: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4):

⁸ Տես Փ. Փ. *Мартенс*. Современное международное право цивилизованных народов, в 2-х томах, т. 1. Под ред. В. А. Томсинова. М., 2008, с.142:

⁹ Տես *Карл Келеманс*. Нравственные ограничения войны. Проблемы и примеры. Под ред. Бруно Коппитерса, Ника Фоушина, Рубена Апресяна. М., 2002, с. 49:

¹⁰ Տես Ֆ. Ֆ. *Մարտենս*, Նշ. աշխ., էջ 142–143:

վաղ դասական իրավունքի ժամանակաշրջանում, իսկ այնուհետև ստացել են ավելի հստակ ձևակերպումներ և արտացոլվել պետությունների գործառույթներում: Հետագայում այդ չափանիշները զարգացվել են ժամանակակից միջազգային իրավունքում, որի պատմության ներկայիս փուլի սկիզբը նշանավորվեց Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության ստորագրմամբ: Սակայն Կանոնադրությունը, մասնավորապես դրա 51-րդ հոդվածը¹¹, չի պարունակում ինքնապաշտպանության դեպքում գործողությունների բնույթին վերաբերող հստակ պահանջներ: Սակայն դրանք ձևակերպումներ են ստացել հետագա միջազգային-իրավական ակտերում և Միջազգային դատարանի որոշումներում:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռժժի արդարացված կիրառման վերաբերյալ մտորումները առաջին հերթին ուղղվում են դեպի ինքնապաշտպանություն: Տրամաբանական է, որ ինչպես անհատը, այնպես էլ պետությունը իրավասու են իրենց իրավունքների խախտման դեպքում ուժ կիրառելու*: Այդուհանդերձ, ինքնապաշտպանության ակնհայտ կարևոր և արդարացի բնույթը դեռ չի նշանակում, թե բոլոր հարցերը հստակեցված են:

Ժամանակակից տեսաբանները որպես միակ ձևի ինքնապաշտպանություն ներկայացնում են դիմադրությունը տեղի ունեցած հարձակմանը, իսկ զինված ուժի կիրառումը կարող է արդարացված լինել միայն որպես պատասխան ռազմական հարձակմանը: Սակայն շատերը ենթադրում են, որ սա հանգեցնում է *jus ad bellum-ի* (պատերազմ սկսելու իրավունք) սահմանափակման: Որոշ հեղինակների կարծիքով՝ բավարար է պատասխանել «ո՞վ է կրակել առաջինը» հարցին, թեև դա արդար գործի չափազանց պարզունակ մեկնաբանություն է¹²:

Առաջանցիկ** հարվածի՝ որպես արդար գործի օրինականությունը հիմնված է այն հանգամանքի վրա, որ հավանական անարդարությունը դարձել է

¹¹ Տես «ՄԱԿ-ի կանոնադրություն»: Ե., 2005, գ. 7, հոդ. 51, էջ 30:

* Արդարացի պատերազմի տեսաբանները համարում են, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Բելգիան ուներ գերմանական ներխուժմանը զենքով դիմակայելու լիարժեք իրավունք: 1914 թ. օգոստոսի 2-ին Չեռմանիան Ֆրանսիայի վրա հարձակվելու նպատակով Բելգիային, որը չեզոք դիրք էր գրավում, ներկայացրեց վերջնագիր՝ գերմանական զորքերի ազատ անցում ապահովելու պահանջով: Բելգիան մերժեց այդ պահանջը, և հաջորդ օրը գերմանական զորքը ներխուժեց Բելգիայի տարածք: Տվյալ դեպքում զինված դիմադրությունը միանգամայն արդարացված էր, և անգամ գերմանացիները չթաքցրեցին այն փաստը, որ իրենց գործողություններով խախտում են միջազգային իրավունքի նորմերը (տես *Michael Walzer. Just and Unjust Wars: A moral argument with historical illustrations. New York, 1977, P. 240*):

¹² Տես *Կարլ Կելենանս*, Նշ. աշխ., էջ 50:

** Հոդվածի հեղինակի դատողությունների նուրբ երանգներն ընթերցողի համար ավելի պարզ դարձնելու նպատակով հիշեցնենք, որ «առաջանցում (*упреждение-preemption*)» նշանակում է «ժամանակատարածական առումով որևէ մեկից՝ բանից առաջ անցնել՝ առաջ ընկնել, շուտ անել, առջևում հայտնվել», մինչդեռ «կանխումը (*предотвращение, предупреждение-prevention*)»

անխուսափելի*։ Եթե իսկական անարդարությունը կամ հարձակումը դեռ տեղի չեն ունեցել, ապա ակնհայտ է, որ առաջանցիկ հարվածի որակումը որպես ինքնապաշտպանություն (նշանակում է նաև՝ որպես արդար գործ) վիճելի է։ Որքանով է վտանգն իրական, կամ արդյոք այն համարժեք է ենթադրվող ռազմական պատասխանին։ Առաջանցիկ հարվածի՝ որպես ինքնապաշտպանական գործողության կողմնակիցները բերում են բավական ուղղաճիծ փաստարկումներ, որոնցով փորձում են հիմնավորել անարդարությունը իսպառ կանխելու նպատակով առաջինը հարված հասցնելու անհրաժեշտության վերաբերյալ դրույթը։

Մայքլ Վոլգերը շեշտում է, որ պետք է տարբերել առաջանցիկ հարվածը և կանխիչ ուժի կիրառումը։ Կանխիչ ուժի կիրառման մասին արդեն ձևավորված տեսակետի համաձայն՝ պատերազմը, որը մղվում է հարևանի հզորության մեծացումը և ուժերի հավասարակշռության խախտումը կանխելու նպատակով, օրինական է։ Այս տեսակետի կողմնակիցները համարում են, որ նման պատերազմը ոչ միայն նպաստում է ուժերի հավասարակշռության վերականգնմանը, այլև, ինչը ավելի կարևոր է, զգալի կերպով նվազեցնում է պաշտպանական ծախսերը։ Ըստ այդմ, հապաղումը կնշանակեր ոչ թե պատերազմի կանխում, այլ դրա մասշտաբի մեծացում և վարման պայմանների վատթարացում¹³։

Սակայն Վոլգերը փորձում է հակադարձել այս պնդմանը՝ ասելով, որ միջազգային հարաբերությունները դինամիկ են։ Կատարյալ հավասարակշռություն լինել չի կարող, քանի որ ուժերի հարաբերակցությունը անընդհատ փոփոխվում է։ Իսկ դա նշանակում է, որ եթե պետություններն ամեն անգամ դիմեն պատերազմի, երբ տեղի է ունենում ուժերի հարաբերակցության հերթական խախտում, ապա պատերազմը կդառնա «սովորական և հաճախադեպ»՝ իր ծանր բարոյական հետևանքներով հանդերձ։ Ըստ Վոլգերի՝ ուժի առաջանցիկ կիրառումը լիովին հիմնավորված է միայն այն դեպքում, երբ առկա է բավականաչափ մեծ ու պարզորոշ երևացած վտանգ։ Դա կարող է արտահայտվել երեք ձևով՝

- երբ հավանական հակառակորդը բացահայտ կերպով դրսևորում է հարձակվելու իր մտադրությունը,

նշանակում է «նախօրոք ձեռնարկված միջոցառումների շնորհիվ սպառնալիքի վերացում, որևէ բանի իրագործման արգելակում, խանգարում», և ըստ այդմ՝ «առաջանցիկ» – *упреждающий; preemptive*, «կանխիչ» – *превентивный; preventive* (տես Դ. Չիլինգարյան, Ե. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան։ Ե., 2015, էջ 94, 285)։ – *Խմբ.*։

* 1939 թվականի սեպտեմբերի 1-ին Գերմանիան ներխուժեց Լեհաստան։ Եթե Լեհաստանը ունենար համապատասխան ռազմական հնարավորություններ և որպես կանխիչ գործողություն առաջինն ինքը հարված հասցներ Գերմանիայում այն պահին, երբ իր վրա հարձակումն արդեն անխուսափելի էր, ապա վստահաբար այդ գործողությունը կհամարվեր ինքնապաշտպանություն։

¹³ Տես Մայքլ Վոլգեր, Նշ. աշխ., էջ 77։

- երբ հավանական հակառակորդը ցուցադրում է այնպիսի աստիճանի ակտիվ պատրաստություն, որն այդ նպատակը դարձնում է իրական սպառնալիք,
- երբ վիճակն այնպիսին է, որ հապաղելը կամ ցանկացած այլ գործողություն, բացի ռազմականից, ավելի կմեծացնի ռիսկը¹⁴:

Սառը պատերազմի ժամանակ առաջանցիկ հարվածի հարցերը բուռն կերպով քննարկվում էին առաջին և երկրորդ միջուկային հարվածների առնչությամբ¹⁵: Ռազմավարական միջուկային զենքերի յուրահատուկ բնույթը նոր չափանիշ բերեց ուժի կիրառման մասին վերլուծությունների ասպարեզ: Միջուկային զենքը մեծապես փոխեց անարդարության և առաջին հարվածի մասին պատկերացումները, որովհետև այս դեպքում խոսքը ոչ թե որևէ տարածքի գրավման կամ օբյեկտի ոչնչացման, այլ բնակչության մասնակի կամ լրիվ ոչնչացման մասին էր:

Ինքնապաշտպանության վառ օրինակ է բերում Սուրբ Եղիշե պատմիչը, երբ Սուրբ Ղևոնդ Երեցը զորքին ուղղված իր խոսքում ասում է. «Թո՛ղ ոչ ոք ձեր բաժինը ձեզնից չկտրի, և ձեզ օտար ու խորթ դարձնելով բաժնից չզրկի»¹⁶: Երբ Սասանյան Պարսկաստանը 5-րդ դարի կեսերին հայ ժողովրդին պարտադրեց ընդունել զրադաշտական կրոնը, Հայոց աշխարհի 18 եպիսկոպոսներ, պատվական երեցներ և նախարարներ միահավան մամակով պատասխանեցին պարսից արքա Հազկերտ 2-ին՝ նշելով, որ իրենց ոչինչ չի կարող հետ պահել Քրիստոսի ճշմարիտ հավատքից՝ «ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը, ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ դառն հարված»¹⁷: Ինչպես տեսնում ենք, հայերի համար ամենակարևոր հարցը հավատքի պահպանումն էր, որն իր մեջ ներառում էր ազգային ու մշակութային ինքնությունն ու ինքնուրույնությունը: Ուստի շատ պարզ էր, որ նրանք երբեք չէին հարձակվի որևէ երկրի վրա, սակայն եթե հարձակման ենթարկվեին, ապա պիտի կռվեին մինչև արյան վերջին կաթիլը՝ իրենց ինքնությունը, մարդկային արժանապատվությունը պաշտպանելու համար¹⁸:

Հարկ է նշել, որ ինքնապաշտպանության օրինականությունն ունի ժամանակի ընթացքում նվազելու միտում: Որքան շատ է հետաձգվում անարդար գործին տրվող պատասխանը, այնքան մեծանում է հավանականությունը, որ

¹⁴ Տես նույն տեղում, էջ 81:

¹⁵ Տես *Կառլ Կելեմանս*, Նշ. աշխ., էջ 52: Առաջին և երկրորդ հարվածը հասցնելու վերաբերյալ ավելի հանգամանորեն տես "An Encyclopedia of War and Ethics". Ed. by Donald A. Wells. London, 1996, PP. 140–142:

¹⁶ Տես *Եղիշե*, Վարդանի և հայոց պատերազմի մասին: Թարգմանությունը և ծանոթագրությունը Ե. Տեր-Մինասյանի: Ե., 1989, էջ 221:

¹⁷ Տես նույն տեղում, էջ 81:

¹⁸ Այս մասին ավելի հանգամանորեն տես *Boghos Levon Zekriyan*. Paradigms of peace and war in medieval Christianity: The Armenian case: a frontier people facing Christian and non-Christian powers. "Orientalia Christiana Periodica", 2006, Vol. 72, N II:

հետագա պատասխանը կհամարվի ոչ թե պաշտպանողական, այլ հարձակողական գործողություն:

1995 թ. «Ավետարանական կյանք» կոնդակում* Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ն վերլուծել է ինքնապաշտպանության տարիմաստությունը: Նա ծանր մեղք է համարել սպանել մարդուն, որն իր մեջ ունի Աստծու պատկերը: Միայն Աստված է կյանքի տերը: Սակայն կան փաստացի իրավիճակներ, երբ Աստծո Օրենքով սահմանված արժեքները կարծես հակասության մեջ են մտնում իրական կյանքի հետ: Օրինակ՝ իրականում դժվար է համատեղել իր կյանքը պաշտպանելու իրավունքը և ուրիշի կյանքին չվնասելու պարտականությունը: Իհարկե, կյանքի արժեքը և ուրիշին սիրելու պարտականությունը («Սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո», Մարկ. ԺԲ 31)** իսկական ինքնապաշտպանության իրավունքի հիմքն են: Հետևաբար ինքնապաշտպանությունը հիմնված է սիրո և անձնագոհության վրա¹⁹:

Պապի 1995 թ. արած հայտարարությունը, ըստ էության, նույնն էր, ինչ որ Հայր Ռոսմինին էր արել 1823 թվականին. «Երբ ագրեսորին սպանում է մեկը, որ դիմել էր ինքնապաշտպանության, բարոյական պատասխանատվությունն ընկնում է ոչ թե պաշտպանվողի, այլ ագրեսորի վրա»²⁰:

1996 թ. Կաթոլիկ եկեղեցու նոր վարդապետությունը պաշտոնապես ընդունեց արդարացի պատերազմի և ինքնապաշտպանության վերաբերյալ Սուրբ Օգոստինոսի ու Աքվինացու ուսմունքները, ըստ որոնց՝ ուրիշի նկատմամբ սիրո պատգամը բարոյականության համար մնում է հիմնարար սկզբունք: Հետևաբար օրինական է պարտադրել, որ իրենց կյանքի իրավունքին վերաբերվեն հարգանքով: Ըստ Աքվինացու՝ «Ինքնապաշտպանության ձեռնարկումը կարող է ունենալ երկակի ազդեցություն՝ իր կյանքի պահպանում և հարձակվողի սպանություն. առաջինը նախատեսված է, իսկ երկրորդը՝ ոչ»²¹: Այսինքն՝ նա, ով պաշտպանում է իր կյանքը, սպանության մեջ մեղավոր չէ,

* Հռոմի Հովհաննես Պողոս Բ պապի կոնդակը (“Evangelium Vitae”) հրապարակվել է 1995 թ. մարտի 25-ին: Դրանում Պապն անդրադառնում է մարդկային կյանքի սրբությանը առնչվող մի շարք հարցերի, այդ թվում՝ սպանությանը, հղիության արհեստական ընդհատմանը, էվթանազիային և մահապատժին (կոնդակն ամբողջությամբ տես *Ioannes Paulus PP. II. Evangelium Vitae: To the Bishops Priests and Deacons Men and Women religious lay Faithful and all People of Good Will on the Value and Inviolability of Human Life* (http://w2.vatican.va/content/john-paul-ii/en/encyclicals/documents/hf_jp-ii_enc_25031995_evangelium-vitae.html):

** Սուրբ գրային մեջբերումն արված է ըստ «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց»: Ըստ Ճզգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականն բարբառ: Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ Ռաբունաբետի և առաջին Աբբայի: Վենիտիկ, ի Գործարանի Սրբոյն Ղազարու, 1805:

¹⁹ Տես *Հովհաննես Պողոս Բ պապ*, Նշ. աշխ.:

²⁰ Տես *David B. Kopel*. Evolving Christian Attitudes Towards Personal and National Self-Defense. “Connecticut Law Review”, July 2013, Vol. 45, Issue 5:

²¹ Տես *Սուրբ Թովմա Աքվինացի*, Նշ. աշխ., երկրորդ մասի երկրորդ մաս, հարց 64, հոդ. 7:

նույնիսկ այն դեպքում, երբ ստիպված է մահացու հարված հասցնել իր վրա հարձակվողին:

Ինքնապաշտպանության ժամանակ կարևոր է պահպանել նաև զուգաչափության սկզբունքը^{*}: Եթե որևէ մեկը ինքնապաշտպանության համար գործի է դնում ավելի մեծ ուժ ու բռնություն, քան անհրաժեշտ է, ապա այն կլինի ոչ իրավաչափ, իսկ եթե նա կիրառում է չափավոր ուժ, պաշտպանությունը կլինի օրինական²²:

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Վուլգերի՝ ուրիշների խախտված ինքնիշխանության կամ տարածքային ամբողջականության պաշտպանության համար ուժի կիրառումը ոչ թե մեծահոգություն է, այլ անհրաժեշտություն: Միջազգային հանրության որևէ անդամի իրավունքների պաշտպանության համար գոյություն չունի հատուկ ուժային կառույց, ինչպես յուրաքանչյուր պետության ներսում է: Այդ պատճառով տվյալ գործառույթները բաշխված են անդամների միջև: Յուրաքանչյուր անդամ պետության իրավունքները պետք է պաշտպանված լինեն: Եթե այդ պետությունները չեն կարողանում պաշտպանել կամ վերականգնել այլ պետությունների իրավունքները, ապա «միջազգային հանրությունը հայտնվում է պատերազմական վիճակում»²³:

Խոսելով «ուրիշների պաշտպանության» մասին՝ արդարացի պատերազմի տեսաբանները «ուրիշներ» ասելով նկատի ունեն ոչ միայն այլ պետությունների, այլև անհատների խմբերի, որոնց հիմնական իրավունքները խախտվել են: Նրանցից ոմանք^{**} առաջ էին քաշում միջամտության և մարդասիրական (հումանիտար) նպատակների գաղափարներ: Նրանց կարծիքով՝ մարդկությանը միավորող համընդհանուր բարոյական սկզբունքները հանգեցրել են հանուն անկախ քաղաքացիների պաշտպանության այլ պետությունների գործերին միջամտելու իրավունքի հաստատմանը:

Սառը պատերազմի ավարտից հետո մարդասիրական միջամտության օրի-

* Արդարացի պատերազմի տեսության մեջ *jus in bello-ի* (արդարացիորեն պատերազմի վարում) չափանիշներից է զուգաչափության սկզբունքը, որն ըստ էության հակամարտությունների տրանսբանական համաչափության մասին է, օրինակ՝ թեթև բախումների ժամանակ չի կարելի և նույնիսկ անհմաստ է օգտագործել մեծաքանակ ռազմական տեխնիկա:

²² Տես «Catechism of the Catholic Church». Second Edition, revised in accordance with the official Latin text promulgated by Pope John Paul II. Libreria Editrice Vaticana, 2000, P. 545, Para. 2263–2265 (<http://ccc.usccb.org/flipbooks/catechism/files/assets/basic-html/page-l.html>):

²³ Տես *Մայքլ Վոլգեր*, Նշ. աշխ., էջ 59:

^{**} Միջամտության, մարդասիրական օգնության կողմնակից են եղել հայտնի տեսաբաններ՝ կաթոլիկ փիլիսոփա, աստվածաբան ու իրավաբան Ֆրանցիսկո դը Վիտորիան (1483–1546), որը մեծ ներդրում ունի արդարացի պատերազմի և միջազգային իրավունքի ոլորտում, իսպանացի ձիգվիտ քահանա, փիլիսոփա և աստվածաբան Ֆրանցիսկո Սուարեսը (1548–1617), հոլանդացի իրավաբան, փիլիսոփա Հուգո Գրոտիոսը (1583–1645):

նականության խնդիրը դարձավ միջազգային հարաբերությունների վարքականոնի թեմայով քննարկումների առարկա: Այդ քննարկումների կարևորությունը լիովին հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ է մարդասիրական միջամտությունը: Ուղիղ իմաստով այն նշանակում է «հանուն մարդասիրական նպատակների միջամտել այլ պետության ներքին գործերին»²⁴: Այդպիսի միջամտություն կարող են ձեռնարկել ինչպես գինվորականները, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունները, ինչպիսին, օրինակ, «Բժիշկներ առանց սահմանների»^{*} կազմակերպությունն է: Սակայն մեր նպատակն է քննարկել ռազմական ուժի կիրառման բարոյական սահմանները, ուստի փորձենք վերլուծել մարդասիրական միջամտության էությունը:

Եթե անարդարությունը դիտենք որպես մարդու իրավունքների խախտում, ապա արդար գործեր են անարդարության կանխումը, պատժումը և ուղղիչ աշխատանքները, ինչպես նաև արդարության վերականգնումը:

Սակայն մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով ներխուժել այլ պետության տարածք նշանակում է անխուսափելիորեն խախտել նրա ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը: Տվյալ պետությունը, պաշտպանելով իր ինքնիշխանությունը, այդպիսի «օգնություն» կարող է և չընդունել՝ այն հիմնավորմամբ, որ ուրիշներն իրավունք չունեն խառնվելու իր ներքին գործերին, իսկ սա ևս արդար գործ է: Ո՞վ է այս դեպքում իրավացի՝ միջամտողը, որը պաշտպանում է մարդու իրավունքներն այլ պետությունում, թե՞ պետությունը, որն իրեն պաշտպանում է արտաքին միջամտություններից:

Որոշ խմբեր, հատկապես՝ հակամիջամտականները (*антиинтервенционисты, noninterventionalists*), կտրականապես դեմ են արտաքին միջամտություններին, որոնք, թեև ունենալով մարդասիրական նպատակներ, այդուհանդերձ քայքայում են պետությունների հիմքերը:

Մարդասիրական միջամտության հարցին առնչվող բարոյական ավանդույթն արտահայտում է արևմտյան միջնադարյան քաղաքական արժեքները, որոնք հիմնված էին համընդհանուր քրիստոնեական արժեքների վրա: Եկեղեցին ուներ հանրությանը բարոյական նորմեր պարտադրելու մեծ հեղինակություն ու իշխանություն և այս պարագայում ուժի կիրառումը համարում էր արդարության գործիք:

Միջամտելու բարոյական ավանդույթը պարզորոշ կերպով արտահայտվեց 11–12-րդ դարերում, երբ ծառայում էր միջնադարյան Եվրոպայի «Քրիստո-

²⁴ Տես *Կառլ Կելենանս*, Նշ. աշխ., էջ 55:

^{*} Միջազգային մարդասիրական օգնության հասարակական կազմակերպություն, որը խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր է և առավել հայտնի է պատերազմական տարածաշրջաններում ու համաճարակի օջախներում իրականացվող ծրագրերով: Ստեղծվել է 1971 թվականին Ֆրանսիայի բժիշկների նախաձեռնությամբ՝ բժիշկների, առողջապահության բնագավառի աշխատողների և այդ առաքելության կատարմանը նպաստող այլ մասնագետների միավորմամբ:

նեական հանրապետությանը» («*Republica Christiana*» of Europe²⁵): Պետությունները իրավունք ունեին միջամտելու այլ երկրների ներքին գործերին՝ ճնշվածներին օգնելու մարդասիրական նպատակներով²⁶: Սակայն Վեստֆալյան հաշտության²⁷ սկզբունքները փոխեցին համընդհանուր բարոյական հիմքը՝ ինքնիշխանության նոր սկզբունքներով և միջամտության անթույլատրելիությամբ: Ձգտելով վերջ դնելու կրոնական պատերազմներին և քառսին՝ այդ պայմանագրի բոլոր կողմերը եկան եզրահանգման այն մասին, որ ոչ ոք իրավունք չունի խառնվելու ուրիշի գործերին: Տվյալ տեսանկյունը, որ հռչակում էր միջամտության սկզբունքային անթույլատրելիությունը, տիրապետող էր գրեթե 300 տարի, ներառյալ՝ Սառը պատերազմի տարիները (թեև գործնականում այդ կանոնը միշտ չէ, որ պահպանվում էր):

Սույն խնդրի առնչությամբ մեկ այլ կարևոր փոփոխություն տեղի ունեցավ 1990-ական թվականներին Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ, որում չնայած ինքնիշխանությունը և միջամտության անթույլատրելիությունը որպես գլխավոր արժեքներ դեռևս առկա են, այնուամենայնիվ միջազգային բարոյական իրականության կարևոր մաս են դառնում մարդու անհատական իրավունքները: Այդ ժամանակվա գլխավոր միտումներից մեկը միջպետական հակամարտություններում միջազգային մարդասիրական միջամտությունների աճումն էր: Ցավոք, հետագա ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական քննարկումներում կարելի է նկատել աճող համաձայնություն այն հարցում, որ ինքնիշխանության նշանակությունն աստիճանաբար կորցնում է իր բարձր արժեքը²⁸:

Մեկ այլ խնդիր, որը կապված է արդար գործի հասկացության հետ, վերաբերում է միջամտության մասշտաբների սահմանմանը՝ թե որքան հեռու

²⁵ Տես *J. Bryan Hehir*. Intervention: From Theories to Cases. "Ethics & International Affairs", March 1995, Vol. 9, Issue 1:

²⁶ Միջազգային մարդասիրական միջամտության իրավունքի առնչությամբ ավելի հանգամանորեն տես *James Turner Johnson*. Humanitarian intervention and the Just War-Idea. "Sovereignty at the Crossroads?: Morality and International Politics in the Post-Cold War Era". Ed. by Luis E. Lugo. Maryland, 1996, PP. 127–143; *J. Bryan Hehir*. Military Intervention and National Sovereignty: Recasting the Relationship. "Hard Choices: Moral Dilemmas in Humanitarian Intervention". Ed. by Jonathan Moore. Maryland, 1998, PP. 29–54:

²⁷ Վեստֆալյան հաշտության մասին ավելի հանգամանորեն տես "Renegotiating Westphalia: Essays and Commentary on the European and Conceptual Foundations of Modern International Law". Ed. by Christopher Harding and C. L. Lim. The Hague, 1999, PP. 1–23; *András Jakab*. European Constitutional Language. Cambridge University press, 2016, PP. 100–104: Վեստֆալյան հաշտությունը, որի հիմնական սկզբունքը չմիջամտելն էր, կնքվել է 1648 թ. հոկտեմբերի 24-ին Գերմանիայի Վեստֆալիա պատմական մարզում (տես "The Sacred and the Sovereign: Religion and International Politics". Ed. by John D. Carlson and Erik C. Owens. Washington, 2003, P. 4):

²⁸ Այս թեմայի վերաբերյալ տես *Jarat Chopra and Thomas G. Weiss*. Sovereignty Is No Longer Sacrosanct: Codifying Humanitarian Intervention. "Ethics & International Affairs", 1992, Vol. 6, Issue 1; *Peter Malanczuk*. Humanitarian Intervention and the Legitimacy of the Use of Force. Amsterdam, 1993, P. 69:

կարող է գնալ այդպիսի միջամտությունը: Պե՞տք է արդյոք այն սահմանափակվի լոկ մարդասիրական օգնության տրամադրմամբ, թե՞ ոչ: Այս առումով ևս կարծիքները հակասական են: Ոմանք պնդում են, թե նույնիսկ մարդասիրական նպատակներով միջամտության դեպքում պետք է հնարավորինս դրսևորել զսպվածություն՝ չմիջամտելու տվյալ պետության ներքին գործերին: Միջազգային միջամտությունների համոզված հակառակորդ Ջոն Ստյուարտ Միլի կարծիքով՝ նման դիրքորոշումը ենթադրում է ինքնորոշման սկզբունքի նկատմամբ հարգանք: Նրա կարծիքով՝ ժողովուրդն ինքը պետք է հասնի անկախության, իսկ դրա համար «առաջին հերթին ինքը պետք է լինի ազատ», բայց եթե նա ազատություն չի սիրում ու չի կարող պայքարել հանուն դրա, չի կարող նաև ազատված լինել արտաքին ուժի օգնությամբ, քանի որ «այն ազատությունը, որը տրվում է ուրիշի ձեռքով, անիրական է ու ժամանակավոր»²⁹:

Տվյալ գաղափարը առանձնակի կերպով շեշտված է Գարեգին Նժդեհի գրություններում: Նրա համար սարսափելի երևույթ է, երբ ժողովուրդը հույսը դնում է ուրիշների հովանավորության վրա, ինչը հանգեցնում է թուլության, կամազրկության և դարձնում է իր ուժերով ինքնապաշտպանությունը կազմակերպելու անընդունակ³⁰:

Այնինչ Արևմտյան Հայաստանի բնիկ հայությունը հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին ու 20-րդ դարի սկզբին մղեց անհավասար ինքնապաշտպանական պայքար հանուն իր, իր զավակների ու ծնողների կյանքի, հանուն իր արժեքների ու դավանած սրբությունների: Ո՞ր թեև տվեց հսկայական զոհեր, կորցրեց իր բնօրրանը, սակայն չպարտվեց, հաստատվեց և լիարժեք կյանքով ապրեց նոր հայրենիքներում՝ չմերժելով հազարամյակների իր բուն Հայրենիքի կարոտը³¹:

Պաշտպանությունը կարող է ցանկացածի համար լինել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն, եթե նա պատասխանատու է ուրիշի կյանքի համար: Համընդհանուր բարին պահպանելու համար անհրաժեշտ է խստիանել հարձակվողի՝ վնասելու մտադրությունները, նրան դարձնել վնաս պատճառելու անկարող: Այսպիսով՝ նրանք, ովքեր ունեն օրինական իշխանություն, իրավունք ունեն արժանի հակահարված տալու զինված հարձակման կամ դրա հավանականության դեպքում:

²⁹ Տես *John Stuart Mill. A Few Words on Non-Intervention. "Foreign Policy Perspectives"*, 1987, N 8 (<http://www.libertarian.co.uk/lapubs/forep/forep008.pdf>):

³⁰ Տես *Գարեգին Նժդեհ*, Հատընտիր: Ե., 2006, էջ 61:

³¹ Տես, օրինակ, «Հայկական բանակ», 2015, հմ. 1–2. ««1915–2015» անվտանգային-քաղաքագիտական հետազոտություն»:

ПОЛЕМОЛОГИЯ**САМООБОРОНА КАК ОСНОВА СПРАВЕДЛИВОЙ ВОЙНЫ**

*Իերոմոսնա ՄՈՎՍԵՍ ՏԱՐԳՏՅԱՆ, ժոհովնայ քոստըրն արման Ինդիա,
ըրվալյոսիսի արմանկոսյ զոմանիտարնոյ զիմնազիա Կալկուտտայ*

РЕЗЮМЕ

В теории справедливых войн самооборона считается основой для ведения справедливой войны. Августин Блаженный, Фома Аквинский, Гуго Гроций, Эмер де Ватель и другие теоретики справедливой войны предусловием для самообороны считают необходимость восстановления справедливости и наказания за ее нарушение или предотвращения подобных действий. При этом подчеркивается важность соразмерности самообороны действиям агрессора, что нашло отражение в нормах современного международного права, международно-правовых актах и решениях Международного суда. Справедливым признается также применение силы в целях защиты прав других (государств, индивидов, групп), что в наши дни трансформировалось в право гуманитарной интервенции.

WAR STUDIES**SELF-DEFENSE AS A BASIS FOR THE JUST WAR**

*Rev. Fr. MOVSES SARGSYAN, Pastor of Indian Armenians, Manager,
Armenian College and Philanthropic Academy in Calcutta*

SUMMARY

In the theory of just wars self-defense is considered fundamental for waging just wars. The Blessed Augustine of Hippo, St. Thomas Aquinas, Hugo Grotius, Emer de Vattel and other adherents to the just war theory find that the prerequisite for the self-defense is the necessity to restore justice and to punish for violating it, or to prevent suchlike acts. All along, the importance of the adequacy of the self-defense to the aggressor's actions, which is reflected in the norms of contemporary international law, international legal acts and decisions of International Court of Justice, is accentuated. Also, the application of force aimed at protecting others' (states, individuals, and groups) rights, which nowadays has transformed into the right of humanitarian intervention, is considered justified.

ՇԵՂՈՒՄԱԿԱՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՍՈՂԵԼԱԿՈՐՈՒՄԸ ԿԻՔԵՌԱՆՎԱՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնի պետ



Ներկայումս կազմակերպությունների (այդ թվում՝ պետությունների) մեծ մասը հաճախ բախվում է կոնկրետ խնդիրների լուծման համար ռեսուրսների անբավարարությանը և կիբեռանվտանգության ոլորտում առկա մեծ անորոշությունների: Նման պայմաններում կիբեռսպառնալիքների բարդ և պատահական (ստոխաստիկ) բնույթի հաշվառմամբ կիբեռանվտանգության ռեսուրսներն ու տեղեկատվական ակտիվները պաշտպանելու համար հատկապես մեծ կարևորություն են ստանում արդյունավետ ներդրումային ռազմավարության մշակումը և ներդրումների ճիշտ ու օպտիմալ կատարումը: Կիբեռանվտանգության ոլորտում, ի տարբերություն այլ ոլորտներից, ներդրումներից ստացվող եկամուտները ոչ թե դրամական են, այլ արտահայտվում են պաշտպանության կարիք ունեցող տեղեկատվական համակարգերի խոցելիության մակարդակի նվազմամբ¹: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է դառնում ներդրումային նախագծերի կառավարման և համապատասխան ներդրումային որոշումների, այդ թվում՝ ներդրումների կատարման ժամանակի, օպտիմալ կառավարման դինամիկության հաշվառմամբ ավելի ձկուն ու շեղումակայուն (ռոբաստ) մոդելների մշակումը:

Օրինատիպային մոդելը մեծ (մոդելային) անորոշություն չլինելու պայմաններում: Կազմակերպությունը մեծ (մոդելային) անորոշության պայմաններում կիբեռանվտանգության ոլորտում ներդրման համար կիրառում է ռեալ օպցիոն, որի դեպքում ներդրվող z գումարին (ծախս) համապատասխանում է նախագծի W արժեքը: Ընդսմին նախագծի արժեքի և ներդրման ծախսի փոխկախվածությունը նշանակենք β -ով: Քանի որ կազմակերպությունը նախագծի ծախսերի և նախագծի արժեքի հնարավոր զարգացումների հավանականության վերաբերյալ հստակ տեղեկություններ չունի, ապա անորոշության նկատմամբ նրա վերաբերմունքը կլինի բացասական: Ըստ այդմ

¹ Stu L. A. Gordon, M. P. Loeb. Managing Cybersecurity Resources: A Cost-Benefit Analysis. The McGraw-Hill Homeland Security Series. New York, 2006; L. A. Gordon, M. P. Loeb. The Economics of Information Security Investment. "ACM Transactions on Information and System Security", November 2002, Vol. 5, N 4:

վերը նշվածը նախ դիտարկենք մեծ անորոշություն չլինելու պայմաններում: Այս համատեքստում (Ω, \mathcal{F}) -ը չափման տարածությունն է, իսկ P -ն՝ կազմակերպության համար ամենաընդունելի հավանականությունն է: Դա այն հավանականային չափումն է, որը կկիրառի մեծ անորոշության նկատմամբ չեզոք վերաբերմունք ունեցող կազմակերպությունը: Ենթադրենք, թե $w = (w^1, w^2)^T$ -ն P հավանականության նկատմամբ բրոունյան շարժում է, որի համար գործում է $(\mathcal{F}_t)_{t \geq 0}$ զտումը (ֆիլտրացիան), իսկ t ժամանակում կատարվող ծախսի և ներդրումային նախագծի համապատասխան արժեքի փոփոխման ստոխաստիկ պրոցեսներն ունեն հետևյալ դինամիկան.

$$dW_t = \mu_w W_t dt + \sigma_w W_t dw_t^1, \quad dz_t = \mu_z z_t dt + \sigma_z z_t (\beta dw_t^1 + \sqrt{1 - \beta^2} dw_t^2), \quad (1)$$

որտեղ՝ μ_w -ն սպասվող աճման գործակիցն է, իսկ σ_w -ն՝ նախագծի արժեքի նկատմամբ փոփոխականությունը: Նման կերպով՝ μ_z -ն սպասվող աճման գործակիցն է, իսկ σ_z -ը՝ ներդրումային ծախսի փոփոխելիությունը:

Քանի որ տվյալ պարամետրները հաստատուններ են, ուստի W -ն և z -ը երկրաչափական բրոունյան շարժումներ են: Այս պայմաններում, երբ ներդրողը չի կարևորում մեծ անորոշությունը և տվյալ պարամետրներն ընդունում է որպես ստույգ արժեքների, նշված խնդիրը կարելի է լուծել հետևյալ հավասարումով².

$$F(W, z) = \sup_{\tau \in \mathcal{T}} E[e^{-\delta \mathcal{T}} (W_\tau - z_\tau)] = E[e^{-\delta \mathcal{T}^*} (W_{\tau^*} - z_{\tau^*})], \quad (2)$$

որտեղ ρ -ն դիսկոնտավորման գործակիցն է, իսկ \mathcal{T} -ն՝ ներդրման հնարավոր ժամանակների բազմությունը: Վերը նշվածի հաշվառմամբ տվյալ խնդրի լուծման համար օգտագործենք Բելմանի հավասարումը՝

$$\begin{aligned} \mu_w W \frac{\partial F(W, z)}{\partial W} + \mu_z z \frac{\partial F(W, z)}{\partial z} + \frac{1}{2} \sigma_w^2 W^2 \frac{\partial^2 F(W, z)}{\partial W^2} + \frac{1}{2} \sigma_z^2 z^2 \frac{\partial^2 F(W, z)}{\partial z^2} + \\ + \sigma_w \sigma_z \beta W \frac{\partial F(W, z)}{\partial W \partial z} - \delta F(W, z) = 0: \end{aligned} \quad (3)$$

Ընդամին՝ W^* -ը և z^* -ը այն արժեքներն են, որոնց դեպքում ներդրումը կկատարվի, իսկ (3) արտահայտության մասնակի դիֆերենցիալ հավասարումը որոշում է ներդրման օպցիոնի արժեքը հետևյալ սահմանային պայմաններում՝

$$\begin{aligned} \lim_{W \rightarrow 0} F(W, z) = 0, \quad \lim_{z \rightarrow \infty} F(W, z) = 0, \quad F(W^*, z^*) = W^* - z^*, \\ \left. \frac{\partial F(W, z)}{\partial W} \right|_{W=W^*} = 1, \quad \left. \frac{\partial F(W, z)}{\partial z} \right|_{z=z^*} = -1: \end{aligned} \quad (4)$$

Ուեալ օպցիոնների մասնագիտական գրականությունում դրանք կոչվում են ստանդարտ պայմաններ³: Ընդամին՝ առաջինը օպցիոնի արժեքը կման պայ-

² Stu R. McDonald, D. Siegel. The Value of Waiting to Invest. "The Quarterly Journal of Economics", 1986, Vol. 101, N 4:

³ Stu A. K. Dixit, R. S. Pindyck. Investment under Uncertainty. Princeton, 1994; "Real

մանն է, քանի որ ներդրումային նախագծի արժեքը ձգտում է 0-ի, իսկ երկրորդը ցույց է տալիս, որ ներդրման ծախսը անվերջ մեծ լինելու դեպքում ներդրման օպցիոնի արժեքը հավասար կլինի 0-ի: Երրորդը ցույց է տալիս, որ ներդրում կատարելու օպցիոնի արժեքը հավասար է նախագծի արժեքի և ներդրման ծախսերի տարբերությանը (*value matching condition*), իսկ վերջին երկուսը անհրաժեշտ են կամընտրական ներդրումային սահմանագիծը (*smooth pasting conditions*) որոշելու համար: Նշենք նաև, որ խնդրի լուծումը կարելի է բերել մի այնպիսի տեսքի, որ այն կախված լինի միայն $\hat{W} = W/z$ եկամտի գործակցից, այսինքն՝

$$F(W, z) = zf(\hat{W}), \quad (5)$$

որտեղ $f(\hat{W})$ -ը բավարարում է (4) բանաձևում ներկայացված Բելմանի հավասարմանը, և $\hat{W}^* = W^*/z^*$: Ընդամին, կիրառելով (4)-ի վերջին երեք պայմանները, ներդրման օպցիոնի արժեքի համար կունենանք.

$$F(W, z) = z(\hat{W}^* - 1) \left(\frac{W/z}{\hat{W}^*} \right)^a, \quad (6)$$

որտեղ՝

$$a = \frac{\left(\hat{\mu} - \frac{1}{2} \sigma^T \sigma \right) + \left[\left(\hat{\mu} - \frac{1}{2} \sigma^T \sigma \right)^2 + 2\delta \sigma^T \sigma \right]^{1/2}}{\sigma^T \sigma} : \quad (7)$$

Նշենք նաև, որ (7) բանաձևում $\sigma = [\sigma_{\hat{W}}, \sigma_z - \beta \sigma_w]$, $\hat{\mu} = \mu_w - \mu_z$ և $\sigma^T \sigma = [\sigma_w^2 + 2\sigma_w(\sigma_z - \beta \sigma_w) + (\sigma_z - \beta \sigma_w)^2]$: Ըստ այդմ օպտիմալ ներդրման սահմանագիծը կարելի է ստանալ հետևյալ տեսքով⁴.

$$\hat{W}^* = \frac{a}{a-1} : \quad (8)$$

Քանի որ ($a > 1$), կազմակերպությունը կսպասի այնքան ժամանակ, քանի դեռ նախագծի արժեքը ավելի մեծ չէ, քան ներդրման ծախսը⁵:

Խնդիրը կարելի է պարզեցնել՝ ընդունելով, որ ներդրման ծախսը հաստատուն է: Ուստի ներդրման օպցիոնի արժեքը հավասար կլինի.

$$F(W) = (W^* - z) \left(\frac{W}{W^*} \right)^a, \quad (9)$$

որտեղ՝

$$W^* = \frac{\hat{a}}{\hat{a}-1} z, \quad \hat{a} = \frac{-\left(\mu_w - \frac{1}{2} \sigma_w^2 \right) + \sqrt{\left(\mu_w - \frac{1}{2} \sigma_w^2 \right)^2 + 2\sigma\delta}}{\sigma_w^2} > 1: \quad (10)$$

options and investment under uncertainty: classical readings and recent contributions". Ed. by E. Schwartz, L. Trigeorgis. The MIT Press Paperback, 2004:

⁴ Տես նույն տեղում:

⁵ Տես նույն տեղում:

Շեղումակայուն (ռոբաստ) մոդելավորումը հարաբերական էնտրոպիայի միջոցով: Այժմ դիտարկենք այն դեպքը, երբ կազմակերպությունը կիրառանվտանգության ոլորտում ներդրում կատարելիս չի կարող միանգամայն վստահ լինել, որ P -ն ամենաընդունելի հավանականությունն է (*reference measure*): Այս դեպքում կազմակերպությունը պետք է դիտարկի հավանականությունների ավելի մեծ բազմություն: Նշվածի հաշվառմամբ կիրառանվտանգության ոլորտում ներդրումային որոշումների կայացման ասպարեզում մոդելային անորոշության մոդելավորման նպատակով կիրառելի են այլ ոլորտների համար մշակված մի շարք մոտեցումներ⁶: Ընդամին՝ ենթադրվում է, որ որոշում կայացնողը տեղյակ է մոդելում առկա դատարկ բազմությունների մասին և պետք է դիտարկի P -ին համարժեք հավանականություններ: Այս դեպքում կարող ենք կիրառել Գիրսանովի թեորեմը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ($\tilde{P} \sim P$) հավանականություն պետք է բավարարի հետևյալ առնչությանը.

$$\tilde{P}_t(A) = E[1_A \mathcal{E}(\theta)_t], \quad A \in \mathcal{F}_t, \quad (11)$$

որտեղ՝

$$\mathcal{E}(\theta)_t = \exp \left[- \int_0^t \theta_s dw_s - \frac{1}{2} \int_0^t \theta_s^T \theta_s ds \right], \quad (12)$$

իսկ P_t -ն P -ի սահմանափակումն է \mathcal{F}_t -ով, ինչը ճիշտ է նաև \tilde{P}_t -ի համար: Այս դեպքում $\theta = [\theta_1, \theta_2]^T$ պրոցեսն անվանենք աղավաղիչ (*distortion process*), որը չափելի է աստիճանական կարգով և բավարարում է հետևյալ պայմանին.

$$\int_0^\infty \theta_s^T \theta_s ds < \infty, \quad (13)$$

քանի որ՝

$$d\tilde{w}_t^1 = dw_t^1 + \theta_{1t} dt, \quad d\tilde{w}_t^2 = dw_t^2 + \theta_{2t} dt: \quad (14)$$

Այժմ Θ -ով նշագրենք բոլոր θ աղավաղիչ պրոցեսները: Ընդամին ($\tilde{P} \sim P$) հաշվառմամբ ($\theta \in \Theta$) պրոցեսի դեպքում սպասվող աճման գործակիցները \tilde{P} -ի համար կլինեն՝

$$\mu_w - \sigma_w \theta_{1t}, \quad \mu_z - \sigma_z \left(\beta \theta_{1t} + \sqrt{1 - \beta^2} \theta_{2t} \right): \quad (15)$$

Նշվածի հաշվառմամբ (15) գործակիցները համապատասխանաբար ներ-

⁶ Stu E. Anderson, L. Hansen, T. Sargent. A Quartet of Semigroups for Model Specification, Robustness, Prices of Risk, and Model Detection. "Journal of the European Economic Association", March 2003, Vol. 1, N 1; L. Hansen, T. Sargent. Robustness, Estimation and Detection. Chicago, 2009:

մուծելով նախագծի արժեքի և ներդրման ծախսի (1) հավասարումների մեջ՝ կստանանք.

$$\begin{aligned} dW_t &= (\mu_w - \sigma_w \theta_{1t})W_t dt + \sigma_w W_t d\tilde{w}_t^1, \\ dz_t &= \left(\mu_z - \sigma_z (\beta \theta_{1t} + \sqrt{1 - \beta^2} \theta_{2t}) \right) z_t dt + \sigma_z z_t (\beta d\tilde{w}_t^1 + \sqrt{1 - \beta^2} d\tilde{w}_{2t}): \end{aligned} \quad (16)$$

Մոդելային անորոշության հաշվառմամբ (1) հավասարումներում կատարված փոփոխությունները, որոնց միջոցով ստացվել են (16) արտահայտությունները, մեկնաբանենք հետևյալ կերպ: Քանի որ կազմակերպությունը որդեգրել է մեծ անորոշությունից խուսափելու (*ambiguity-averse*) ռազմավարություն, ուստի ամենաընդունելի հավանականությունից շեղված տարբերակի ընտրությունը կհանգեցնի օպցիոնի պակաս շահավետությանը: Մասնավորապես՝ նախագծի արժեքի հավանական շեղումը կարող է լինել շատ ավելի մեծ, քան իրական շեղումն է, մինչդեռ ներդրման ծախսի հավանական շեղումը կարող է իրական շեղումից շատ ավելի փոքր լինել: Նման իրավիճակում կազմակերպությունը խուսափողական ռազմավարության ընտրությունը դիտում է որպես մաքսիմին (*maximin*) խնդիր: Եվ քանի որ կազմակերպությունը հակված չէ կիրառելու իր համար ամենաընդունելի հավանականությունից շեղվող հավանականություն, ապա տվյալ դեպքում որոշում կայացնողի համար պայմանականորեն սահմանենք տույժ (*penalty*):

Այս համատեքստում ներդրում կատարելու օպցիոնի այլընտրանքային արժեքը նշագրենք $\tilde{F}(W, z)$ -ով: Դրանում ներառված են ինչպես սպասվող եկամուտը, այնպես էլ այլ հավանականություն ընտրելու համար նախատեսված տույժը.

$$\tilde{F}(W, z) = \sup_{\tau \in \mathcal{T}} \inf_{\theta \in \Theta} \left[E^{\tilde{P}} [e^{-\delta(\tau-t)} (W_\tau - z_\tau)] + \Psi^{-1} \int_0^\tau \int_\Omega \log \left(\frac{d\tilde{P}_s}{dP_s} \right) d\tilde{P}_s ds \right]: \quad (17)$$

Տվյալ հավասարման երկրորդ մասը վերը նշված տույժն է, որը, ըստ էության, երկու հավանականությունների հարաբերական էնտրոպիան է.

$$\mathcal{R}(\tilde{P}) = \int_0^\tau \int_\Omega \log \left(\frac{d\tilde{P}_s}{dP_s} \right) d\tilde{P}_s ds = \int_0^\tau \int_\Omega \left(- \int_0^s \theta_r dw_r - \frac{1}{2} \int_0^s \theta_r^T \theta_r dr \right) d\tilde{P}_s ds: \quad (18)$$

Նշենք նաև, որ P շեղված հավանականության ընտրությունը համարժեք է θ պրոցեսի ընտրությանը: Մոդելավորման այս եղանակը հավաստում է, որ եթե դիտարկվող երկու մոդելները միմյանցից բավական տարբեր են, ապա հարաբերական էնտրոպիան անվերջ է, և որոշում կայացնողը երբեք չի ընտրի տվյալ հավանականությունը:

Այս տեսանկյունից՝ ամենաընդունելի հավանականության փոխարեն շեղված հավանականության ընտրության դեպքում, մեծ անորոշությունից կազմա-

կերպության խուսափելու աստիճանը պատկերացնելու համար (17)-ում ներկայացված էնտրոպիան, կամ տույժը, նշագրենք Ψ^{-1} -ով, որտեղ⁷.

$$\Psi = \begin{bmatrix} \varphi_1 & 0 \\ 0 & \varphi_2 \end{bmatrix} : \quad (19)$$

Հետևաբար՝ φ_1 -ը կազմակերպության սուբյեկտիվ մեծ անորոշության պարամետրն է w_1 -ի տատանումների առկայությամբ, իսկ φ_2 -ը՝ w_2 -ի դեպքում: Այն դեպքում, երբ որոշում կայացնողը համոզված չէ, որ տվյալ հավանականությունը ամենաընդունելին է, նա կդիտարկի ավելի մեծ հարաբերական էնտրոպիայով մոդելներ:

Ներդրումների մոդելավորումը շեղումակայուն ստոխաստիկ դինամիկական ծրագրավորման միջոցով: Կիրեռանվտանգության ոլորտում օպտիմալ ներդրում կատարելու համար այժմ դիտարկենք շեղումակայուն ստոխաստիկ դինամիկական ծրագրավորումը (Բելմանի շեղումակայուն (ռոբաստ) հավասարումը), որը Բելմանի հավասարման (ոչ շեղումակայուն) հստակեցված տարբերակն է⁸: Շեղումակայունության հաշվառմամբ Բելմանի հավասարման կիրառությունը հասկանալու համար նախ դիտարկենք դրա կիրառությունը այն դեպքում, երբ կազմակերպությունը մեծ անորոշության նկատմամբ ունի չեզոք դիրքորոշում: Բելմանի հավասարման համաձայն՝ անվերջ փոքր զենեքատորի ստեղծած արժեքները պետք է հավասար լինեն սպասվող եկամտի չափին: Այստեղ անվերջ փոքր զենեքատորը մեկնաբանվում է որպես \tilde{F} -ի անվերջ փոքր սպասվող փոփոխություն, այսինքն՝ $E[d\tilde{F}]/dt$:

Հետևաբար, Իտոյի լեմմայի և (1) հավասարումներում արտահայտված մոդելային անորոշության նկատմամբ չեզոք դիրքորոշման դեպքում եկամտի սպասվող աճման չափի (*ambiguity neutral expected growth rates*) հաշվառմամբ կազմված (3) հավասարումը Բելմանի շեղումակայուն հավասարման վերածելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները: Նախ. ներդրումային նախագծի արժեքի և ներդրման ծախսի աճումը պետք է բնութագրվի (16) հավասարումներում ներկայացվող շեղված հավանականություններով, ինչպես նաև անհրաժեշտ է (18) հավասարման մեջ ներմուծել հարաբերական էնտրոպիայի կշռային ածանցյալը: Ըստ այդմ կստանանք՝

$$\mathcal{R}'(\tilde{P}) = \frac{\partial \mathcal{R}(\tilde{P})}{\partial t} = E^{\tilde{P}} \left[\frac{1}{2} \theta^T \theta \right] : \quad (20)$$

⁷ Stu I. Karatzas, S. E. Shreve. Brownian Motion and Stochastic Calculus. New York, 1998; L. Hansen, T. Sargent, G. Turmuhambetova, N. Williams. Robust Control and Model Misspecification. "Journal of Economic Theory", May 2006, Vol. 128, N 1:

⁸ Stu E. Անդերսոն, I. Հանսեն, Թ. Սարգենտ, Նշ. աշխ., P. Maenhout. Robust Portfolio Rules and Detection-Error Probabilities for a Mean-Reverting Risk Premium. "Journal of Economic Theory", May 2006, Vol. 128, N 1:

Վերը նշվածի հաշվառմամբ կարող ենք ստանալ Բելմանի շեղումակայուն հավասարումը⁹.

$$\begin{aligned} \inf_{\theta \in \Theta} & \left[(\mu_w - \sigma_w \theta_1) W \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial W} + (\mu_z - \sigma_z (\beta \theta_1 + \sqrt{1 - \beta^2} \theta_2)) z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} + \right. \\ & \left. + \frac{1}{2} \sigma_w^2 W^2 \frac{\partial^2 \tilde{F}(W, z)}{\partial W^2} + \frac{1}{2} \sigma_z^2 z^2 \frac{\partial^2 \tilde{F}(W, z)}{\partial z^2} + \sigma_w \sigma_z W z \beta \frac{\partial^2 \tilde{F}(W, z)}{\partial W \partial z} - \delta \tilde{F}(W, z) + \right. \\ & \left. + \frac{1}{2} Tr(\Psi^{-1} \theta^T \theta) \right] = 0, \end{aligned} \quad (21)$$

որտեղ Tr -ը մատրիցի հետքն է՝

$$Tr(\Psi^{-1} \theta^T \theta) = \frac{1}{\varphi_1} \theta_1^2 + \frac{1}{\varphi_2} \theta_2^2 : \quad (22)$$

θ աղավաղիչ պրոցեսի համար առաջին կարգի դիֆերենցիալ հավասարման պայմանների օգտագործմամբ՝ կստանանք.

$$\theta_1^* = \varphi_1 \left(\sigma_w W \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial W} + \beta \sigma_z z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} \right), \quad \theta_2^* = \varphi_2 z \sqrt{1 - \beta^2} \sigma_z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} : \quad (23)$$

Վերջին հավասարումները ներմուծելով Բելմանի շեղումակայուն (21) հավասարման մեջ՝ կստանանք հետևյալ մասնակի դիֆերենցիալ հավասարումը.

$$\begin{aligned} & \left(\mu_w - \sigma_w \varphi_1 \left(\sigma_w W \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial W} + \beta \sigma_z z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} \right) \right) W \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial W} + \\ & + \left(\mu_z - \sigma_z \left(\beta \varphi_1 \left(\sigma_w W \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial W} + \beta \sigma_z z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} \right) + (1 - \beta^2) \varphi_2 \sigma_z z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} \right) \right) z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} + \\ & + \frac{1}{2} \sigma_w^2 W^2 \frac{\partial^2 \tilde{F}(W, z)}{\partial W^2} + \frac{1}{2} \sigma_z^2 z^2 \frac{\partial^2 \tilde{F}(W, z)}{\partial z^2} + \beta \sigma_w \sigma_z W z \frac{\partial^2 \tilde{F}(W, z)}{\partial W \partial z} - \delta \tilde{F}(W, z) + \\ & + \frac{1}{2} \varphi_1 \left(\sigma_w W \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial W} + \beta \sigma_z z \frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} \right)^2 + \frac{1}{2} \varphi_2 \sigma_z^2 (1 - \beta^2) z^2 \left(\frac{\partial \tilde{F}(W, z)}{\partial z} \right)^2 = 0 : \end{aligned} \quad (24)$$

Այսպիսով՝ կիրառելիության ոլորտում առկա անորոշության պայմաններում ներդրումային նախագծերի կառավարման ու համապատասխան որոշումների կայացման համար սույն հոդվածում դիտարկված մոդելների կիրառումը կարող է էապես նպաստել տվյալ ոլորտում ներդրումային որոշումների կայացման արդյունավետության մակարդակի բարձրացմանը՝ ստեղծելով հավելյալ արժեք: Տվյալ մոդելների կիրառական նշանակությունը կարող է ռեսուրսների սղության պայմաններում էական լինել կիրառականության ոլորտում ռազմավարական նախագծերի և ծրագրերի կառավարման ժամանակ:

⁹ Տես նույն տեղում:

КИБЕРБЕЗОПАСНОСТЬ

МОДЕЛИРОВАНИЕ РОБАСТНЫХ ИНВЕСТИЦИОННЫХ РЕШЕНИЙ В СФЕРЕ КИБЕРБЕЗОПАСНОСТИ

*А. Г. ГРИГОРЯН, начальник Центра политики национальной безопасности
и информационно-коммуникационных технологий ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Рассмотрен ряд моделей принятия оптимальных инвестиционных решений в сфере кибербезопасности в условиях высоких (модельных) неопределенностей.

Применение этих моделей, базирующихся на робастном стохастическом динамическом программировании, позволит существенно повысить эффективность инвестиционных решений при управлении пакетами стратегических проектов в условиях ограниченности ресурсов с созданием прибавочной стоимости.

CYBERSECURITY

MODELLING OF ROBUST INVESTMENT DECISIONS IN THE SPHERE OF CYBERSECURITY

*A. H. GRIGORYAN, Head, Center for National Security Policy
and Information-Communication Technologies, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

The author has examined a set of models for making optimal investment decisions in the sphere of cybersecurity under great (model) uncertainties.

Application of these models which are based upon the robust stochastic dynamic programming will enable to considerably raise the efficiency of investment decisions at the strategic project portfolio management under limited resources with the creation of the surplus value.

«ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷՔՍՏԵՆՍԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԻՆՏԵՆՍԱԼԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
«ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող

Ազգային տնտեսությունում ռազմաարդյունաբերության առանցքային դերը բացատրվում է այլ ոլորտների հետ համագործակցության լայն հնարավորություններով և դրանց վրա ազդեցության բազմակետոր մեխանիզմների առկայությամբ: Տվյալ մեխանիզմների արդյունավետությունը պայմանավորված է տնտեսության ճյուղային կառուցվածքով, տարբեր հատվածների միջև փոխկապվածություններով և շուկայական հաստատությունների առանձնահատկություններով: Թեև դրանց անկատարությունը կարող է չեզոքացնել ռազմաարդյունաբերության զարգացման դրական արտաքին էֆեկտները և խորացնել բացասական հետևանքները, այնուամենայնիվ, երկրի անվտանգության մակարդակի բարձրացումից հնարավոր տնտեսական էֆեկտները կարող են բավական մեծ լինել՝ երբեմն վերածվելով տնտեսական աճման էական գործոնի:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ռազմաարդյունաբերության արտաքին էֆեկտների հետազոտություններն այնքան էլ շատ չեն, սակայն բավական շատ են այն ուսումնասիրությունները, որոնցում փորձ է արվել գնահատելու ռազմական ծախսերի և ռազմական գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ներ) պետական ֆինանսավորման արտաքին էֆեկտները, քաղաքացիական արտադրության վրա դրանց ազդեցությունը¹: Դրա պատճառն այն է, որ պետությունները հաճախ չեն հրապարակում ռազմաարդյունաբերության թողարկման ծավալների, ներդրումների և արտադրանքի տեսականու մասին տեղեկություններ: Ուստի հիմնականում վերլուծել ենք այն հետազոտությունները, որոնցում դիտարկված է ռազմաարդյունաբերության հետ կապը կամ շեշտված է դրա ամենակարևոր արտաքին էֆեկտը՝ անվտանգության էֆեկտը:

¹ *Stu G. d'Agostino, J. P. Dunne, L. Pieroni.* Does military spending matter for long-run growth? "Defence and Peace Economics", 2017, Vol. 28, Issue 4; *J. Ando.* Externality of Defense Expenditure in the United States: A New Analytical Technique to Overcome Multicollinearity. "Defence and Peace Economics". 23 February 2017 (<http://www.tandfonline.com/doi/full/10.1080/10242694.2017.1293775>); *Uk Heo, Min Ye.* Defense Spending and Economic Growth around the Globe: The Direct and Indirect Link. "International Interactions", 2016, Vol. 42, Issue 5:

Մուսակի հետազոտությունը², ըստ էության, հիմնավորում է ԱդրՀ ռազմական հայեցակարգը, մասնավորապես՝ ռազմական հզորության մեծացման քաղաքականությունը: Ռազմական ծախսերի էքստենզիաները* գնահատելով բնական ռեսուրսների, հակամարտությունների և կոռուպցիայի տեսանկյունից՝ հեղինակը եզրակացնում է, որ թեև ռազմական ծախսերը ուղղակի բացասական ազդեցություն են գործում տնտեսական աճի վրա, բայց սպառնալիքների դեպքում դրանց սահմանային ազդեցությունը դրական է, այսինքն՝ տնտեսական աճի վրա ռազմական ծախսերի ազդեցությունը ոչ գծայնորեն կախված է «արդյունարար ռազմականացնող սպառնալիքներից» (*effective militarized threat*)**, որոնք կարող են հարուցել արտաքին և ներքին ուժերը: Հեղինակը նշում է նաև, որ ռազմական ծախսերը դրականորեն են ազդում ռեսուրսներով հարուստ երկրների տնտեսական աճի վրա այնքան ժամանակ, քանի դեռ ռեսուրսների շահագործումը կոռումպացված չէ:

Նույն տեսակետին են Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի (*MENA*) երկրները հետազոտած հեղինակներ Համիդն ու Աբդելլատիֆը³: Նրանք համարում են, որ ռեսուրսային եկամուտներից կախված պետություններն ունեն մեծ ռազմական ծախսերի և սպառազինությունների գնման համար հիմնավոր պատճառներ: Նախ. այդ պետություններում ռազմական ոլորտը սատարում է կառավարող վարչակարգին, և վերջինս պետք է վճարի դրա համար: Բացի այդ, հարուստ բնական ռեսուրսների առկայությունը նվազեցնում է ռազմական ծախսերի այլընտրանքային ծախսերը***, քանի որ այդ ռեսուրսները պաշտպանելու համար անհրաժեշտ է մեծացնել պետության անվտանգությունը: Սակայն պաշտպանության համար անհրաժեշտ ռազմական ծախսերը միշտ չէ, որ հնարավոր է լինում ապահովել հարկային մուտքերի հաշվին: Դա իշխանություններին ստիպում է ռազմական ծախսերը ֆինանսա-

² Stv *V. Musayev*. Externalities in Military Spending and Growth: The Role of Natural Resources as a Channel through Conflict. "Defence and Peace Economics", 2016, Vol. 27, Issue 3:

* էքստենզիաները (արտաքին էֆեկտներ) շուկայական գործարքների հետևանքով երրորդ կողմի ունեցած օգուտները կամ վնասներն են: Դրանց առկայության դեպքում շուկայական հավասարակշռությունը դադարում է արդյունավետ լինելուց, տեղի է ունենում շուկայի «խաթարում»: Ռեսուրսի պահանջվում է դրանց կարգավորմանն ուղղված պետական միջամտություն, որի դեպքում արտաքին էֆեկտները ինտենսիվացվում են, այսինքն՝ վերափոխվում շուկայական համակարգի ներքին էֆեկտների (ներքին ծախսերի կամ օգուտների):

** Հեղինակն ի նկատի ունի, որ սպառնալիքների առկայությունը պետությանն ստիպում է մեծացնել ռազմական ծախսերը (ռազմականացնել տնտեսությունը), ինչն էլ իր հերթին տնտեսության վրա գործում է խթանիչ ազդեցություն, և ըստ այդմ դրանք անվանում է «արդյունավետ ռազմականացնող սպառնալիքներ»:

³ Stv *H. E. Ali, O. A. Abdellatif*. Military Expenditures and Natural Resources: Evidence from Rentier States in the Middle East and North Africa. "Defence and Peace Economics", 2015, Vol. 26, Issue 1:

*** Այլընտրանքային ծախսերը (*alternative cost*) այլ կերպ կոչվում են չօգտագործված հնարավորությունների ծախսեր (*opportunity cost*): Հոդվածի համատեքստում ռազմական ծախսերի այլընտրանքային ծախսերն այն չկատարված պետական ծախսերն են (և դրանցից ստացվելիք օգուտները, օրինակ՝ սոցիալական կամ կրթական ոլորտներում), որոնք հնարավոր կլինեին կատարել, եթե չֆինանսավորվեին ռազմական ծախսերը:

վորել ռեսուրսների շահագործումից հավաքվող վարձավճարներից, ինչը հանգեցնում է ռեսուրսների անարդյունավետ կառավարմանը, քաղաքական խմբիչխանության հաստատմանը: Հեղինակները, նկատի ունենալով բարեկեցության վրա դրա գործած բացասական ազդեցությունը, երևույթն անվանում են «ռեսուրսային անեծք» և փորձում պարզել, թե ինչպես է տարբեր ռեսուրսներով ապահովվածության աստիճանն ազդում ռազմական ծախսերի մեծության, ուստի և բարեկեցության մակարդակի վրա: Հետազոտության արդյունքներով՝ «ռեսուրսային անեծքի» վարկածը արդարացի է ոչ բոլոր ռեսուրսների պարագայում, այլ թերևս միայն նավթի և անտառանյութի համար: Իսկ ածխի և բնական գազի դեպքում ազդեցությունը նույնիսկ բացասական է, մետաղական հանքաքարի դեպքում՝ չի դիտվում:

Ռազմարդյունաբերության զարգացման արտաքին էֆեկտներն առավել համակողմանիորեն ուսումնասիրել է Գյունլուկ-Սենեսեն՝ շեշտելով այդ առնչությամբ Թուրքիայում ոլորտի զարգացման պատասխանատուներից մեկի դիտարկումները. «Պաշտոնապես սպասվում էր, որ ժամանակակից ռազմարդյունաբերությունից դրական էքստեռնալները կարող են ենթադրել ավելի տարատեսակված արդյունաբերական արտադրանք, արտադրության արդյունավետություն, արտադրանքի որակի բարձրացում, արտարժույթի խնայում, տնտեսական աճման արագացում, ավելացված արժեքի աճում, գործազրկության կրճատում, երկրում ընդհանուր տեխնոլոգիական մակարդակի բարձրացում, աշխատուժի և ակադեմիական բարձրագույն կրթության ու հատկապես ինժեներական կրթության որակի բարելավում»⁴:

Ի դեպ, Թուրքիայի իշխանությունները չէին սխալվում. ներկայումս զարգացած են նրա ռազմարդյունաբերության գրեթե բոլոր ենթաճյուղերը՝ ռադիոէլեկտրոնիկա, նավաշինություն, ավիաշինություն, զրահատեխնիկայի և այլ արտադրություններ, իսկ «ԱՍԵԼՍԱՆ» (*ASELSAN*) և «Թյուրքիշ Աերոսպեյս Ինդաստրիս» (*Turkish Aerospace Industries*) ընկերությունները աշխարհի 100 ամենախոշոր ռազմարդյունաբերական ընկերությունների շարքում են⁵:

Ռուսաստանյան տնտեսագիտական միտքը հազվադեպ է արծարծել ռազմարդյունաբերության արտաքին էֆեկտների հարցերը: Հետազոտությունները առանց էմպիրիկ վերլուծությունների կատարվել են հիմնականում տեսական հարթությունում՝ հաստատութենական տնտեսագիտության շրջանակներում⁶, իսկ ոլորտի զարգացման էքստեռնալների գնահատականը տրվել է փորձագիտական մեթոդով: Ըստ այդ գնահատականի՝ տնտեսական աճի վրա առավել դրական ազդեցություն ունենում է գիտատեխնիկական առաջընթացի խթանման էքստեռնալը, իսկ ամենաթույլը՝ «ազգային անվտանգութե-

⁴ Stü G. *Günlük-Senesen*. Turkey: The Arms Industry Modernization Programme. "Arms Industry Limited". Ed. by Herbert Wulf. Oxford, 1993, PP. 251–267:

⁵ Stü "The SIPRI Top 100 arms-producing and military services companies in the world (excluding China)", 2015 (<https://www.sipri.org/databases/armsindustry>):

⁶ Stü B. B. *Лесных, В. В. Ильяшенко*. Институциональная экономика. Екатеринбург, 2009; B. B. *Лесных, Е. В. Попов*. Положительные экстерналии развития ОПК. Екатеринбург, 2005:

յան ապահովման» էքստերնալը, թեև վերջինս էքստերնալների աստիճանակարգության ամենակարևոր տարրն է: Հեղինակը դա պայմանավորում է այն հանգամանքով, որ ազգային անվտանգության ապահովումն տնտեսությունից կլանում է զգալի միջոցներ, որոնք հակառակ դեպքում կարող էին ուղղվել այլ տնտեսական խնդիրների լուծմանը, ի հաստատումն ինչի բերում է ճապոնիայի օրինակը: Այստեղ առավելագույն տնտեսական զարգացմանը հասել են այն տարիներին, երբ ռազմական ծախսերը եղել են նվազագույնը⁷:

ՈԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷՔՍՏԵՐՆԱԼՆԵՐԸ

էքստերնալների տեսության շրջանակներում ռազմաարդյունաբերության արտաքին էֆեկտների քննարկումը բարդ է, քանի որ ոլորտի բնույթը առևտրային չէ: Սակայն արդի պայմաններում, երբ տարբեր պետությունների ռազմաարդյունաբերական ոլորտներում պետական մենաշնորհն զգալիորեն նվազել է, իսկ ռազմական տեխնոլոգիաներն սկսել են ավելի հաճախ առևտրայնանալ ու ներդրվել քաղաքացիական արտադրություններում, ավելի տրամաբանական է դարձել ոլորտի զարգացումների դիտարկումը շուկայական օրինաչափությունների համատեքստում: Ըստ այդ տեսության՝ արտաքին էֆեկտները ծագում են այն ժամանակ, երբ որոշ բարիքների շուկան զարգացած է, իսկ որոշներինը՝ ոչ, և վերջիններիս արտադրության կամ սպառման ժամանակ օգտագործվում է անվճար ռեսուրս:

Ռազմաարդյունաբերության էքստերնալների մեխանիզմները հաճախ լինում են այլ բնույթի: Եթե հաշվի առնենք, որ տվյալ ոլորտը պետության պաշտպանական համակարգի կարևորագույն բաղադրիչն է, իսկ «պաշտպանությունը» հասարակական բարիք է, որի «արտադրությունը» վերապահված է պետությանը, ապա արտաքին էֆեկտների առաջացման նշված մեխանիզմը բնորոշ կլինի նաև ռազմաարդյունաբերությանը:

Ներկայացնենք ռազմաարդյունաբերության հնարավոր արտաքին էֆեկտները՝ դրանք դասակարգելով ըստ արտաքին էֆեկտը կրող սուբյեկտների:

1. Հասարակություն՝

- ✓ *անվտանգության մակարդակի աճ*, որը կարևոր արտաքին էֆեկտ է, թեև հաճախ չի դասակարգվում որպես էքստերնալ այն տրամաբանությամբ, որ ոլորտի գոյությունն ինքնին թելադրված է անվտանգության պահանջմունքով, մինչդեռ եթե ռազմաարդյունաբերական ձեռնարկությունները դիտենք որպես առևտրային շահի հետապնդող կազմակերպություններ, իսկ պետությունը՝ որպես ռազմական արտադրանքի սպառող, ապա պետության անվտանգության աճումը արտաքին էֆեկտ է, որի կրողը հասարակությունն է,
- ✓ *բարեկեցության աճ*, որը պայմանավորված է պետության անվտանգության աճմամբ, քանի որ դա ձևավորում է լավատեսական սպասում-

⁷ Տես *В. В. Лесных*. Внешние эффекты оборонно-промышленного комплекса и экономическое развитие. «Вестник УРФУ. Серия: Экономика и управление», 2008, № 1:

ներ՝ հասարակությանը մղելով ապրանքների և ծառայությունների ավելի մեծ սպառման, մինչդեռ եթե ռազմապաշտպանական համալիրը ծավալվում է ոչ թե ռազմաարդյունաբերության զարգացման, այլ ռազմական ծախսերի աճման հաշվին, ապա կարող է ի հայտ գալ հակադարձ էֆեկտը՝ հասարակության բարեկեցության անկում, քանի որ ռազմական ծախսերի աճը հանգեցնում է պետության այլ, մասնավորապես՝ սոցիալական (կրթական, առողջապահական), ծախսերի կրճատման,

- ✓ *սպառողական ապրանքների թերարտադրություն*, ինչը ժամանակակից հասարակությունում թեև քիչ հավանական է, այնուամենայնիվ, կան պետություններ, օրինակ՝ Հյուսիսային Կորեան, որտեղ ռազմաարդյունաբերության զարգացումը հանգեցրել է այս բացասական էքստենզալին,
- ✓ *մարդկային կապիտալի զարգացում*, որը տեղի է ունենում, քանի որ ռազմաարդյունաբերությունը, լինելով գիտատար ու տեխնոլոգիատար բնագավառ, ստեղծում է մարդկային կապիտալի պահանջարկ:

2. Զեռնարկություններ՝

- ✓ *համախառն պահանջարկի աճում*, ինչը պայմանավորված է անվտանգության աստիճանի բարձրացման հետևանքով հասարակության բարեկեցության աճմամբ: Համախառն պահանջարկի աճումը, այլ հավասար պայմաններում, խթանում է տնտեսական ակտիվությունը: Տվյալ էֆեկտն անհրաժեշտ է տարբերել ռազմական ծախսերի աճման հետևանքով համախառն պահանջարկի աճման էֆեկտից, քանի որ վերջինս ենթադրում է տնտեսության վրա անմիջական ներգործություն: Բացի այդ, եթե ռազմական ծախսերն ուղղվում են ոչ թե տեղական արտադրանքի գնմանը, այլ ներմուծման դիմաց վճարմանը, ապա կլինի հակադարձ էֆեկտ:
- ✓ *սիներգիկ էֆեկտ*, որը պայմանավորված է ռազմաարդյունաբերության համակարգաստեղծությամբ, քանի որ այն առնչվում է գրեթե բոլոր արտադրական ոլորտներին՝ մետաղամշակմանը, մեքենաշինությանը, ՏՀՏ արտադրությանը, քիմիական արդյունաբերությանը և այլն: Ռեսուրսի ոլորտի զարգացումը կարող է ստեղծել արդյունավետ կլաստերների ձևավորման հիմքեր, ինչն էլ կապահովի արտադրողականության աճման սիներգիկ էֆեկտը, այդ թվում նաև արտադրության հարակից և սպասարկող ոլորտների աշխուժացում,
- ✓ *տեխնոլոգիաների փոխանցման էֆեկտ*, որը տեղի կունենա, երբ ռազմաարդյունաբերության զարգացումը հանգեցնի տեխնոլոգիական առաջընթացի, իսկ տեխնոլոգիաների փոխանցումը ռազմականից քաղաքացիական և երկակի նախանշանակման արտադրական ոլորտներ աշխուժացնի տնտեսությունը՝ արտադրողներին հնարավորություն տալով ընդլայնելու իրացման շուկաները, օգտվելու մասշտաբի էֆեկտի առավելություններից,
- ✓ *արտադրության քաղաքացիական նախանշանակման ոլորտներից որակյալ մարդկային կապիտալի հոսք դեպի ռազմաարդյունաբերական ոլորտ*, որտեղ ավանդաբար աշխատավարձն ավելի բարձր է, ուստի

աշխատուժի նման արտահոսքը կանխելու համար արտադրողները կարող են բարձրացնել աշխատավարձը, ինչն էլ կմեծացնի թողարկվող արտադրանքի ինքնարժեքը կամ կկրճատի թողարկման ծավալները:

3. Պետություն՝

սովորաբար պետությունը չի դիտվում որպես արտաքին էֆեկտ կրող կողմ, այլ հանդես է գալիս էքստերնալները կարգավորողի, ինտերնալացման միջոցառումների նախաձեռնողի դերում: Սակայն ռազմաարդյունաբերության պարագայում իմաստ ունի քննարկել նաև այն հարցը, թե ռազմաարդյունաբերության զարգացումից ինչ էքստերնալներ կարող է ունենալ պետությունը:

- ✓ *պետական ծախսերի արդյունավետության աճ*, ինչը հետևանք է այն բանի, որ տեղական ռազմաարդյունաբերական ընկերություններից արտադրանքի գնման ժամանակ պետության ռազմական ծախսերի մի մասը հարկերի տեսքով վերադառնում է պետական բյուջե: Այսպես. ըստ որոշ գնահատումների՝ Ռուսաստանում ռազմական պատվերին կամ ԳՀՓԿԱ-ների ֆինանսավորմանը հատկացվող 100 ռուբլուց 43-ը վերադառնում է պետական բյուջե՝ որպես հարկային վճարում⁸,
- ✓ *գործազրկության մակարդակի կրճատում*, որը հետևանք է այն բանի, որ ռազմաարդյունաբերության, հարակից արտադրական ու սպասարկող ոլորտների աշխուժացման, կլաստերային զարգացման էֆեկտի շնորհիվ երկրում կբացվեն նոր աշխատատեղեր՝ մեղմելով սոցիալ-տնտեսական խնդիրների սրությունը,
- ✓ *արտարժույթի արտահոսքի կասեցում*, ինչն առավել դրականորեն է անդրադառնում հատկապես այն պետությունների վրա, որոնք զգալի միջոցներ են տրամադրում սպառազինությունների ներկրմանը: Դա նաև նվազեցնում է արժութային փոխարժեքի կարգավորման համար ինտերվենցիաների (միջամտությունների) հնարավորությունը և խնայում արտարժութային պահուստները,
- ✓ *գիտատեխնիկական առաջընթացի խթանում*, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ, ինչպես արդեն նշել ենք, ոլորտը գիտատար ու տեխնոլոգիատար է,
- ✓ *տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավում*, այն է՝ տեղում հանքահումքային արտադրանքի վերամշակման և մեծ ավելացված արժեք ունեցող ապրանքների արտահանման հնարավորությունների մեծացում, ներմուծման որոշակի կրճատում:

Նկատենք, որ ռազմաարդյունաբերության էքստերնալների բնույթը մեծապես պայմանավորված է այն բանով, թե ինչ ելակետային պայմաններում է գտնվում տնտեսությունը, ինչպիսին են ՀՆԱ-ի կառուցվածքը, ռեսուրսային ապահովվածության մակարդակը, աշխարհաքաղաքական պայմանները:

⁸ См Г. А. Лавринов. О влиянии военных расходов на развитие экономики страны. «Военная мысль», 2007, № 12:

Հայաստանի նման բաց տնտեսությամբ փոքր պետության համար, որը ներկրում է սպառազինություն ու ռազմական տեխնիկա, այն էլ՝ առավելապես մեկ պետությունից, դրական էքստեռնալները վստահաբար կգերակշռեն:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԷՖԵԿՏՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎԱՆՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տրամաբանական է էքստեռնալների ինտեռնալացման մասին խոսել այն ժամանակ, երբ կա արտաքին էֆեկտ: Հայաստանի պարագայում նվազագույն անհրաժեշտությունը ռազմաարդյունաբերության՝ որպես առանձին արտադրական ոլորտի կայացումն է: Քանի դեռ արտաքին էֆեկտների մասին խոսվում է հավանականային բնույթի դատողություններով, դրանց ինտեռնալացման ուղիների քննարկումը նույնպես կատարվելու է ռազմաարդյունաբերության հնարավոր հեռանկարային զարգացման տեսակետից:

Ոլորտի առանձնահատկությունների հետևանքով արդիական չեն արտաքին էֆեկտների ինտեռնալացման նկատմամբ հայտնի մոտեցումները՝ փոխհատուցող հարկերի ու սուբսիդիաների ներդրումը⁹ կամ սեփականության իրավունքի հստակ սահմանումը և բանակցությունների միջոցով փոխանակումը¹⁰, իսկ Հայաստանի պարագայում դրանք կիրառելի չեն ևս մի քանի պատճառներով: Նախ. հիմնական ռազմաարդյունաբերական ձեռնարկությունները պետական (ՊՆ) ենթակայության են, ինչն անհիմաստ է դարձնում պետական կառավարման այնպիսի լծակների օգտագործումը, ինչպիսիք են հարկերը և սուբսիդիաները: Մյուս կողմից՝ սեփականության ձևի փոփոխությունը, այսինքն՝ պետական (կամ պետական մասնակցությամբ) ձեռնարկությունների մասնավորեցումը, չի կարող դիտվել որպես նպատակահարմար, քանի որ շուկայական տնտեսության պայմաններում արտադրողներն առավելապես հակված են դուրս գալու արտադրանքի իրացման արտաքին շուկաներ, ինչի հետևանքով դարձյալ առաջանում է դրական էքստեռնալների «թերսպառման» հնարավորություն, ինչպես, օրինակ, եղավ Հայաստանում ՏՀՏ ոլորտի զարգացման պարագայում:

Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ սպառազինությունների համաշխարհային շուկա մտնելը փոքր երկրների արտադրողների համար բարդ է և գործնականում քիչ հավանական: Բացի այդ, սեփականության իրավունքները հստակեցնելուն ու դրանք առանց էական գործարքային ծախսերի փոփոխելու կարող է խոչընդոտել ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտի անկատարությունը: Մասնավորապես՝ «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը ռազմաարդյունաբերական գործունեություն է համարում «ռազմական կարիքների համար *պետական պատվերների հիման վրա* (ընդգծումը մերն է. – Գ. Հ.) սպառազինության,

⁹ Stu A. C. Pigou. The Economics of Welfare, 1920 (http://files.libertyfund.org/files/1410/Pigou_0316.pdf):

¹⁰ Stu R. H. Coase. The Problem of Social Cost. "The Journal of Law & Economics", October 1960, Vol. 3:

ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման, արդիականացման, արտադրության, վերականգնման, նորոգման, ծառայությունների մատուցման և սպասարկման աշխատանքների տնտեսական գործունեության ձևերի համակցությունը»¹¹:

Այս ձևակերպումը ռազմական ծախսերին նպատակաուղղվող բյուջեական միջոցների տրամադրման և արտահանման համար արտադրանք թողարկելու անհնարինության հետևանքով (երկակի նախանշանակման արտադրանքի պարագայում որոշ բացառություններով), ըստ էության, սահմանափակում է տնտեսավարող սուբյեկտների ձեռնարկատիրական ազատությունը: Փաստ է նաև, որ ռազմաարդյունաբերության ոլորտում նոր տեխնոլոգիական արտադրանքի թողարկումը հնարավոր է միայն ԳՀՓԿԱ-ների հսկայածավալ ֆինանսավորման դեպքում, ինչն անում է պետությունը¹² (Հայաստանում ընդհանուր հետազոտական և նախագծային աշխատանքները 80 %-ով¹³, իսկ պաշտպանական բնույթի հետազոտական ու նախագծային աշխատանքները 100 %-ով ֆինանսավորվում են պետական բյուջեից¹⁴): Նման պայմաններում անհրաժեշտ են ռազմաարդյունաբերության արտաքին էֆեկտների ինտեռնալացման նկատմամբ այնպիսի մոտեցումներ, որոնք հաշվի առնեն Հայաստանում ոլորտի զարգացման գերակայությունները և առանձնահատկությունները:

Հասարակության համար արտաքին դրական էֆեկտներն արդյունավետ կերպով ինտեռնալացնելու համար առաջարկում ենք ռազմաարդյունաբերության զարգացումը դիտել որպես պետության անվտանգության ապահովման գերխնդրի լուծման *միակ* և տնտեսական զարգացման խնդրի լուծման *առավել արդյունավետ* եղանակ: Ըստ այդմ մշակել ոլորտի զարգացման ռազմավարություն, որը ներառի հստակ միջոցառումներ՝ սկսած կրթական ոլորտում համապատասխան մասնագիտական ուղղությունների ձևավորումից մինչև արտաքին շուկաներում հայրենական ռազմական արտադրանքի առաջընթացի մեխանիզմների հստակեցումը: Խնդիրը պարզ է. ունենալ տեղական ռազմաարդյունաբերություն: Տարբեր պետություններ այդ խնդիրը լուծում են տարբեր կերպ: Այսպես. Սինգապուրը ոլորտի զարգացման նախնական փուլում կանխատեսված կերպով մատուցում էր ռազմածովային նավերի նորոգման և սպասարկման ծառայություններ, ինչը հետագայում հնարավորություն տվեց զարգացնելու նավաշինությունը: Հունաստանն սպասարկում էր ՆԱՏՕ-ի ինքնաթիռները՝ ռազմաարդյունաբերության ոլորտում գիտելիքների և փորձի կուտակման և հետագայում սպառազինություն-

¹¹ Տես «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ 2015 թ. մարտի 25-ի հմ. ՀՕ-16-Ն օրենքը, հոդ. 2, կետ 5 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154>):

¹² Տես “2017 Global R&D Funding Forecast”, Winter 2017:

¹³ Տես «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2016»: Ե., 2016, էջ 146:

¹⁴ Տես «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ 2016 թ. դեկտեմբերի 8-ի հմ. ՀՕ-209 օրենքը (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5651&lang=arm>):

ների ու ռազմական տեխնիկայի արտադրության ավելի բարդ փուլերի անցնելու համար¹⁵: Թուրքիան սկսեց Իսպանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի արդյունաբերողների հետ ակտիվորեն ստեղծել համատեղ ձեռնարկություններ և կազմակերպել սպառազինությունների լիցենզավորված արտադրություն: Ի դեպ, համատեղ ձեռնարկությունների հիմնումը և սպառազինությունների լիցենզավորված արտադրությունը կարող են լավ մեկնակետ լինել նաև Հայաստանի ռազմարդյունաբերության զարգացման համար: Նպատակահարմար է նաև նախնական փուլում ձեռք բերել պայմանագրեր, որոնք հնարավորություն կտան մասնակցելու ներմուծվող (և ոչ միայն) ռազմական արտադրանքի թողարկման արժեչթաներին՝ առանձին դետալների ու մասերի տեղական արտադրության կազմակերպման ճանապարհով:

Մարդկային կապիտալի զարգացման և «ուղեղների արտահոսքի» կասեցման դրական էֆեկտ ստանալու համար կարևոր է մասնագետների պատրաստումը կազմակերպել ըստ տնտեսության պահանջարկի՝ երաշխավորված աշխատանքի հեռանկարով, իսկ ռազմարդյունաբերության ոլորտում համապատասխան մասնագետների պատրաստումը կատարել պետական պատվերի շրջանակներում: Ընդհանրապես տնտեսության հատվածների (գիտակրթական–արտադրական, ֆինանսական–արտադրական, պետական–մասնավոր) միջև արդյունավետ փոխգործությունը ռազմարդյունաբերության արտաքին դրական էֆեկտների ապահովման նախապայմանն է:

Հույժ կարևոր է հատկապես պետություն–մասնավոր հատված համագործակցության մեխանիզմների մշակումը: Արդեն նշել ենք, որ ռազմարդյունաբերական ձեռնարկությունների մի զգալի մասը պետական ենթակայության է, ինչը շուկայական տնտեսության պայմաններում կարող է խոչընդոտ դառնալ մշակված ռազմական տեխնոլոգիաները առևտրայնացնելու և արտադրության այլ (քաղաքացիական) հատվածներին փոխանցելու համար: Մյուս կողմից՝ այն մասնավոր ընկերությունները, որոնք ինքնուրույն կերպով կձեռնարկեն ռազմական կամ երկակի նախանշանակման արտադրանքի թողարկում, ռազմարդյունաբերական շուկա մուտք գործելիս կարող են բախվել խնդիրների, համեմայն դեպս՝ օրենսդրաիրավական առումով, քանի որ «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը չի հստակեցնում, թե ինչ պայմանով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարել ռազմարդյունաբերական գործունեություն, այն է՝ պետական պատվերը պետք է նախորդի ռազմական արտադրանքի թողարկմանը, թե ձեռնարկությունները ռազմական նախանշանակման արտադրանքի շուկայում կարող են հանդես գալ որպես առաջարկի ինքնուրույն սուբյեկտ: Վերջին դեպքում արտադրանքի չերաշխավորված իրացման հեռանկարը կարգելակի ներդրումային նախաձեռնությունները:

¹⁵ Stu J. Brauer. The Arms Industry in Developing Nations: History and Post-Cold War Assessment. Paper presented at the conference on Military Expenditures in Developing and Emerging Nations, Middlesex University. London, 13–14 March 1998 (<http://carecon.org.uk/Chula/Ch09-Brauer.pdf>):

Այդուհանդերձ, ռազմաարդյունաբերության զարգացման արտաքին էֆեկտների ինտեռնալացման առավել արդյունավետ ուղին տնտեսության կլաստերացումն է: Ռազմաարդյունաբերական կլաստերների ձևավորումը «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքով վերապահված է Ռազմաարդյունաբերական պետական կոմիտեին: Նույն օրենքով ռազմաարդյունաբերական կլաստերը սահմանվում է որպես «միմյանց լրացնող և մրցունակություն ապահովող, ռազմական կարիքների համար պետական պատվերներ կատարող կազմակերպությունների փոխկապակցված խումբ»¹⁶: Մեր կարծիքով՝ այս սահմանումը նույնպես որոշակիորեն սահմանափակում է ոլորտի (տնտեսության) կլաստերային զարգացման հնարավորությունները, և տվյալ պարագայում նույնպես անհրաժեշտ է շեշտել պետություն–մասնավոր հատված համագործակցությունը:

Նման կլաստերների ձևավորումը ենթադրում է գիտաարտադրական միավորումների ստեղծում: Դրանք ռազմավարական համագործակցության պայմանագրի հիման վրա կմիավորեն պետական հաստատությունները, մասնավոր առևտրային կազմակերպությունները, հաստատութենական ներդրողներին¹⁷: Ընդամին, այդ կլաստերները կթողարկեն ոչ միայն ռազմական (և/կամ երկակի), այլև քաղաքացիական նախանշանակման արտադրանք՝ տնտեսությունում ապահովելով արտադրողականության աճի սիներգիկ էֆեկտ:

Գոյություն ունի նաև ռազմաարդյունաբերության զարգացման բացասական էքստեռնալների որոշակի հավանականություն, օրինակ՝ տնտեսությունում կատարված կառուցվածքային փոփոխությունների հետևանքով քաղաքացիական ապրանքների թերարտադրությունը կամ հեռանկարում կառուցվածքային գործազրկության աճումը:

Հայաստանի դեպքում ակնկալվող դրական էքստեռնալները բազմակիորեն գերազանցում են հնարավոր բացասական արտաքին էֆեկտները, ինչը պայմանավորված է երկու հանգամանքով: Նախ. *guns versus butter* (թնդանոթ, թե կարագ) հայտնի երկընտրանքը իմաստ կունենա այն դեպքում, երբ տնտեսությունը գործի ռեսուրսների լրիվ զբաղվածության (կամ դրան մոտ) պայմաններում: Բացի այդ, տեխնիկական առաջընթացի ներկայիս իրողությունները փաստում են, որ տեխնոլոգիաների փոխանցումը ռազմական արտադրությունից քաղաքացիականի և հակառակը կատարվում է բավական սահուն կերպով. կլաստերային զարգացման պարագայում, նման տեխնոլոգիաների մշակումը գերազանցապես տեղի է ունենում ոչ թե փոխբացառման, այլ փոխլրացման տիրույթում:

Ամփոփում: Ռազմական արդյունաբերության զարգացումը կարող է ունենալ զգալի դրական էքստեռնալներ, սակայն դա պահանջում է տնտեսության

¹⁶ Տես «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը, հոդ. 2, կետ 7 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154>):

¹⁷ Տես *К. С. Хачатурян, А. Е. Николаев*. Кластерный механизм государственно-частного партнерства в стратегии инновационного развития оборонной промышленности России. «Транспортное дело России», 2013, № 6, часть 1:

այնպիսի կառուցվածքի ձևավորում, երբ տարբեր հատվածների ու ճյուղերի միջև գոյություն ունենա սերտ համագործակցություն և արտադրական արժե- շղթաներում հստակեցվի յուրաքանչյուր (արտադրության) սուբյեկտի դերը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ռազմական արդյունաբերության արտաքին էֆեկտների ինտեռնալացման լավագույն ուղին տնտեսության կլաստերացումն է, որը հնարավորություններ է ստեղծում պետական ու մասնավոր ընկերությունների, գիտակրթական ու արտադրական կազմակեր- պությունների արդյունավետ համագործակցության համար, նախապայմաններ է ձևավորում գիտակարգերի փոխներթափանցման, համատեղ հետազոտույթ- յունների կատարման, «գիտություն – նորամուծություն – արտադրություն» հա- մագործակցային շղթայի կազմակերպման և տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման համար: Ակնհայտ է, որ այդ շղթաների ձևա- վորումն ու զարգացումը պահանջում են լավ մշակված երկարաժամկետ քաղաքականություն: Անկախ տնտեսական զարգացման ապահովման գե- րակա ուղղություններից՝ պետության հիմնական գործառույթներից մեկը տնտեսությունում ռեսուրսների այնպիսի վերաբաշխումն է, որի շնորհիվ առավել դրական ազդեցությամբ արտադրությունները հաջողությամբ հան- դես կզան շուկայական մրցապայքարում:

**ՆԱԿԹԻ ՑԱԾՐ ԳՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԱՐԴՐԵՋԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ԵՎ ՈԱԶՄԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

*Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական
վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան*



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարիներ շարունակ Ադրբեջանում տնտեսական աճ- ման արագ տեմպերը պայմանավորված էին նավթի բարձր միջազգային գներով: Դրանց ամենաբարձր ցուցանիշը եղել է 2008 թ., երբ մեկ բարելի գինը 147 դոլար էր: Այնուհետև գներն սկսել են նվազել, ինչն ուղղակիորեն անդրադարձել է ԱդրՀ բյուջեական եկամուտների, մանաթի փոխարժեքի, ֆինանսական հատվածի և իրական տնտեսության վրա:

Ներկայումս Ադրբեջանի ղեկավարությունը քայլեր է ձեռնարկում տնտեսական վիճակը շտկելու և զարգացման մոդելը փոխելու ուղղությամբ: Նավթային եկամուտների կրճատման պայմաններում դա, առա- ջին հերթին, ենթադրում է ոչ նավթային ոլորտների և տեխնահենք տնտե- սության զարգացման համար նախապայմանների ստեղծում: Իհարկե, տնտե-

սական զարգացման մոդելի փոփոխման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը ազդում են Ադրբեջանի բոլոր տնտեսական ոլորտների, այդ թվում՝ ռազմական արդյունաբերության, կառուցվածքի և զարգացման հեռանկարների վրա:

ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԿԹԻ ԳՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող բարդ գործընթացները, նավթի հիմնական սպառող պետություններում տնտեսական աճման դանդաղումը, ինչպես նաև այլ համաշխարհային գործոններ հանգեցրել են 2014 թ. հունիս ամսին նավթի գնի ավելի քան եռակի կրճատման¹: Խնդիրը բարդանում է, քանի որ նավթի արդյունահանման ծավալները կրճատելու վերաբերյալ Նավթ արտահանող երկրների կազմակերպության (OPEC) անդամ և ոչ անդամ պետությունների համաձայնության հետ մեկտեղ (դրան միացել է նաև Ադրբեջանը) ԱՄՆ-ը մեծացնում է նավթի արդյունահանման ծավալները, ինչը սահմանափակում է նավթի գների աճը:

Այս բոլոր զարգացումները ազդեցություն են գործել նաև Ադրբեջանի վրա: Դա սպասելի էր, քանի որ Ադրբեջանի նավթային եկամուտները ունեին որոշակի ժամանակային սահմանափակումներ և ուղղվում էին սպառման²:

Որպես նավթային եկամուտների կտրուկ անկման արդյունք՝ արժույթային պահուստների պահպանման, վճարային հաշվեկշռի հավասարակշռման և ազգային տնտեսության մրցունակության ապահովման նպատակով 2015 թ. դեկտեմբերին Ադրբեջանն անցել է ազգային արժույթի լողացող փոխարժեքին, ինչի պատճառով մանաթն արժեզրկվել է: Դա երկրորդ անգամ էր, քանի որ 2015 թ. փետրվարին մանաթն արժեզրկվել էր 30 %-ով: Այսպիսի բացասական գործոնների ազդեցությամբ Կենտրոնական բանկի ոսկու և արտարժույթային պահուստները 2014 թ. նոյեմբերին 15 միլիարդ դոլարից 2016 թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ նվազել էին մինչև 4,1 միլիարդ դոլարի³:

Ադրբեջանում նավթային ոլորտը ապահովում է արտահանումից ստացվող եկամուտների 95 %-ը և բյուջեական եկամուտների ավելի քան 2/3 մասը⁴: Նավթի ցածր միջազգային գների բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով Ադրբեջանի ղեկավարությունը վարում է օտարերկրյա ներդրումները ոչ նավթային ոլորտ ներգրավելու քաղաքականություն: Դա անհրաժեշտ է տնտեսության կայուն զարգացման և տնտեսական աճման ապահով-

¹ Стu «Обзор экономики Азербайджанской Республики в 2015 году. Факторы, оказавшие влияние на экономическую ситуацию в стране пребывания» (http://ved55.ru/file/activity/file/Economics_Azerbaijan_2015.pdf):

² Стu Александр Зотин. Азербайджан: восточная сказка длиной в 30 лет, 24 марта 2017 (<http://carnegie.ru/2017/03/24/ru-pub-68386>):

³ Стu «Страновые оценки: Азербайджан». Доклад о переходном процессе за 2016-2017 годы. «Европейский Банк Реконструкции и Развития» (http://2016.tr-ebrd.com/wp-content/uploads/2016/12/TR2016-17_%D0%90%D0%B7%D0%B5%D1%80%D0%B1%D0%B0%D0%B8%CC%86%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD.pdf):

⁴ Стu "Azerbaijan Country Monitor, Country Report". IHS Global Inc., 2017, P. 3:

ման համար: Ադրբեջանի տնտեսության տեխնոլոգիական հետամնացության հաշվառմամբ նրան անհրաժեշտ է օտարերկրյա կապիտալ, որը կնպաստի նոր տեխնոլոգիաների և կառավարման ժամանակակից մեթոդների ներդրմանը, ինչպես նաև ներքին ներդրումների աճմանը: Մինչդեռ 2 վերջին տարիներին Ադրբեջանից դուրս է հանվել ավելի քան 10 միլիարդ դոլարի օտարերկրյա կապիտալ: Դա պայմանավորված է վճարունակ պահանջարկի անկմամբ⁵:

Ադրբեջանի վատթարացող տնտեսական վիճակի վկայությունն է նաև Ասիական զարգացման բանկի զեկույցը, ըստ որի՝ 2017 թ. սպասվում է ՀՆԱ-ի անկում 1,1 %-ով⁶, արդյունաբերությունում՝ 0,5 %-ով, ինչպես նաև շինարարության ոլորտում անկում 10 %-ով՝ պայմանավորված պետական ներդրումների կրճատմամբ⁷:

Նավթի ցածր գների պահպանման բացասական հետևանքների հաղթահարման և տնտեսական զարգացման նոր մոդելի անցման համար 2016 թ. դեկտեմբերի 6-ին Ադրբեջանի Նախագահ Իլիամ Ալիևը հաստատել է «Ազգային տնտեսության և տնտեսական կարևոր ոլորտների ռազմավարական «ճանապարհային քարտեզը»»:

Ռազմավարական «ճանապարհային քարտեզը» վերաբերում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներին ու ներառում է 2016–2020 թթ. տնտեսական զարգացման հայեցակարգն ու գործողությունների ծրագիրը, երկարաժամկետ հեռանկարը մինչև 2025 թ. և նպատակային հեռանկարը 2025 թվականից հետո: Ռազմավարական «ճանապարհային քարտեզում» շեշտվում է ոչ նավթային ոլորտներում խոր մասնագիտացմամբ մինչև 2025 թ. գիտութենահեռք տնտեսության, իսկ 2025 թվականից հետո՝ նորամուծությունների վրա հիմնվող զարգացման մոդելին անցման անհրաժեշտությունը:

Ռազմավարական «ճանապարհային քարտեզում» առանցքային կարևորություն է տրված Ադրբեջանի տնտեսական բազմազանեցմանը, խորացված մասնագիտացման ապահովմանը և ոչ նավթային ոլորտներում բարձր ավելացված արժեքի ստեղծմանը: Ոչ նավթային ոլորտների զարգացման պահանջը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նավթային ոլորտը ապահովում է աշխատուժի զբաղվածության ընդամենը 1 %-ը:

Մյուս խնդիրը նավթային եկամուտների արդյունավետ բաշխումն է: Քանի որ նավթի գների տատանումները առաջացնում են ազգային արժույթի տատանումներ, Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամի առջև խնդիր է դրվել պետական բյուջեի ֆինանսավորումը նպատակաուղղելու կայուն զարգացման ապահովմանը:

⁵ Stu *С. Алиева*. Из Азербайджана «утекло» более \$10 млрд. иностранных инвестиций. «ЭХО». Общественно-политическая газета, 29.06.2017 (<http://ru.echo.az/?p=60504>):

⁶ Stu «В строительном секторе Азербайджана прогнозируется 10-процентный спад». «vesti.az», 06.04.2017 (<http://www.vesti.az/news/327666>):

⁷ Stu նույն տեղում:

Ադրբեջանի տնտեսական գերակայությունների թվում է լինելու ծանր արդյունաբերության և մեքենաշինության զարգացումը, որը անմիջականորեն առնչվում է ռազմական արդյունաբերությանը: Կարևոր խնդիր լինելու է գյուղատնտեսական տեխնիկայի համալրող մասերի, հանքափորային սարքավորանքի, սև մետալուրգիայի արտադրանքի ներկրումից կախվածության նվազումը: Ներդրումների գերակշիռ մասն ուղղվելու է 2019 թ. Սումգաիթում՝ հինգ գործարաններից բաղկացած մետաղագործական համալիրի կառուցմանը⁸:

Ներդրումների խթանման համար Ադրբեջանի հարկային կոդեքսում կատարվել են փոփոխություններ, որոնցով նախատեսվում է ձեռնարկատերերին հարկային արտոնությունների տրամադրում: Մասնավորապես՝ ներդրողների դերում հանդես եկող իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցներին տրամադրվելու են ներդրումների խթանման հավաստագրեր, որոնք հինք կտան նոր նախագծերի շրջանակներում հարկային և մաքսային արտոնություններ ստանալու համար⁹:

Ղրա հետ մեկտեղ Ադրբեջանի ղեկավարությունը քայլեր է ձեռնարկում բանկային հատվածի կայունության ապահովման համար: Ղա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ որոշ հաշվարկումների համաձայն՝ ընդհանուր առմամբ ժամկետանց վարկերի ծավալը կազմում է Ադրբեջանի բանկային կապիտալի ավելի քան 1/3 մասը¹⁰:

2018–2021 թթ. նախատեսվում է բանկային համակարգի առողջացման և ոլորտի ֆինանսական կայունության ապահովման համալիր միջոցառումների իրականացում: Այդ միջոցառումների թվում են համակարգաստեղծ բանկերի կարգավորման մեխանիզմների կատարելագործումը, կապիտալի կայունություն չապահոված բանկերի վերակառուցումը, լիկվիդայնության գործիքների ընդլայնումը, չաշխատող ակտիվների վաճառք խրախուսող իրավական մեխանիզմների ստեղծումը, բանկերում ռիսկերի կառավարման ավելի առողջ համակարգի կիրառումը: Նախատեսվում է նաև արժեթղթերի շուկայում բանկային ոլորտի մասնակցության խթանում, միջբանկային դրամական շուկայի զարգացում և բանկերի ֆինանսական հաշվետվողականության թափանցիկության մեծացում¹¹:

Պետք է նշել, որ Ադրբեջանի բանկային հատվածի առանցքային խնդիրներից է Ադրբեջանի միջազգային բանկի պարտավորությունների մարումը: Ադրբեջանի այդ խոշորագույն բանկի փրկությունը, որի բաժնետոմսերի 3/4 մասը պատկանում է Ադրբեջանի ֆինանսների նախարարությանը,

⁸ Տես *Рухат Кулиев. Улучшение инвестиционного и предпринимательского климата в экономике Азербайджана, 05.04.2017* (<http://www.bosco-conference.com/ru/novosti/item/uluchshenie-investicionnogo-i-predprinimatelskogo-klimata-v-ekonomike-azerbajdzhana>):

⁹ Տես նույն տեղում:

¹⁰ Տես «Азербайджан: Экономика трещит по швам». «ИНОСМИ.РУ», 09.09.2016 (<http://inosmi.ru/economic/20160909/237800484.html>):

¹¹ Տես «В Азербайджане разработают дорожную карту по банковскому сектору». «vesti.az», 24.10.2017 (<http://www.vesti.az/news/344972>):

զնահատվում է Ադրբեջանի ՀՆԱ-ի 27 %-ի չափով¹²: Ադրբեջանի մասնավոր բանկերը նույնպես ունեն լուրջ ֆինանսական խնդիրներ:

Ներմուծումը տեղական արտադրությամբ փոխարինելու քաղաքականությունը առաջին հերթին ենթադրում է գործարարության համար ֆինանսական միջոցների ներգրավման դյուրին մեխանիզմների ներդրում: Այնուամենայնիվ, Ադրբեջանի ֆինանսական ոլորտը ճգնաժամային վիճակում է և ի գործու է նպաստելու տեղական գործարարական ծրագրերի ֆինանսավորմանը: Խնդիրը բարդանում է նաև այն պատճառով, որ մասնաթի փոխարժեքի նկատմամբ անվստահությունը գործարարների տեսանկյունից ի չիք է դարձնում բանկային ֆինանսավորումից օգտվելու նպատակահարմարությունը:

Այս բացասական գործոնների առկայությունը և բանկային համակարգի լիկվիդայնության հետ կապված լրջագույն խնդիրները ազդում են Ադրբեջանի միջազգային վարկունակության վրա: ՌԻստի Ադրբեջանի համար թանկանալու է միջազգային ֆինանսական կազմակերպություններից միջոցների փոխառումը:

Բարդ ներքին ֆինանսատնտեսական իրավիճակում Ադրբեջանը ակտիվացնում է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ արտաքին առևտրատնտեսական կապերի ընդլայնումը: Մասնավորապես՝ ներգակիրների ցածր գների պայմաններում Ադրբեջանի ղեկավարությունը կարևորում է հետևյալ միջոցառումները.

- Ազերի–Չիրազ–Գյունեշլի հանքավայրից նավթի գազաթնակետային արդյունահանման ավարտից հետո իր վերածում միջազգային առևտրային հոսքերի և բեռնափոխադրումների տարանցման հանգույցի,
- այլ պետությունների հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծում,
- այլ պետությունների հետ առևտրում մաքսային ընթացակարգերի առավելագույն դյուրացում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՂԵԼԻՆ ԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԻԲԵԶԱՆԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Զարգացման նոր մոդելի անցնելու պարագայում Ադրբեջանի ռազմական արդյունաբերության համար ծագող հիմնախնդիրները վերլուծելուց առաջ նպատակահարմար է ուսումնասիրել այդ մոդելի ազդեցությունը ընդհանուր տնտեսական կառուցվածքի ու հեռանկարների վրա:

Տեխնահենք մոդելի անցումը պետք է կազմակերպվի առկա ներուժի և ազգային ռազմավարական շահերի միարժեք համապատասխանության հիմքի վրա:

Այս առումով մրցունակության տեխնահենք մոդելի ներդրումը հետինդուստրիալ հասարակությանը բնորոշ արժեքային համակարգի ձևավորումն է: Տնտեսությունում տեխնոլոգիական տիրապետության հաստատումը դառ-

¹² Տես «Акции Межбанка Азербайджана полностью проданы». «Sputnik», 28.01.2017 (<https://ru.sputnik.az/economy/20170128/408626388/mezhdunarodnyj-bank-azerbajdzhana-akcii-prodany.html>):

նում է մտային արժեքների արմատական փոփոխության պատճառ: Արդի պայմաններում շուկայական ուժ ապահովող տեխնոլոգիաների ձեռքբերումը մենաշնորհացմանը զուգահեռաբար հանգեցնում է տնտեսվարողների միջև մրցակցության ձևի փոփոխության: Այսպես, տեխնոլոգիական բուրգի ցածր մակարդակից ավելի բարձր մակարդակին անցումը ուղեկցվում է ավելացված արժեքի, սպառման շուկաների վերահսկողության աստիճանի և գործարարության արդյունավետության մեծացմամբ: Այդ իսկ պատճառով շուկայական տնտեսությանը նոր անցնող պետություններին (ինչպիսին Ադրբեյջանն է) կարող է սպառնալ քայքայման էֆեկտ: Միևնույն ժամանակ, այն, որ 7 առավել զարգացած պետություններ տնօրինում են մրցակցային արտադրություն ապահովող 50 մեգատեխնոլոգիաներից 46-ին, դրանց և պակաս զարգացած պետությունների միջև տեխնոլոգիական ձեռքվածքը դարձնում է սկզբունքորեն անհաղթահարելի և բացառում համաշխարհային մրցակցությունում վերջիններիս հաջողության հասնելու հնարավորությունը¹³:

Զարգացող պետությունները փորձում են ներմուծումն իրենց արտադրանքով փոխարինելու քաղաքականության միջոցով հասնել զարգացած պետություններին: Ներմուծման փոխարինման քաղաքականության հիմնական բնութագրիչը ներկրման սահմանափակման և հովանավորչության միջոցով տնտեսության ինդուստրացումն է: Այլ խոսքով՝ ներկրման փոխարինման քաղաքականությունը ենթադրում է ազգային արդյունաբերության առանձին ոլորտների զարգացման համար արհեստական (արտաքին առևտրային և արժույթային) խթանների ստեղծում: Այս դեպքում որոշիչ դեր է կատարում մասնավոր սեփականության հաստատությունը, որը հենվում է հովանավորչության վրա: Այնուամենայնիվ, «երիտասարդ» արդյունաբերության նկատմամբ հովանավորչության կիրառման հետևանքով ձեռնարկությունները այլևս նախաձեռնություն չեն ցուցաբերում, հույս են դնում միայն պետության աջակցության վրա և դանդաղում են նոր տեխնոլոգիաների ներդրման գործում:

Նման դեպքում ասիական պետությունները կիրառում են մի դոկտրին, որը ճապոնացի տնտեսագետ Կանամե Ակամացուն անվանել է «թռչող սագերի» մոդել: Համաձայն այդ դոկտրինի՝ պետությունները աստիճանաբար շարժվում են դեպի տեխնոլոգիական զարգացում՝ հետևելով այն երկրների օրինակին, որոնք զարգացման առումով գտնվում են անմիջականորեն իրենց առջևում: Այդ քաղաքականության նպատակը նույնպես տնտեսության ինդուստրացումն է: Այնուամենայնիվ, դրան հասնում են ոչ թե արտաքին առևտրային սահմանափակումների և ներկրումային խտրականության միջոցով ազգային արտադրանքով ներկրման փոխարինմամբ, այլ արտահանման ներուժի մեծացմամբ: Այսպիսի մոդելը կարելի է դիտարկել որպես շուկայական ուժերի ազդեցության բնական արդյունք. ավելցուկային աշխատուժ և կապիտալի

¹³ Տես Փ. Ի. Շամխալով. Опыт импортозамещения продукции оборонной промышленности в зарубежных странах. «Известия Тульского государственного университета. Экономические и юридические науки», 2010, № 1, ч. 1 (<https://cyberleninka.ru/article/n/opyt-importozamescheniya-produktsii-oboronnoy-promyshlennosti-v-zarubezhnyh-stranah-1>):

պակաս ունեցող երկրները միջազգային շուկայում դառնում են աշխատուժահեռնք ոլորտներում մրցունակ, սակայն խնայողությունների և կրթության ոլորտում կատարված ներդրումների շնորհիվ ստեղծվում է կապիտալի և որակավորված աշխատուժի ռեզերվ, ինչը նպաստում է ավելի կապիտալահեռնք և ավելի բարձր որակավորում պահանջող արդյունաբերական ոլորտների զարգացմանը¹⁴:

Ներկրման փոխարինման հայեցակարգի իրագործման պայմաններում հույժ կարևոր է պետության դերը: Խոսքը նույնիսկ ազգային արտադրողների պաշտպանության կամ գիտության ու կրթության զարգացման խթանման մասին չէ, այլ վերաբերում է ներքին կամ արտաքին կողմնորոշվածությամբ ներկրման փոխարինման ռազմավարությանը:

Այս երկուսի միջև տարբերությունը սկզբունքային է: Առաջինի դեպքում գերակայությունը տրվում է ներքին շուկայի յուրացմանը, ինչի նպատակը տնտեսությունում կառուցվածքային շարժի ապահովումն է՝ հետագա ինդուստրացմամբ: Երկրորդի դեպքում՝ համաշխարհային շուկայում յուրային ապրանքների առաջնդման համար հայրենական արտադրողի խրախուսումն է: Երկու տարբերակի դեպքում էլ անհրաժեշտ է կատարել արդյունաբերական արտադրության վերակազմավորում, ինչը ենթադրում է գիտութենա- և տեխնիկահեռնք տեխնոլոգիաների յուրացում, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ների) լայնամասշտաբ ծրագրի իրականացում և նոր կադրերի պատրաստում¹⁵:

Այսպիսով, Ադրբեջանում ռազմական արդյունաբերության վրա տնտեսական զարգացման մոդելի փոփոխության ազդեցությունը առաջին հերթին պայմանավորված է լինելու ներկրման փոխարինման ռազմավարությամբ: Այս առումով Ադրբեջանի ղեկավարությունը որդեգրել է ոչ նավթային ոլորտների զարգացման միջոցով տնտեսական բազմազանեցման և տեղական պահանջարկի ապահովման ռազմավարություն: Պետք է նշել, որ նման քաղաքականություն է վարում նաև Թուրքիան:

Երկարաժամկետ հեռանկարում աճման տեմպերը որոշվում են կապիտալի կուտակման տեմպերով, աշխատուժի թվաքանակի մեծացմամբ և տեխնիկական սպասարկման համակարգի առաջընթացով: Երկար տարիներ Ադրբեջանում բնական ռեսուրսներից ստացվող եկամուտները հնարավորություն են տվել մեծացնելու աճման տեմպերը, իսկ պետական ֆինանսական միջոցները առավելապես ուղղվել են նավթագազային ոլորտի զարգացմանը, ինչը հանգեցրել է բնական ռեսուրսներից կախման մեծացման: Դրա հետ մեկտեղ Ադրբեջանում զարգացած ֆինանսական շուկաներ չլինելու պայմաններում ներդրողները բախվում են ապահովագրության հետ կապված խնդիրների: Հումքի վաճառքով պայմանավորված ներդրումները և

¹⁴ Տես նույն տեղում:

¹⁵ Տես նույն տեղում:

սպառումը Ադրբեջանում հանգեցրել են գերազանցապես նավթագազային ոլորտում աշխատուժի արժեքի բարձրացման:

Ընդամին Ադրբեջանում նավթագազային ոլորտում կատարվող հսկայական ներդրումները խաթարել են վերամշակող արդյունաբերության զարգացումը: Ըստ այդմ, կրճատվել են երկարաժամկետ տնտեսական զարգացման նոր մոդելին անցման հնարավորությունները՝ սահմանափակելով նաև ռազմական արդյունաբերության զարգացման հեռանկարը:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանում ռազմական ոլորտի և ռազմական արդյունաբերության վրա կատարվող ծախսերը ծանրակշիռ տեղ ունեն պետական բյուջեում: Թեև ռազմական ծախսերի, հետևաբար նաև ռազմական արտադրության վրա կատարվող ծախսերի մեծ ծավալները հսկայական վնաս են հասցնում տնտեսությանը՝ կլանելով բոլոր տեսակի ռեսուրսները, այդ ծախսերի կտրուկ կրճատումը, ազգային տնտեսության շեշտակի ապա-ռազմականացումը և ռազմական արտադրության կոնվերսիան կարող են առաջ բերել լուրջ բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներ: Ոչ միայն վնաս կկրեն ռազմական արդյունաբերությունում իրենց աշխատանքը կորցրած աշխատողները, այլև նրանց եկամուտների կրճատումը կարող է հանգեցնել սպառողական ծախսերի կրճատման, ինչը, իր հերթին, կարող է սպառողական ապրանքների արտադրության ոլորտներում առաջացնել զբաղվածության կուտակային կրճատում: Նույն կերպ նաև ռազմական պատվերներից զրկված ռազմարդյունաբերական ձեռնարկությունները կնվազեցնեն արտադրական սարքավորանքի գնումը, ինչը կարող է առաջացնել արտադրության ծավալների նվազում և արտադրության միջոցներ արտադրող ձեռնարկություններում աշխատողների նշանակալի մասի ազատում:

Այս բարդ տնտեսական իրադրության և միջնաժամկետ հեռանկարում ռազմական արդյունաբերության ծախսերի կրճատման վտանգի հաշվառմամբ, ինչպես նաև համաշխարհային պրակտիկայի վերլուծության արդյունքներով առավել հավանական ենք կարծում, որ Ադրբեջանի պաշտպանական բյուջեի ձևավորման հիմքում դրվելու է համակարգային մոտեցումը՝ այնպիսի կարևոր մեթոդաբանական սկզբունքները, ինչպիսիք են բյուջեի ծրագրա-նպատակային պլանավորումը, տրամադրվող ֆինանսական միջոցների համապատասխանեցումը լուծվելիք խնդիրներին, ռազմական շինարարության գերակայությունների հաշվառման ու զինված ուժերի բաղկացուցիչների ֆինանսական ապահովման անհրաժեշտությունը և այլն: Ըստ այդմ՝ ռազմական պլանավորման համակարգի և միջնաժամկետ բյուջեավորման փոխկապվածությունը նպատակաուղղված կլինի արդյունքի և պետական միջոցների արդյունավետ օգտագործման ապահովմանը:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանի ղեկավարությունը ամենայն հավանականությամբ կշարունակի կարևորել ռազմական արդյունաբերությունում օտարերկրյա տեխնոլոգիաների ներդրումը և այդ ոլորտում այլ պետությունների հետ համատեղ ձեռնարկությունների հիմնադրումը: Այս առումով Ադրբեջանը

առավել ակտիվ կերպով է համագործակցում Թուրքիայի, Իսրայելի և Պակիստանի հետ: Ընդ որում՝ կարելի է ակնկալել, որ միջնաժամկետ հեռանկարում Ադրբեջանը մտադիր կլինի սպառազինությունների և ռազմական տեխնիկայի միջազգային շուկայում հանդես գալու որպես ոչ միայն սպառող, այլև մատակարար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էներգակիրների միջազգային ցածր գներով պայմանավորված վատթարացող ֆինանսատնտեսական վիճակի պայմաններում Ադրբեջանը անցնում է զարգացման նոր մոդելի: Ղա ենթադրում է նորամուծությունների հիման վրա տնտեսական զարգացման ապահովում և ներքին արդյունաբերական բազայի ընդլայնում, ինչը պետք է նպաստի ներկրման փոխարինման քաղաքականության հաջող իրագործմանը:

Ենթադրվում են տվյալ ռազմավարության շրջանակներում ԳՀՓԿԱ-ների ընդլայնմանն ու մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված քայլերի ձեռնարկում և տնտեսական տարբեր ոլորտների միջև ռեսուրսների արդյունավետ բաշխման մեխանիզմների ներդրում: Այդպիսի քաղաքականությունը և ներկրման փոխարինմանն ուղղված երկակի նախանշանակման արտադրությունների հիմնումը իրենց ազդեցությունն են ունենալու Ադրբեջանի ռազմական արդյունաբերության վրա, որը միջնաժամկետ հեռանկարում կարող է դառնալ տնտեսական զարգացման շարժիչ ուժը:

ОБОРОННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ

ЭКСТЕРНАЛИИ РАЗВИТИЯ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ И ПЕРСПЕКТИВЫ ИХ ИНТЕРНАЛИЗАЦИИ В АРМЕНИИ

Г. Э. АРУТЮНЯН, кандидат экономических наук, доцент, старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

РЕЗЮМЕ

Для макроэкономического анализа целесообразно возможные экстерналии развития военной промышленности классифицировать по таким субъектам воздействия внешних эффектов, как общество, предприятие и государство. Для *общества* таковыми являются: повышение безопасности и защищенности, рост благосостояния, развитие человеческого капитала; для *предприятия* – рост совокупного спроса, синергический эффект, эффект передачи технологий; для *государства* – эффективность государственных расходов, сокращение безработицы и оттока иностранной валюты, ускорение научно-технического прогресса и улучшение отраслевой структуры экономики.

Наиболее рациональным способом интернализации внешних эффектов военной промышленности представляется кластеризация экономики, кото-

рая позволит обеспечить эффективное сотрудничество между государственными и частными компаниями, научно-образовательными и производственными организациями, создать предпосылки для междисциплинарной интеграции, поддержки и реализации совместных НИОКР, а также обеспечить основу для формирования цепочки сотрудничества «наука–инновации–производство», нацеленной на повышение конкурентоспособности экономики РА в целом.

ОЦЕНКА ЭКОНОМИЧЕСКОГО СОСТОЯНИЯ АЗЕРБАЙДЖАНА И ПРОБЛЕМ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В УСЛОВИЯХ НИЗКИХ ЦЕН НА НЕФТЬ

А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, ученый-аналитик Центра регионального стратегического анализа ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Азербайджан в условиях ухудшения финансово-экономического состояния, обусловленного низкими международными ценами на энергоносители, осуществляет переход к новой модели развития. Данный процесс предполагает обеспечение экономического развития и расширение внутренней производственной базы на основе инноваций в целях успешной реализации политики импортозамещения.

В рамках данной стратегии предполагается принятие мер по расширению НИОКР и развитию человеческого капитала, а также внедрение механизмов эффективного распределения ресурсов между различными экономическими сферами. Такая политика и учреждение предприятий двойного назначения, нацеленные на импортозамещение, окажут воздействие на военную промышленность Азербайджана, которая в среднесрочной перспективе может стать движущей силой экономического развития.

DEFENSE INDUSTRY

THE EXTERNALITIES OF THE DEFENSE INDUSTRY DEVELOPMENT AND THE PROSPECTS OF THEIR INTERNALIZATION IN ARMENIA

G. E. HARUTYUNYAN, PhD in Economics, Associate Professor, Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia

SUMMARY

In doing a macroeconomic analysis, it is reasonable that the possible externalities of defense industry development be classified according to such subjects of external effects, as the society, the enterprise and the state. For the *society* such

effects are: the safety and security increase, growth of well-being, development of the human capital; for the *enterprise* – the growth of aggregate demand, the synergic effect, the effect of technology transfer; for the *state* – the effectiveness of public spending, the reduction of unemployment and outflow of foreign currency, the acceleration of scientific and technological progress, and improving the branch structure of the economy.

The most rational way to internalize the external effects of the defense industry is to cluster the economy, which will ensure effective cooperation between public and private companies, scientific and educational, as well as industrial organizations, create prerequisites for interdisciplinary integration, support and implementation of joint R&D, so as provide the basis for the formation of a chain of "Science-Innovation-Production" cooperation, the ultimate goal of which is to increase the competitiveness of the economy of the RA as a whole.

EVALUATION OF AZERBAIJAN'S ECONOMIC SITUATION AND THE DEFENSE INDUSTRY ISSUES UNDER LOW PRICES FOR OIL

*A. G. DAVTYAN, PhD in Economics, Research Fellow, Center for Regional Strategic Studies,
INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

Under the deteriorating financial and economic conditions by virtue of the low prices of international energy carriers, Azerbaijan is adopting a new development model. It implies innovation-based economic development support and expansion of domestic industrial base, which is to facilitate the successful implementation of the import substitution policy.

Within the frameworks of said strategy, it has been anticipated to initiate measures on expanding the Research, Development and Engineering, developing the human capital, and implementing mechanisms for efficient resource allocation among diverse economic spheres. Suchlike policy and the establishment of dual-purpose industries targeted at import substitution are going to impact Azerbaijan's defense industry, which, in mid-term perspective, may become an impetus to the economic development.

**ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ,
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ
ԱՀԱԲԵԿՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻՑ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ***

*Հ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, արդարադատության գնդապետ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, ՌԴ ՊՆ Ռազմական համալսարանի
քրեագիտության ամբիոնի դոկտորանտ*



Հայտնի է, որ պատերազմական հանցագործությունները կարող են որակվել թե՛ որպես պատերազմական հանցագործություններ, թե՛ որպես մարդկության (մարդկայնության) դեմ ուղղված հանցագործություններ, որոնք արտացոլված չեն Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում, և որոնց տարատեսակները հարակից են ցեղասպանությանը:

Պատերազմական հանցագործությունների հանցակազմերից մարդկության դեմ ուղղված հանցագործությունները սահմանազատվում են այն հատկանիշով, որ դրանք ուղղված են ոչ թե առանձին քաղաքացիական անձանց դեմ, այլ ընդհանրապես քաղաքացիական բնակչության դեմ, կատարվում են զինված հակամարտության և խաղաղ ժամանակ լայնամասշտաբ կամ պարբերական հարձակումների շրջանակներում¹:

Այսպես. ըստ Միջազգային քրեական դատարանի (ՄԲԴ) Հռոմի Ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին կետի՝ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են ճանաչվել այն անմարդկային արարքները (սպանություն, բնաջնջում, ստրկացում, խոշտանգում և այլն), որոնք կատարվում են ցանկացած քաղաքացիական անձանց վրա լայնամասշտաբ և մշտապես տեղի ունեցող հարձակումների շրջանակներում, եթե նման հարձակումը ձեռնարկվում է գիտակցաբար: 7-րդ հոդվածի 2-րդ կետում պարզաբանվում է, որ «ցանկացած քաղաքացիական անձի վրա կատարվող հարձակումը» մի վարքագիծ է, որը ներառում է 1-ին կետում նշված ցանկացած քաղաքացիական

* Սույն հոդվածը «Հայկական բանակ» հանդեսի 2015 թ. 3-րդ, 4-րդ, 2016 թ. 1-ին, 2-րդ, 3-րդ, 2017 թ. 1–2 համարներում հրապարակված հոդվածաշարի շարունակությունն է:

¹ Տես *А. Ю. Винокуров. Международно-правовые, теоретические и организационные основы уголовного преследования за совершение военных преступлений в отношении гражданского населения. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. М., 2011, с. 139:*

անձի նկատմամբ բազմակի կատարվող գործողություններ, որոնք ձեռնարկվում են պետության կամ կազմակերպության վարած՝ նման հարձակումների քաղաքականության իրագործման կամ այդ քաղաքականությանն աջակցման նպատակով:

Այսպիսով՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր տարրեր են այն, որ տուժածները քաղաքացիական անձինք են, առանձնակի վայրագությունը, հարձակումների լայնամասշտաբությունը և կատարման պարբերականությունը (հարձակումների լայնամասշտաբությունը մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մի յուրատեսակ քանակական չափանիշ է, որը որոշվում է ըստ՝ առաջին հերթին հարձակումների զոհերի թվի, երկրորդ հերթին՝ այն աշխարհագրական շրջանի մեծության, որի սահմաններում կատարվում են հարձակումները)², նման հարձակում կատարելու մտադրությունը, այսինքն՝ քաղաքական տարրը (հանցագործությունները կատարվում են պետության կամ կազմակերպության քաղաքականության համատեքստում: «Քաղաքական» տարրը չի պահանջում նման քաղաքականության պաշտոնական հռչակում, այլ պետք է դիտարկվի հանցավոր գործունեության պլանավորման, ղեկավարման և ընդհանուր կազմակերպման ավելի լայն հասկացություններով)³:

Ինչ վերաբերում է Հարավային Օսեթիայում 2008 թ. օգոստոսի 8-ին սկսված արարքները ՌԴ ՔՕ 357-րդ հոդվածով որպես «ցեղասպանություն» որակելուն, ապա մենք համամիտ ենք Գ. Ի. Բոզուչի հետ⁴, որ ցեղասպանության միջազգային-իրավական բնութագրերի հաշվառմամբ նման որակումը վիճահարույց է: Այսպես. 1948 թ. կոնվենցիայի համաձայն՝ ցեղասպանություն են որակվում այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի՝ որպես այդպիսին ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու նպատակով, այսինքն՝

ա) խմբի անդամների սպանությունը, բ) խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքների կամ մտավոր խանգարման պատճառումը, գ) որևէ խմբի համար կանխամտածված կերպով այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնց դեպքում այն ամբողջությամբ կամ մասնակիորեն կենթարկվի ֆիզիկական ոչնչացման, դ) այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք նպատակաուղղված են այդ խմբում ծնելիության կանխմանը, ե) մարդկանց մի խմբից մյուսին երեխաների բռնի փոխանցումը⁵:

² Տես «Комментарий к ст. 18 проекта кодекса о преступлениях против мира и безопасности человечества 1996 г.». «Ежегодник Комиссии международного права ООН», 1996, с. 99; “Judgment (Trial Chamber)”. Prosecutor v. Blaskic, Case No. IT-95-14-T. International Criminal Tribunal for the former Yugoslavia (ICTY), 3 March 2000, para. 94:

³ Տես *G. Werle*. Principles of International Criminal Law. The Hague, 2005, P. 227:

⁴ Տես *Г. И. Бозуш*. Материалы научно-консультативного совета. «Вестник Следственного комитета при прокуратуре РФ», 2009, № 3(5):

⁵ Տես «Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него».

Այսպիսով՝ ցեղասպանության հանցագործության կատարման փաստը հաստատելու համար պահանջվում է հետևյալ հատկանիշների առկայությունը. Կոնվենցիայով պաշտպանվող մարդկանց խումբ, օբյեկտիվ կողմը ներկայացնող գործողություններ և խումբը՝ որպես այդպիսին, ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու ցեղասպանական մտադրություն, այսինքն՝ դիտավորություն և հատուկ նպատակ:

Ցեղասպանության հիմնական հատկանիշը նրա օբյեկտն է: Արարքը պետք է ուղղված լինի խմբի ոչնչացմանը: Խմբերը կազմված են անհատներից, այդ իսկ պատճառով, ըստ էության, ոչնչացման գործողությունը պետք է ուղղված լինի անհատների դեմ: Սակայն անհատը կարևոր է ոչ թե «որպես այդպիսին» (*“per se”*), այսինքն՝ տեղի ունի զոհի ապանձնավորում. հանցագործը հանցագործության օբյեկտին ընտրում է ոչ թե ըստ կոնկրետ մարդու անձնական հատկանիշների (սեռ, տարիք, սոցիալական կարգավիճակ և այլն), այլ միայն որպես այն խմբի անդամի, որին ինքը նպատակադրվել է ոչնչացնելու⁶:

Այսպես. նախկին Հարավսլավիայի գործով Միջազգային տրիբունալի (ՆՀՄՏ) դատական ատյանը, քննելով գեներալ Ռ. Կրստիչի գործը, բախվեց մի պրոբլեմի, թե որը համարել պաշտպանվող խումբ՝ «բոսնիացի մահմեդականներին», թե «Սրբերենիցայի բոսնիացի մահմեդականներին»: ՆՀՄՏ-ն հանգեց այն եզրակացության, որ պաշտպանվող խումբը բոսնիացի մահմեդականներն են, իսկ Սրբերենիցայի մահմեդականները՝ տվյալ խմբի մի մասը: Այդ որոշման մեջ շեշտվում էր, որ ցեղասպանություն կարող է համարվել որոշակի աշխարհագրական սահմաններում, ինչպիսիք են տարածաշրջանը, երկիրը կամ նույնիսկ մունիցիպալիտետը, խմբին կոտորելու մտադրությունը: Թեև ցեղասպանագործները չեն ձգտում ոչնչացնելու Կոնվենցիայով պաշտպանվող ամբողջ խումբը, սակայն նրանք պետք է խմբի այդ մասը դիտեն որպես մեկ ամբողջություն, որպես մի ինքնուրույն միավոր, որը պետք է ոչնչացվի որպես այդպիսին⁷: Ցեղասպանության օբյեկտիվ կողմն արտահայտվում է ժողովրդագրական խմբի առնվազն մեկ անդամին մահվան կամ ծանր մարմնական կամ հոգեկան վնասի պատճառման ձևով, և ցեղասպանության համար չի պահանջվում զոհերի որոշակի թիվ, քանի որ տվյալ հանցակազմը, Լ. Ինոգամովա-Խետայի արդարամիտ պնդմամբ, հանցագործություն է հատյալ կազմով⁸:

Հանցագործությունների ՄՔԴ տարրերի 6-րդ (ա) հոդվածի 1-ին կետի հա-

Принята резолюцией 260 (III) Генеральной Ассамблеи ООН от 9 декабря 1948 года, ст. II (http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/genocide.shtml):

⁶ Տես *Nehemiah Robinson. The Genocide Convention: A Commentary*. New York, 1960, P. 58:

⁷ Տես “Judgment (Trial Chamber)”. Prosecutor v. Krstic, Case No. IT-98-33-T. ICTY, 2 August 2001, para. 590:

⁸ Տես «Полный курс уголовного права», в 5-и томах, т. V. Под ред. А. И. Коробеева. СПб., 2008, с. 645:

մաձայն՝ սպանության միջոցով ցեղասպանությունը ներառում է «կատարողն սպանել է մեկ կամ մի քանի անձանց» տարրը: Դրա հետ մեկտեղ, սպանության զանգվածայնությունը կամ ցեղասպանության այլ արարքներ կարող են լինել կարևոր գործոն սուբյեկտիվ կողմը ցույց տալու համար, թե առկա էր ցեղասպանական դիտավորություն, որը բնութագրվում է հատուկ նպատակով, այն է՝ որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը՝ որպես այդպիսին, ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու ձգտմամբ և ցեղասպանության իրագործման ընդհանուր պլանով: Ընդամիս ցեղասպանական մտադրության գոյությունը հաստատելու համար մեծ նշանակություն ունի «որպես այդպիսին» արտահայտությունը: Ցեղասպանական գործողությունների նպատակը ոչ թե կոնկրետ խմբի պատկանող մեծ թվով անձանց, այլ հենց տվյալ խմբի ամբողջությամբ կամ նրա մասերի՝ որպես ընդհանրության ոչնչացումն է:

ՆՀՄՏ դատական ատյանը Սիկիրիցայի գործով որոշումներից մեկում նշել է, որ այդ արտահայտությունը ցեղասպանության և շատ դեպքերում էթնիկական գտումների միջև սահմանազատման գիծն է⁹: Միջազգային դատական պրակտիկայում ցեղասպանական մտադրությունը սահմանվում է այնպիսի հատկանիշների հիման վրա, ինչպիսիք են ծրագրի գոյությունը, մեծ թվով տուժածներ, տուժածների ընտրություն ըստ կոնկրետ խմբին նրանց պատկանելության¹⁰: Տվյալ դեպքում չկա նաև ցեղասպանության այնպիսի տարրերիչ հատկանիշ, ինչպիսին հարձակումների ընտրողական բնույթն է, այսինքն՝ զոհի ընտրություն ըստ ժողովրդագրական խմբի պատկանելության: Ցխինվալ քաղաքի վրա հարձակումը ոչ թե ընտրողական, այլ ահաբեկչական բնույթի էր, իսկ դա ցեղասպանական նպատակից տարբեր նպատակի վկայություն է: Թվում է, թե վրացական զինված կազմավորումների գործողությունները իրենց բնույթով (հարձակման զանգվածեղություն, ծանր սպառազինության և ավիացիայի կիրառում) ուղղված էին Ցխինվալից և Հարավային Օսեթիային հարող տարածքից օսեթական բնակչության արտաքսմանը: Նման գործողությունները միջազգային պրակտիկայում ստացան կայուն, թեև ոչ իրավաբանական «էթնիկական գտումներ» (*ethnic cleansing*) անվանումը՝ միջազգային հանցագործությունների ցանկում դեռ չգտնելով իրենց հստակ տեղը:

Վերը ներկայացված հատկանիշները էապես բարդացնում են ցեղասպանության հատկանիշների առկայության ապացուցումը, ինչի հետևանքով ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունման պահից ի վեր քրեական արդարադատության միջազգային մարմինները կարողացել են ցեղասպանության հանցագործությունն ապացուցել միայն երկու անգամ՝ 1994 թ.

⁹ Stu “Judgement on Defence Motions to Acquit (Trial Chamber)”. Prosecutor v. Sikirica et al. Case No. IT-95-8-T. ICTY, 3 September 2001, para. 89:

¹⁰ Stu *Q. Ռիեռլ*, Նշ. աշխ., էջ 210:

Ռուանդայում և 1995 թ. Բոսնիայի անկլավ Սրեբրենիցայում: Ինչպես նշվում է Ռուանդայի գործով միջազգային տրիբունալի (ՌՄՏ)՝ Ակայեսուի գործով դատական ատյանի դատավճռում, «ցեղասպանական մտադրությունը սուբյեկտիվ գործոն է, որը դժվար, գրեթե անհնար է որոշարկել»¹¹:

Այսպիսով՝ Հարավային Օսեթիայում Վրաստանի Հանրապետության Ջինված ուժերի կատարած հանցագործությունների մասշտաբների վերլուծությունը ապացուցում է, որ 162 խաղաղ բնակիչների սպանության, 655 բնակելի տների ավերման, 36 հազար խաղաղ բնակիչներին փախստականների վերածման¹², պատերազմի վարման արգելված միջոցների ու մեթոդների կիրառման փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ հանցագործությունները չէին կարող հանգեցնել օսեթների էթնիկական խմբի ոչնչացման: ՌԻստի, մեր կարծիքով, նման հանցագործությունները կարելի է որակել որպես ագրեսիայի ձեռնարկում՝ պատերազմական հանցագործությունների զուգակցմամբ:

Թվում է, որ այս դեպքում կարող էր տեղ գտնել նաև ահաբեկչությունը (որպես պատերազմական հանցագործության տարր), իսկ մեր կարծիքով՝ ավելի շատ քաղաքացիական բնակչության ահաբեկումը (որի նպատակը կարող է արտահայտվել սարսափի, վախի, անհանգստության մթնոլորտի ստեղծմամբ ու տարածմամբ, ինչը կառաջացնի երկյուղ, որ ամենքին սպասում են հնարավոր սպանություն, տանջանքներ) կամ այլ անմարդկային գործողությունների ենթարկվելու հեռանկարներ: Այնուամենայնիվ, նման գործողությունների որակումը որպես միջազգային ահաբեկչության, մեր կարծիքով, հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրանք կատարում են ոչ թե պետությունները կամ դրանց պաշտոնական մարմինները, այլ ահաբեկչական կազմակերպությունները կամ առանձին անձինք: Եթե որևէ պետություն, խախտելով ՄԱԿ-ի Կանոնադրությունը, մյուսի դեմ զինված ուժեր է կիրառում, արարքը կարող է որակվել «ագրեսիվ պատերազմ» հոդվածով, իսկ եթե դա արվում է զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության սպանության, քաղաքացիական օբյեկտներին վնասի պատճառման նպատակով կամ միջազգային իրավունքի նորմերի խախտմամբ պատերազմի վարման այլ արգելված մեթոդների կիրառմամբ, ապա կորակվի որպես պատերազմական հանցագործություն: Ընդամին հարկ է նշել, որ այն բանի իրավասությունը, թե միջազգային կյանքի որևէ իրադարձություն ագրեսիա է, թե ոչ, պատկանում է միայն և բացառապես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին (ՄԱԿ-ի Կանոնադրություն, հոդ. 39): Սակայն ՄԱԿ-ի Անվտան-

¹¹ Տես «Judgment (Chamber I)». Prosecutor v. Akayesu. Case No. ICTR-96-4-T. International Criminal Tribunal for Rwanda (ICTR), 2 September 1998, para. 523:

¹² Տես «Выступление Председателя Следственного комитета на заседании, посвященном второй годовщине работы Следственного комитета при прокуратуре Российской Федерации и годовщине событий в Южной Осетии», 04.09.2009 (<http://sledcom.ru/news/item/510275>):

գույթան խորհրդի նման գնահատականը, մեր կարծիքով, ոչ թե իրավաբանական է, այլ քաղաքական:

Ինչ վերաբերում է «քաղաքացիական բնակչության ահաբեկմանը», ապա դրա հիմնական նպատակը ներկայացնող բռնության գործողություններն արգելող իրավական ակտերն են 1949 թ. 4-րդ ժնկյան կոնվենցիայի 33-րդ, 1-ին Լրացուցիչ արձանագրության (1979 թ.) 51-րդ (2), 2-րդ Լրացուցիչ արձանագրության (1979 թ.) 4 (b) և 13-րդ (2) հոդվածները: Այսպես. «ահաբեկչության գործողությունների»՝ որպես առանձին պատերազմական հանցագործության որակմանը վերաբերում են Ռուանդայի գործով միջազգային տրիբունալի Կանոնադրության 4 (d) հոդվածով և Սիերա Լեոնեի գործով հատուկ դատարանի կանոնադրության 3-րդ հոդվածով սահմանված հատկանիշները, իսկ ՆՀՄՏ-ն, օրինակ՝ գեներալ Բլաշկիչի գործով¹³, «ահաբեկումը», «ահաբեկման մթնոլորտի» ստեղծումը սահմանել է որպես արարքներ, որոնք առաջացնում են այլ պատերազմական հանցակազմեր, ինչպես, օրինակ, դաժան վերաբերմունք:

«Քաղաքացիական բնակչության ահաբեկումը» որպես պատերազմական հանցագործության ինքնուրույն հանցակազմ քննել է ՆՀՄՏ դատական ատյանը՝ գեներալ Ս. Գալիչի գործի առնչությամբ: Ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել պատերազմի օրենքների և ավանդույթների խախտման ու մարդկության դեմ հանցագործությունների կատարման մեջ այն հիմնավորմամբ, որ «քաղաքացիական անձանց դեմ անօրինական բռնի գործողությունների արշավին աջակցել է ենթակայության շղթայով փոխանցվող հրամանների միջոցով (...) և մտադրություն է ունեցել այդ արշավը իրագործելու Սարևոյի քաղաքացիական բնակչության շրջանում ահաբեկում տարածելու առաջնային նպատակով»¹⁴: Ընդամին որպես քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու գործողություններ են ճանաչվել քաղաքի հրետակծումները և քաղաքացիական անձանց վրա ուղղվող դիպուկահարական կրակը¹⁵: ՆՀՄՏ-ն նաև փաստել է, որ «հանցագործը միտումնավոր կերպով բռնության նման գործողությունների օբյեկտ էր դարձրել քաղաքացիական բնակչությանը կամ պատերազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող առանձին քաղաքացիական անձանց: Հանցագործությունը կատարվել է մի հիմնական նպատակով՝ քաղաքացիական բնակչության ահաբեկում»¹⁶:Քաղաքացիական բնակչության ահաբեկման ձևով պատերազմական հանցագործության օբյեկտիվ տարրը կարող է ներառել նաև ոչ ընտրողական և անհամաչափ հարձակումներ¹⁷:Տվյալ պատերազմական

¹³ Տես «Решение Судебной камеры по делу Блашкича от 3 марта 2000 г.». Международный трибунал по бывшей Югославии (МТБЮ), пар. 695, 700, 732–733:

¹⁴ Տես «Решение Судебной камеры по делу Галича от 5 декабря 2003 г.». МТБЮ, пар. 749:

¹⁵ Տես նույն տեղում, պար. 751:

¹⁶ Տես նույն տեղում, պար. 135:

¹⁷ Տես նույն տեղում, պար. 102:

հանցագործության սուբյեկտիվ կողմի որոշման ժամանակ անհրաժեշտ է ապացուցել այն գործոնը, որ հանցագործը գիտակցում էր այն բանի հնարավորությունը, որ իր գործողությունները կհանգեցնեն ահաբեկման, և նպատակ ուներ հասնելու այդ արդյունքին, որովհետև ահաբեկման հանցագործությունը հատուկ մտադրությամբ կատարվող հանցագործություն է¹⁸, ...ինչով սահմանազատվում են պատերազմական հանցագործություններին հարակից այնպիսի հանցակազմերը, ինչպիսիք են քաղաքացիական բնակչության ահաբեկումը և քաղաքացիական բնակչության վրա հարձակումը... Ահաբեկման տարածման նպատակի հետ մեկտեղ հանցագործը կարող է հետապնդել նաև այլ նպատակներ, սակայն դա նրան չի ազատում ահաբեկման մեջ մեղադրանքից, եթե քաղաքացիական բնակչության շրջանում ահաբեկում տարածելու մտադրությունը նրա հիմնական նպատակների թվում էր: Այդ մտադրության առկայությունը հնարավոր է ապացուցել՝ դատելով բռնի գործողությունների կամ բռնություն գործադրելու սպառնալիքի բնույթից, դրանց իրականացման եղանակից և տևողությունից»¹⁹:

ՆՀՄՏ բողոքարկման սենյակը հնարավոր է համարել միևնույն հանցավոր արարքների հետ կապված հանցագործությունների համախմբի համար մեղադրանք ներկայացնել միայն այն դեպքում, երբ «իրավունքի յուրաքանչյուր հիշատակված դրույթ ունի սկզբունքորեն տարբեր տարրեր, որոնք չկան մյուս դրույթներում»²⁰: Ըստ այդմ Գալիչի գործողությունների՝ որպես միաժամանակ քաղաքացիական բնակչության ահաբեկման և քաղաքացիական անձանց վրա հարձակման որակումը ճանաչվել է սխալ:

ՄԶԴ Հռոմի Ստատուտի համաձայն՝ քաղաքացիական բնակչության ահաբեկումը հանցագործություն է: Նման հանցավոր գործողությունները մի շարք դեպքերում կարող են որակվել որպես այլ պատերազմական հանցագործություններ: Օրինակ՝ քաղաքացիական բնակչության նկատմամբ ուժի կիրառումը քաղաքացիական բնակչության վրա հարձակման ձևով կատարված պատերազմական հանցագործություն է, որի որակումը սահմանվում է Ստատուտի համապատասխան հոդվածներով, իսկ քաղաքացիական անձանց տանջանքների ենթարկման կամ նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքում նման գործողությունները որոշարկվում են հովանավորվող անձանց դեմ հանցակազմերով:

¹⁸ Տես նույն տեղում, պար. 136:

¹⁹ Տես «Решение Апелляционной камеры по делу Галича от 30 ноября 2006 г.». МУТЮ, пар. 103–104:

²⁰ Տես “Judgment (Appeals chamber)” (Čelebići Appeal Judgment). Prosecutor v. Delalić, Mučić, Delić, and Landžo, Case No. IT-96-21-A. ICTY, 20 February 2001, para. 412:

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

**ПРОБЛЕМЫ ОТГРАНИЧЕНИЯ ВОЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ
ОТ СМЕЖНЫХ СОСТАВОВ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ
ЧЕЛОВЕЧНОСТИ, ГЕНОЦИДА И ТЕРРОРИЗИРОВАНИЯ
ГРАЖДАНСКОГО НАСЕЛЕНИЯ**

*Г. М. ГРИГОРЯН, полковник юстиции, кандидат юридических наук, докторант
кафедры криминалистики Военного университета МО РФ*

РЕЗЮМЕ

Анализ правовых проблем, возникающих при квалификации таких международных преступлений, как преступления против человечности и геноцид, подсудные и Международному уголовному суду, позволяет выявить признаки, отграничивающие составы военных преступлений от смежных составов преступлений против человечности, геноцида и терроризирования гражданского населения. На базе полученных при анализе результатов предлагаются научно обоснованные рекомендации по квалификации указанных преступлений.

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

**THE PROBLEMS OF THE DISCRIMINATION BETWEEN WAR
CRIMES AND ADJACENT CORPUS DELICTI AGAINST HUMANITY,
GENOCIDE, AND TERRORIZATION OF THE CIVILIAN
POPULATION**

*H. M. GRIGORYAN, Colonel of Justice, PhD in Law, PhD Student in Criminalistics,
Military University, Ministry of Defense, the Russian Federation*

SUMMARY

The analysis of legal problems arising in the qualification of such international crimes as the crimes against humanity and genocide, which are under the jurisdiction of the International Criminal Court as well, makes it possible to identify the attributes that discriminate between the compositions of war crimes and adjacent corpus delicti against humanity, genocide, and terrorization of the civilian population. Based upon the results obtained during the analysis, the science-based recommendations on the qualification of the given crimes are proposed.

**ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ***

*Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, «Հայկական բանակ» ՌԳՀ
գիտախորհրդատվական խորհրդի անդամ*



«Ազգ-բանակ» համակարգի ստեղծումը ենթադրում է համազգային ներգրավում, այդ թվում նաև հայ կնոջ՝ որպես ոչ միայն ավանդական ընտանեկան օջախի սյան ու հայրենասիրության դաստիարակի, այլև օրհասական պահերին տղամարդու կողքին աներեր կանգնած հավատարիմ զինակցի դերի վերագնահատմամբ: Հայ ժողովրդի ինքնապաշտպանության պատմությունը հարուստ է հայուհիների նման սխրանքների բազմաթիվ օրինակներով, որոնցից մեկն էլ Խանասորի արշավանքն է:

1896 թ. Վանի ինքնապաշտպանության հերոսները թուրքական զորքի հրամանատար Սահադէդդին փաշայի առաջարկությամբ հեռացել են Վանից՝ խաղաղ բնակչությանը կյանքի ապահովություն տալու խոստման դիմաց: Սակայն ճանապարհին նրանք և նրանց միացած ստվարախումբ անգն են քրիտասարդությունը սուլթան Աբդուլ Համիդի հրամանով ենթարկվել են մազրիկ քրդական ցեղի ու բանակային ստորաբաժանումների համատեղ հարձակմանը և գրեթե լիովին կտորվել: Մոտ 1500 հոգուց Սալմաստ են հասել 20–30 հոգի:

Ուխտադրուժ քուրդ ավազակախմբին պատժելու համար Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) առաջարկությամբ 1897 թ. ամռանը կազմակերպվել է պատժիչ արշավանք, որը պատմության մեջ հայտնի է որպես Խանասորի արշավանք: Հուլիսի 27-ին 275 հոգուց բաղկացած արշավախումբը Նիկոլ Դումանի, Խանասորի Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) և Իշխանի (Հովսէփ Արղւթյան) գլխավորությամբ Սալմաստից թուրք-պարսկական սահմանով բարձրացել է Արաուլ լեռը և անակնկալ հարձակում գործել Խանասորի դաշտում գտնվող մազրիկ ցեղի վրա: Ցեղապետ Շարաֆ բեկին մեծ կորուստների գնով հաջողվել է ձողոպրել: Հայտնի է, որ «արշավանքը ուներ ոչ միայն վրեժխնդրության նպատակ, այլև զենքի ներկրման ճանապարհ էր հարթվում զինատար խմբերի համար Սալմաստ–Վասպուրական–Տարոն ուղղությամբ»¹:

* Թեման առավել հանգամանորեն լուսաբանված է հեղինակի «Հայ հերոսուհի կանայք» մենագրությունում, էջ 86–94:

¹ Տես «Հայոց պատմություն», հ. 3. «Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ)»: Ե., 2010, էջ 568:

Խանասորի արշավանքն ինքնավստահություն է ներշնչել հայ ֆիդայիներին, որոնք հաճախ ենթարկվում էին օսմանյան զորքի և քուրդ քոչվոր ավազակախմբերի հարձակումներին: Արշավանքից հետո քրդերն արդեն զգուշացել են հայ ֆիդայիների հետ բախումներից, իսկ երբեմն նույնիսկ համագործակցել նրանց հետ: Խանասորի արշավանքը ուշագրավ է ոչ միայն շնորհիվ իր հետևանքի, այլև որպես հայ կնոջ անձնվիրության ու խիզախության վառ օրինակ:

Արշավագորայիների շարքերում է եղել բժշկուհի **Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանը**² Գյուլիստանի կալվածատեր Դավիթ Մելիք-Բեգլարյանի քույրը և դաշնակցական գործիչ, Խանասորի արշավանքի մասնակից բժիշկ Քրիստափոր Օհանյանի կինը: Հայ-թուրքական կռիվների օրերին Մարգարիտը փորձել է վիրավորների ու հիվանդների բուժումը կազմակերպելու համար հիմնել հիվանդանոց: Եվ քանի որ այս մտահղացումը ձախողվել է, նա, որոշ տներում հիվանդատեղեր ստեղծելով, այդպես է կազմակերպել հերոսամարտի վիրավոր ռազմիկների բուժումը՝ օր ու գիշեր խնամելով նրանց և իր օրինակով քաջալերելով այլ կանանց ևս: Երբ կռիվները թեժացել են, նա տեղափոխվել է Գյուլիստանի իրենց կալվածքը և, այնտեղ հիմնելով հիվանդանոց, փրկել է մեծ թվով հայրենակիցների կյանքը: «Ան հոգատար ու գուրգուրող մօր մը պէս կը խնամէր իր հիւանդներ եւ նոյնիսկ ամենէն ծանր պարագաներուն՝ ապրելու կամք ու կորով կը ներշնչէր: Մեր մարգարէաշունչ բանաստեղծին՝ Դ. Վարուժանի պէս, ինքն ալ «ոտնածայնը» կ'առնէր «արշալոյսի» մը, որ պիտի բացուէր հայ ժողովուրդին համար, վերջ դնելով ամէնի հառաչանքի ու արցունքի: Իր այս զօրաւոր հաւատքը կը փոխանցէր շուրջիներուն, եւ այս հոգեկան սպեղանին յաճախ աւելի ազդու կ'ըլլար, քան ֆիզիքական խնամքը»²:

Այս անվեհեր հերոսուհին իր մահկանացուն է կնքել դեռ երիտասարդ տարիքում՝ 1909 թվականին, Բաքվում:

Հայ ազատագրական պայքարի երևելիներից է **Սաթենիկ Մատինյան-Արղուբյանը (Օաղիկ)**: Սաթենիկը ծնվել է Ալեքսանդրապոլում, սակայն ծնողները աշխատանքի բերումով տեղափոխվել են Թիֆլիս³: Նրա ձևավորման վրա հույժ մեծ ազդեցություն է գործել տանը տիրող մթնոլորտը: Սաթենիկի հայրը առաջամիտական և ազգասիրական գաղափարների կրող էր, մայրը՝ ավանդապահ հայուհի: Եղբայրը՝ Նիկոլը, եվրոպական կրթություն էր ստացել, իսկ քույրերը՝ Նատալյան, Լուսիկն ու Սիրանույշը, բարձրագույն կրթությամբ օրիորդներ էին⁴: Նատալյան նշանավոր հեղափոխական էր՝ ՀՀԴ գաղափարները տարածող: Նա ակտիվորեն մասնակցում էր գաղտնի գրականության տարածման և փախստական հեղափոխականների թաքուցման գործին, ինչի համար մի քանի անգամ բանտ է նետվել:

² Տես Ս. Զէյթլեան, Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ: Լոս Անճըլըս, Քալիֆորնիա, 1992, էջ 58–59:

³ Տես Ս. Գիւլիստանդանեան, Յեղափոխական հայուհիներ, մաս 1: Փարիզ, 1939, էջ 44–45:

⁴ Տես նույն տեղում, էջ 46–47:

Սաթենիկը, աչքի առաջ ունենալով Նատայայի հայրենանվեր գործունեությունը, որոշել է նմանվել նրան: Ստնելով ՀՀԴ շարքերը՝ նա հեռացել է հարազատ տնից, անցել Պարսկաստան և այնտեղ աշխատել որպես ուսուցչուհի: Ազգային-ազատագրական գաղափարներին նվիրված, քաջ ու բարեհամբույր, անսպառ կորովով, վճռականությամբ ու անսահման եռանդով լեցուն այս հայուհին ծագել է անցնելու Էրզիր (*Երկիր*) և այնտեղ գործելու հանուն իր ազգի անկախության:



Սաթենիկ Մատոսյան-Ծաղիկ

Հայ կանանց շրջանում օրիորդ Սաթենիկի վարած հայրենանվեր աշխատանքի մասին նրա հետ Պարսկաստան տեղափոխված Իշխանը գրել է. «Ո՞վ էր տեսել, որ Պարսկաստանի սահմանափակ կյանքին ենթակայ հայ կինը յաճախի թատրոն, ներկայ լինի դասախոսություններին ու երեկոյթներին»⁵: Բայց դա տեղի է ունեցել Սաթենիկի շնորհիվ: Լինելով լրջախոհ և հաստատուն բնավորության տեր անձնավորություն՝ Սաթենիկը Թավրիզի հայ կանանց շրջանում տարածել է ազգասիրական գաղափարներ ու հայացքներ, նրանց կենցաղին

հաղորդել հայ կնոջ համար պատշաճ վարքագծեր: Ինչպես գրել է Ա. Գյուլխանդանյանը, Թավրիզի հայ կանայք չեն ցանկացել բացակայել և, փաթաթված սև ու կապույտ ծածկոցներով, շտապել ժողովի, որտեղ բոլորը լուռ էին, խոսում էր միայն Սաթենիկը. «... նա կատարեալ առաքեալ էր, մարմնացած գաղափար, նորա հոգու խորքից դուրս էին թռչում հայրենիքի թշուառ ու դաժան կեանքի պատմությունները: Մոլեռանդ քարոզչի նման նա նկարագրում էր այն դժոխքը, որ Տաճկահայաստան էր կոչում, ուր տառապում էր հայ ժողովուրդը ազգովին... Յանկարծ ամեն կողմից լսում է. «Օրիո՞րդ, մենք պատրաստ ենք, մենք ամեն ինչ կանենք, ինչ որ պետք է, ինչ որ դուք ցանկանում եք...»⁶:

Սաթենիկի ջանքերով Թավրիզի առաջադեմ հայ կանայք հարել են ՀՀԴ-ին՝ իրենց ջանքերն ու աշխատանքը դնելով ի սպաս կուսակցության քարոզած ազգային-ազատագրական գաղափարներին: Ստանալով նրանց օժանդակությունը՝ օրիորդ Սաթենիկը հիմնադրել է Թավրիզի «Հայուհյաց բարեգործական ընկերությունը», որի գործունեությունը նպատակաուղղված էր չափահաս օրիորդների կրթությանը, հայրենանվեր մայրերի դաստիարակությանը: Բացի այդ, Սաթենիկը ձեռնամուխ է եղել Թավրիզի «Աբովյան» գրադարանի շենացմանը: Դպրոցի կարիքները հոգալու և հեղափոխական գործունեությունը շարունակելու համար դրամահավաքների ժամանակ նա բեմ է բարձրացել և սիրողական մակարդակով խաղացել առանձին դերեր: Միևնույն ժամանակ, նրա զլխավոր նպատակը *Երկիր* անցնելն էր՝ ազատագրա-

⁵ Տես նույն տեղում, էջ 48–49:

⁶ Նույն տեղում:

կան պայքարին ծառայելու, իր ուժերն ի սպաս հայ ժողովրդի դնելու համար:

Շուտով՝ 1894 թ. ամռանը, Նիկոլ Դումանը, Իշխանը և Սաթենիկը անցել են Սալմաստի շրջան, որպեսզի ներկա լինեն *Երկրի* հետ կապն ապահովող հիմնական օղակի՝ թուրք-պարսկական սահմանին գտնվող Դերեկի վանքում գտնվող հայդուկային խմբի ժողովին: Այդտեղ Վանից եկել էին նաև Պետոն (Պետրոս Սերեմձյան) և Աբա-Մելիքը (Բարսեղ Գրիգորյան)⁷: Ժողովին Սաթենիկը մասնակցել է որպես լիիրավ անդամ: Սակայն Վանի վալին՝ տխրահռչակ Բահրի փաշան, Շարաֆ բեյի քրդերի հետ հարձակվել է Դերեկի վանքի վրա՝ այն ավերելու և հայդուկներին ոչնչացնելու մտադրությամբ: Չնայած թվային գերազանցությանը՝ փաշային չի հաջողվել իրագործել իր ծրագրերը. վանքում հավաքված հայդուկները և նրանց հետ Սաթենիկը Դումանի առաջնորդությամբ կատաղի դիմադրություն են ցույց տվել թշնամուն՝ նրան պատճառելով մեծ կորուստներ և ստիպելով դիմել փախուստի: Պաշարված վանքում Սաթենիկը ոչ միայն անվեհեր կերպով, թշնամու արձակած գնդակների տարափի տակ փամփուշտներ է հասցրել ու քաջալերել մարտիկներին, այլև շատ հաճախ իր դիպուկ կրակոցներով գետնին փռել արյունառուշտ ոտխիւն⁸:

Միառժամանակ անց Սաթենիկը Արամ Արամյանի և Արմենակ Ղազարյանի (Հրայր Դժոխք) հետ Կարսով Արևմտյան Հայաստան անցնելու անհաջող փորձ է ձեռնարկել: Այնուհետև նա հաստատվել է Սալմաստում, որտեղ ձևավորվում և Վան էին անցնում զինատար խմբեր: Այստեղ Սաթենիկը և բժիշկ Քրիստափոր Օհանյանն զբաղվել են *Երկիր* գնացող ու վերադարձող այդ խմբերի և նրանց ուղեկցողների գործունեության կազմակերպմամբ ու համադասմամբ:

Սաթենիկը կարևոր դեր է խաղացել նաև Խանասորի արշավանքի կազմակերպման գործում: Սակայն 1897 թ. հունիսի 25–27-ը ձեռնարկված այդ արշավանքի մասնակիցները հետապնդումից խուսափելու համար ստիպված Պարսկաստանից տեղափոխվել են տարբեր վայրեր. Սաթենիկն ու Հովսեփ Արղությանը հասել են Թիֆլիս, որտեղ էլ ամուսնացել են: Այնուհետև աքսորվել են Վոլոգդայի նահանգ: Առաջին աշխարհամարտի տարիներին տիկին Սաթենիկի խորհրդով Արղությանը մասնակցել է կամավորական շարժմանը, եղել 7-րդ կամավորական գնդի հրամանատար:

Ռուսաստանյան և Օսմանյան կայսրություններին պատած աղջամուղջում, ահասարս ոճրագործության՝ Հայոց Մեծ եղեռնի արյունասփյուռ երկունքում ծնունդ է առել Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Հովսեփ Արղությանը նշանակվել է Պարսկաստանում նրա առաջին դեսպանը: Այստեղ նա և տիկին Սաթենիկը մեծ նվիրումով աշխատել են 1919–1920 թթ.⁹: Հայաստանի խորհրդայնացումից հետո նրանք՝ որպես տարագիրներ, հանգրվանել են

⁷ Տես Է. Մինասյան, Հայ հերոսուհի կանայք: Ե., 2016, էջ 90:

⁸ Տես Ա. Գիւլխանդանեան, Նշ. աշխ., էջ 53–54:

⁹ Տես նույն տեղում, էջ 58–60:

Փարիզում, որտեղ, կրելով աղքատության դառը հետևանքները, կնքել են իրենց մահկանացուն:

Խանասորի արշավանքի հերոսուհի է նաև հայոց ազատամարտի նվիրյալ հայուհիներից մեկը՝ *Մարիամ Մակարյանը (Մարո)*: Նա ծնվել է 1872 թ. Դերբենտում¹⁰: Վաղ հասակում զրկվելով ծնողներից՝ մեծացել է եղբայրների



Մարիամ Մակարյան

խնամքի տակ: Դեռ աշակերտական տարիներին նա ակտիվորեն ներգրավվել է հայրենասիրական խմբակների գործունեության մեջ՝ իր խանդավառությամբ ու նվիրումով վարակելով ընկերուհիներին: Նրանք բոլորն էլ հանդիսավորությամբ ուխտել են ծառայել իրենց տառապյալ հայրենիքի ազատագրման վեհ գործին: Մարոն օժտված էր անկոտրում կամքով, կենսուրախ բնավորությամբ, խստապահանջ էր, հավասարակշռված: Նրա իղձը *Երկրի* ազատագրումն էր թուրք և քուրդ հարստահարիչների լծից: Այդ նպատակով 1894 թ. նա, որպես ուսուցչուհի, տեղափոխվելով Թավրիզ, «Հոգածու քրոջ պէս կը գուրգուրեր *Էրզրի* մեկնող կամ վե-

րադարձող հայրուկներուն վրայ»¹¹:

Մարոն *Երկիր* գնացող խմբերի համար հավաքում էր իրեր, այդ թվում՝ զենք ու զինամթերք, իր բոցաշունչ խոսքով նրանց մղում սխրանքի և անձնագոհության: Նրա բնակարանը վերածվել է զինապահեստի և հետապնդումից խուսափող գաղափարակիցների թաքստարանի¹²: Նա եղել է «Հայուհյաց բարեգործական ընկերության» կարի արհեստանոցի ազգային ոգին. Մարոն ոչ միայն իր գործընկերուհիների առջև բացել է նվիրական զբաղմունքի՝ կարի և ասեղնագործի ազգային ավանդույթների բազմադարյան գաղտնիքները, այլև հայրենասիրական ստեղծագործությունների ընթերցումներով նրանց մեջ սերմանել ազգային-ազատագրական պայքարի վսեմ գաղափարները:

Ջենքի փոխադրում կազմակերպելիս Մարոն ծանոթացել է զինագործական արհեստանոցի հիմնադիր, հմուտ զինագործ Արիստակես Ջորյանի (Կարո, ՀՀԴ հիմնադիրներից մեկի՝ Ստեփան Ջորյանի հետ (Ռոստոմ) կրտսեր եղբայրը): Գաղափարակից ընկերները տոգորվել են փոխադարձ ջերմ սիրով:

1896 թվականի աշնանը Թիֆլիսում կայացած ՀՀԴ շրջանային ժողովում որոշվել է կազմակերպել Խանասորի արշավանքը: Դրան նախորդել էր ներկուսակցական բանավեճը: Հ. Արղությանի, Վարդանի և Վազգենի առաջնորդությամբ մի խումբ հեղինակավոր գործիչներ համարում էին, որ մարտական ուժն ու զենքը պետք է ուղարկել Վան և, հաշվի առնելով նյութական

¹⁰ Տես *Ս. Զէյթլեան*, Նշ. աշխ., էջ 35:

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես նույն տեղում, էջ 37:

միջոցների սղությունը, հրաժարվել պատժիչ գործողություն նախաձեռնելու ծրագրից: Հատկապես, որ նոր էին մի խումբ երիտասարդ դաշնակցականներ Պոլսում ձեռնարկել ցուցադրական գործողություն՝ գրավել Օտոմանյան բանկը¹³: Կարոն նույնպես դեմ էր այդ արշավանքին՝ այն համարելով ուժերի ապարդյուն վատնում: Նրա այդ դիրքորոշումը մտատանջել է Մարոյին, որը համակված էր վրեժխնդրության ձգտմամբ: Նա ուներ այն մտավախությունը, որ իր սիրեցյալի կարծիքը հետևանք է իրենց սիրո, որը կարող է խանգարել անմնացորդ նվիրումով հայրենիքին ծառայելուն: Մինչդեռ Կարոյի բացասական վերաբերմունքի իրական պատճառը ոչ թե զգացմունքներն էին, այլ հակառակը՝ սառը դատողությունը: Այդուհանդերձ ՀՀԴ շրջանային (ռայոնական) ժողովը վճռել էր ձեռնարկել այդ պատժիչ արշավանքը, և Մարոն, մեկնելով Սալմաստ, ակտիվորեն մասնակցել է արշավանքի նախապատրաստմանը: Նրա ձեռքով պատրաստվել է մի ասեղնագործ դրոշ, որի առջև պետք է երդվեին արշավանքի մասնակիցները¹⁴: Նրա երազանքն էր տեսնել, թե ինչպես է գեները ուսին, շարք-շարք կապած փամփշտաժապավենները Կարոն ծունր դնում իր ձեռքով պատրաստված դրոշի առջև: Նա քաջ գիտակցել է, թե ինչ ներքին երկպառակություն է տիրում Կարոյի հոգում՝ հայրենիքին ծառայության և ամենակալ սիրո միջև: Եվ համարելով, որ իր պատճառով Կարոն լիարժեք կերպով չի նվիրվում ազատագրական պայքարին, որ անհուն սիրո զգացմունքով տոգորված՝ Հայաստանի ազատագրումը չի գերադասում իրենց անձնական երջանկությունից, Մարիամ Մակարյանը 1896 թվականի դեկտեմբերի 2-ին ինքնասպանություն է գործել:

Հրաժեշտի նամակում նա դիմել է Արիստակես Ջորյանին. «Լիցո՛ւք թունաւոր վրէժխնդրոյթամբ Բաբկէն Սինիի նման: Կատարի՛ր վերջին կտակս, դրանով միայն կը հանգըստանան ոսկորներս գերեզմանի մէջ»:

Եվ հիրավի Ա. Ջորյանը, ներշնչված նամակի բովանդակությամբ, Խանասորի արշավանքի ժամանակ կռվել է մինչև վերջին փամփուշտը, նահանջի ժամանակ չի հեռացել մարտի դաշտից և ընկել է հերոսի մահով:

Այսպիսով՝ անչափ շատ են հանուն հայրենիքի անձնական կյանքն ու ապագա երջանկությունը զոհաբերելու, սխրանքների, անձնագոհության օրինակները, որոնք մեզ ավանդել են հայուհիները: Հայ կնոջ սխրագործությունները շարունակվել են նաև թուրք հրոսակների դեմ 1915–1923 թթ. մղված ինքնապաշտպանական մարտերում, Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում ու թիկունքում, Արցախյան ազատագրական շարժման ու պատերազմի տարիներին: Հայ կինը հերոսաբար մաքառում է՝ իր հողը զավթել տենչացող թշնամուն վնդելու, իր հայրենի տունն անառիկ ու շեն պահելու համար:

¹³ Այդ մասին ավելի հանգամանորեն տես «Հայոց պատմություն»: Խմբ. Հ. Սիմոնյան: Ե. 2012, էջ 417–421:

¹⁴ Տես Ս. Զէյթլեան, Նշ. աշխ., էջ 37:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

**ГЕРОИНИ-АРМЯНКИ – УЧАСТНИЦЫ
ХАНАСОРСКОГО ПОХОДА**

*Э. Г. МИНАСЯН, доктор исторических наук, профессор, декан факультета истории
ЕГУ, член научно-консультационного совета ВНЖ «Айкакан банак»*

РЕЗЮМЕ

Система «Нация–армия» предполагает консолидацию потенциала нации вокруг обороны. В связи с этим возникает необходимость переосмысления роли женщины не только как хранительницы очага и воспитательницы патриотизма, но и непосредственной активной участницы боевых действий.

Одним из таких событий в истории армянского народа является участие армянок в Ханасорском походе 1897 года. Этот поход был предпринят в целях наказания курдского племени мазриков, вероломно перебивших отступавших по договоренности с турками защитников Вана и примкнувших к ним многочисленных безоружных армян. Маргарита Мелик-Бегларян-Оганян, Сатеник Матинян-Аргутян, Мариам Макарян стали добровольными участницами этого похода, дав еще один яркий пример беззаветного служения армянок идеям национально-освободительной борьбы и самозащиты мирного армянского населения.

MILITARY HISTORY

**ARMENIAN HEROINES – PARTICIPANTS
OF THE KHANASOR CAMPAIGN**

*E. G. MINASYAN, Doctor of History, Professor, Dean, Department of History, YSU;
Member, Academic-Advisory Council, “Haikakan Banak” Defense-Academic Journal*

SUMMARY

The “Nation–Army” system anticipates the national capacity consolidation around the defense. Regarding this, a necessity arises to reconsider the woman’s role not only as of the keeper of the home and hearth and nourisher of patriotism, but also of an active and resolute direct participant in combat operations.

An illustration of one of such events in the history of the Armenian people is the Armenian women’s participation in the Khanasor Campaign of 1897. That very campaign was launched with the purpose of punishing the Kurdish tribe of Mazriks, who treacherously had slaughtered the defenders of Van and numerous unarmed Armenians who had joined them, when those were retreating due to their agreement with the Turks. Margarita Melik-Beglaryan-Ohanyan, Satenik Matinyan-Arghutyun, Mariam Makaryan volunteered the campaign, giving one more outstanding example of Armenian women’s selfless service to the ideas of national liberation struggle and self-defense of the peaceful Armenian population.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Դ. Ս. ԶԻՆԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայրր,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայրր*

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ալեհավաք – принимающая антенна – receiving antenna	закция жертвы – depersonalization of victim
ալեցիր – передающая антенна – transmitting antenna	գորավարժարան – полигон (учебный) – training ground
ալիքատար – волновод – waveguide	գուգակցում – сочетание – confluence
ախտադարձություն – рецидив – recurrence	թաքստարան – 1. тайник, 2. укрытие – 1. hiding place, lurking place, 2. hiding place, cashe
այլընտրանքային ծախքեր – альтернативные издержки – opportunity cost	թերթալայնություն – гипохлоридия – hypochloridia
անտառատնկարկ – лесонасаждение – forest plantation	լիկվիդայնություն – ликвидность – liquidity
աշխատուժահենք – трудоемкий – labor-intensive	խնամարկյալ – подопечный, иждивенец – dependent, immediate family
ապառազմականացում – 1. демилитаризация, 2. демобилизация – 1. demilitarization, 2. demobilization	խորհրդարկում – консультация – consulting, consultation
արդարացի պատերազմ – справедливая война – just war	խուսափողական ռազմավարություն – избегательная стратегия – avoidance strategy
արժեչղթ – цепочка создания стоимости – value chain	կապալառու – подрядчик – contractor
արժույթի լողացող փոխարժեք – плавающий курс валюты – floating exchange rate	կապիտալահենք – капиталоемкий – capital-intensive
արտարժուրային պահուստ – валютный резерв – foreign exchange reserve	կարմիր մաշկագրություն – красный дермографизм – red dermographism
բազմազանեցում – диверсификация – diversification	կուտակային – кумулятивный – cumulative
բաժնաչափ – доза – dose	հազվաարտություն – брадикардия – bradycardia
գագաթնակետ – пик – peak	հակազդականություն – реактивность – responsiveness
դատաձգաբանական փորձաքննություն – судебно-баллистическая экспертиза – forensic ballistic examination, forensic ballistic expertise	հակամիջամտական – антиинтервенционист – noninterventionalist
զարկանաձգանային մեխանիզմ – ударно-спусковой механизм – trigger mechanism	հաղորդակ – привод – drive
զոհի ապանձնավորում – деперсонизация	համադրական գիտակարգ – синтетическая научная дисциплина – synthetic academic discipline
	համակարգաստեղծ – системообразующий – backbone, system-forming

համապիտանի ընթացակարգ – универсальная процедура – universal procedure
 հանցակազմ – состав преступления – corpus delicti, composition of crimes
 հանքահումքային արտադրանք – рудно-сырьевая продукция – crude ore production
 հաստատութենական ներդրում – институциональная инвестиция – institutional investment
 հավանականության որոշարկում – детерминирование вероятности – identification of probability
 հարստահարիչ – угнетатель, эксплуататор – oppressor
 հիպոքրիդիա – տես թերթթվայնություն
 հրդեհաշիջում – пожаротушение – fire fighting, extinguishing
 մակածված սխալ – спровоцированная ошибка – invited error
 մարդկայնություն – человечность – humanity
 մարտապաշար – боезапас – basic load, reserve ammunition
 մենաշնորհացում – монополизация – monopolization
 նախապաշարմունք – 1. предрассудок, 2. предубеждение – prejudice
 ներկուսակցական բանավեճ – межпартийный диспут – intra-party dispute
 նմանարկում – имитация – imitation

շեղումակայուն ստոխաստիկ ծրագրավորում – робастное стохастическое программирование – robust stochastic programming
 ոչ մակածված սխալ – неспровоцированная ошибка – noninvited error
 փահունակ – 1. магазин (патронов), 2. патронная обойма – 1. magazine, 2. clip
 սարքավորանք – оборудование – equipment, hardware, installation
 սարքավորում – оборудование – equipping, equipment
 սարքինություն – исправность – serviceability, good condition
 սինապտիկ փոխանցման կենսընթաց – процесс синаптической передачи – synaptic transmission process
 վճարային հաշվեկշիռ – платежный баланс – balance of payments
 տարանցման հանգույց – транзитный узел – transit hub
 տարատեսակում – диверсификация – diversification
 տրամագիր – диаграмма – diagram
 տույժ – штраф – penalty
 փողաբերան – дуло – muzzle
 փուլաշրջան – цикл – cycle
 օրինատիպային մոդել – эталонная модель – reference model
 ֆիզիկական մաշվածություն – физический износ – physical deterioration

ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

альтернативные издержки – այլընտրանքային ծախսեր
 антиинтервенционист – հակամիջամտական
 боезапас – մարտապաշար
 брадикардия – հազվասրտություն
 валютный резерв – արտարժուրթային փահուստ
 волновод – ակիքատար
 гипохлоридия – թերթթվայնություն, հիպոքրիդիա
 демилитаризация – ապառազմակա-

նացում
 демобилизация – ապառազմականացում
 деперсонизация жертвы – զոհի ապանձնավորում
 детерминирование вероятности – հսկանականության որոշարկում
 диаграмма – տրամագիր
 диверсификация – 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
 доза – բաժնաչափ
 дуло – փողաբերան
 иждивенец – см. *подопечный*

<p>избегательная стратегия – խուսափողական ռազմավարություն имитация – նմանարկում институциональная инвестиция – հաստատութենական ներդրում исправность – սարքինություն капиталоемкий – կապիտալահենք консультация – խորհրդարկում красный дермографизм – կարմիր մաշկազրություն кумулятивный – կուտակային лесонасаждение – անտառաստնկարկ ликвидность – լիկվիդայնություն магазин (патронов) – պահունակ межпартийный диспут – ներկուսակցական բանավեճ неспровоцированная ошибка – ոչ մակածված սխալ монополизация – մենաշնորհացում оборудование – 1. սարքավորանք, 2. սարքավորում патронная обойма – պահունակ передающая антенна – ավեցիիր пик – գագաթնակետ плавающий курс валюты – արժույթի լողացող փոխարժեք платежный баланс – վճարային հաշվեկշիռ подопечный – խնամարկյալ подрядчик – կապալառու пожаротушение – հրդեհաշիջում полигон (учебный) – զորավարժարան предрабсудок – նախապաշարմունք предубеждение – նախապաշարմունք привод – հաղորդակ принимающая антенна – ավեհավար процесс синаптической передачи – սինապտիկ փոխանցման կենսընթաց рабочее – աշխատութահենք</p>	<p>реактивность – հակազդականություն рецидив – արտադարձություն робастное стохастическое программирование – շեղումակայուն ստոխաստիկ ծրագրավորում рудно-сырьевая продукция – հանքահումքային արտադրանք синтетическая научная дисциплина – համադրական գիտակարգ системообразующий – համակարգաստեղծ состав преступления – հանցակազմ сочетание – զուգակցում справедливая война – արդարացի պատերազմ спровоцированная ошибка – մակածված սխալ судебно-баллистическая экспертиза – դատածգաբանական փորձաքննություն тайник – թաքստարան транзитный узел – տարանցման հանգույց угнетатель – հարստահարիչ ударно-спусковой механизм – զարկանաձգանային մեխանիզմ укрытие – թաքստարան универсальная процедура – համապիտանի ընթացակարգ физический износ – ֆիզիկական մաշվածություն цепочка создания стоимости – արժեքի շղթա цикл – փուլաշրջան человечность – մարդկայնություն штраф – տույժ эксплуататор – <i>см. угнетатель</i> эталонная модель – օրինատիպային մոդել</p>
---	--

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

<p>avoidance strategy – խուսափողական ռազմավարություն backbone – համակարգաստեղծ balance of payments – վճարային հաշվեկշիռ</p>	<p>basic load – մարտապաշար bradycardia – հազվասրտություն capital-intensive – կապիտալահենք cashe – <i>see hiding place</i> clip – պահունակ</p>
---	---

- composition of crimes – see *corpus delicti*
- confluence – զուգակցում
- consultation – see *consulting*
- consulting – խորհրդարկում
- contractor – կապալառու
- corpus delicti – հանցակազմ
- crude ore production – հանքահումքային արտադրանք
- cumulative – կուտակային
- cycle – փուլաշրջան
- demilitarization – ապառազմականացում
- demobilization – ապառազմականացում
- dependent – խնամարկյալ
- depersonalization of the victim – զոհի ապանձնավորում
- diagram – տրամագիր
- diversification – 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
- dose – բաժնաչափ
- drive – հաղորդակ
- equipping – սարքավորում
- equipment – 1. սարքավորանք, 2. see *equipping*
- extinguishing – see *fire fighting*
- fire fighting – հրդեհաշիջում
- floating exchange rate – արժույթի լողացող փոխարժեք
- foreign exchange reserve – արտարժույթային պահուստ
- forensic ballistic examination – դատաձգաբանական փորձաքննություն
- forensic ballistic expertise – see *forensic ballistic examination*
- forest plantation – անտառատնկարկ
- good condition – see *serviceability*
- hardware – see *equipment 1*
- hiding place – թաքստարան
- humanity – մարդկայնություն
- hypochloridia – թերթթվայնություն, հիպոքլորիդիա
- identification of probability – հավանականության որոշարկում
- imitation – նմանարկում
- immediate family – see *dependent*
- installation – see *equipment 1*
- institutional investment – հաստատութենական ներդրում
- intra-party dispute – ներկուսակցական բանավեճ
- invited error – մակածված սխալ
- just war – արդարացի պատերազմ
- labor-intensive – աշխատուժահենք
- liquidity – լիկվիդայնություն
- lurking place – see *hiding place*
- magazine – պահունակ
- monopolization – մենաշնորհացում
- muzzle – փողաբերան
- noninterventionalist – հակամիջամտական
- noninvited error – ոչ մակածված սխալ
- opportunity cost – այլընտրանքային ծախսեր
- oppressor – հարստահարիչ
- peak – զագաթնակետ
- penalty – տույժ
- physical deterioration – ֆիզիկական մաշվածություն
- prejudice – նախապաշարմունք
- receiving antenna – ալեհավաք
- recurrence – ախտադարձություն
- red dermographism – կարմիր մաշկազրություն
- reference model – օրինատիպային մոդել
- reserve ammunition – see *basic load*
- responsiveness – հակազդականություն
- robust stochastic programming – շեղումակայուն ստոխաստիկ ծրագրավորում
- serviceability – սարքինություն
- synaptic transmission process – սինապտիկ փոխանցման կենսընթաց
- synthetic academic discipline – համադրական գիտակարգ
- system-forming – see *backbone*
- training ground – զորավարժարան
- transit hub – տարանցման հանգույց
- transmitting antenna – ալեցիր
- trigger mechanism – զարկանաձգանային մեխանիզմ
- universal procedure – համապիտանի ընթացակարգ
- value chain – արժեշղթա
- waveguide – ալիքատար

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20 000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստության և զաղոսնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, սպազորության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more than 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՆԱԿ

ՀՀ ՋՈՒՌՆԱԿԱՆ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԸՀՈՎՈՒՄ.
ՉԱՐԴԱՐԱՅՎԱԾ ՍԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անյոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասարյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Զ. Վ. Փիրոյան*

Չևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի,
Լ. Հ. Պապիկյանի, Զ. Վ. Փիրոյանի*

Անգլերեն տեքստերի խմբագրումը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի,
Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի,*

ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության
և ՀՀ ՋՈՒ-ի ԳՇ Չորքերի ծառայության և զինվորական ծառայության
անվտանգության ապահովման վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլենցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>

Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2017 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում



ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը
մարտական հենակետերից մեկում.

2017 թ. հուլիս



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ